





ԶՄԻՍԾԻՆ

1981
Ա

ՀԱՅԿ 740



ԼԸ
ՏԱՐԻ



ԷԶՄԻԱԾԻՆ




ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

ՅԻՆԻՄԱՆ



1981




ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԵՆԱՐԱՆՈՒՄ



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈՉ ՓՐԿՉԻ ՀՐԱԾԱՓԱՌ ՍՈՒՐԲ
ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ

(1981 թ. հունվարի 6)

«Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհեմ քաղաքի»:

Միրելի հավատացյալ զավակներ Մեր,

Այսօր, մեր հոգիները վերստին լուսավորվում են ու ջերմանում Քրիստոսի Սուրբ Ծննդյան ավետիսով: Այս լույսն ու ջերմությունը չեն զալիս երկրներից ճառագայթող արևից, այլ երկների բարձունքներից իջած, մեր հոգիներում ճառագայթող «Արդարության Արեգակից», այն արեգակից, որ երկու հազար տարիներ առաջ ծագեց Բեթղեհեմի մութից, երբ Աստուծո խոսքը մարմին առավ և բնակվեց մեր մեջ (Հովհ. Ա 14):

Բանն Աստված, Որդին Աստուծո Հիսուս, աշխարհ իջավ բերելու համար մեծ ավետիսը՝ թե ինք զալիս է հիմը դնելու խաղաղության թագավորության, ուր մարդիկ միայն բարիք պիտի կամենան մեկը մյուսին, ու նրանք իրենց սրերից և ճիգակներից արորներ և մանգաղներ պիտի ձուլեն, և այլևս ոչ մի ազգ ուրիշ ազգի վրա պիտի չհարձակվի պատերազմելու համար:

Եվ իրոք Հիսուս իր կյանքով, իր քարոզությամբ, իր հրաշք արարքներով նախագծեց մարդկության առաջ պատկերը Աստուծո արքայության, պատկերը՝ խաղաղության, արդարության և մարդասիրության մի աշխարհի, և որպես գերագույն առհավատչյա, իր կյանքը զոհեց խաչի վրա, մարդկանց մեղքերի համար, իր սուրբ արյան շաղախով ամրացնելով հիմքերը իր թագավորության:

Խաղաղության և արդարության ավետաբերներ են եղել նաև այլ կրօնների հիմնադիրներ, նաև շատ իմաստուններ ու փիլիսոփաներ, Սոկրատեսից մինչև Էմմանուել Քանդ և մինչև մեր օրերը:

Օրինակ, հաճելի է Մեզ հիշել այնցյալ դարի մեծանուն փիլիսոփաներից Հերպերտ Սպենսերի հետևյալ մարգարեությունը.

«Ընկերային ալյասիրական բարոյականությունը իր կատարելության պիտի հասնի աշխարհի վրա այն ժամանակ, երբ մարդիկ իրենց ամենօրյա պահանջը նկատեն՝ մտահոգությունը իրենց մմանների երջանկության»:

Մեծ բանաստեղծներ, արվեստի ու գիտության մարդիկ, տեսիլք ունեցող հեղափոխական գործիչներ, նույնպես գովերգել են ու երազել՝ խաղաղ ու արդար հարաբերությունների ստեղծում մարդկանց և ժողովուրդների միջև:

Ինչքան բարոյական վեհություն կա օրինակ՝ անցյալ դարի ֆրանսիացի բանաստեղծ Լամարտինի հետևյալ խոսքերի մեջ.

«Տկարների ազատությունը, ուժեղների փառքն է հանդիսանում»:

Եվ ինչքան հոգեշարժ է մեր մահատակ բանաստեղծ Դանիել Վարուժանի մարդասիրական տեսիլքը.

«Արևելյան կողմն աշխարհի խաղաղություն թող ըլլա...

Ոչ արյուններ. քրտինք հոսին լայն երակին մեջ ակոսին.

Ու երբ հնչե կոչնական ամեն գյուղակի, օրհներգություն թող ըլլա»:

Այս բոլորով հանդերձ սակայն, Մենք դառնությամբ պետք է խոստովանենք թե մեր օրերում էլ մարդկանց ընկերային և միջազգային կյանքում դրսևորվում են ու գործում՝ խաղաղ ու արդար հարաբերությունները արգելակող, խաթարող ուժեր, եսակենտրոն մղումներ, ինչպիսիք են հատկապես՝ տիրապետելու կիրքը և հարստություն դիզելու տենչը: Ինքը Հիսուս և Իր մեծ առաքյալը Պողոս, խորաթափանց կերպով մատնանիշ են արել այդ երկու թունավոր արմատները և պատգամել են բոլոր ժամանակների մարդկանց.

«Ով կամենա ձեր մեջ առաջինը լինել, մա թող բոլորին լինի սպասավոր» (Մարկոս Ժ 44) և «արծաթսիրությունն է մայրը ամենայն չարյաց» (Ու Տիմ. 2 10):

Քրիստոսի հոգին կրող սուրբ մարդիկ, բազում անգամներ նույն այս պատգամներն են քարոզել իրենց ժամանակակիցներին:

Մեր Մայր Եկեղեցին, Հայաստանյայց Եկեղեցին նույնպես միշտ երազել է ու աղոթել, որ երկրի վրա կյանքի կոչվեն այս մարդասիրական պատգամները, որ վերջ գտնեն բռնություններն ու հարստահարությունները օտար տիրակալների, որոնց ճիրանների մեջ տառապում և արյունաքամ էր լինում հայ ժողովուրդը, դարեր ու դարեր շարունակ:

Մեր օրերին, Երկրորդ համաշխարհային պատերազմի ահավոր փորձությունից հետո, թեև ժողովուրդներն ու պետությունները գերագույն ճիգեր են ի գործ դնում, որպեսզի ալյևս չկրկնվեն մեծ ողբերգություններ, սակայն տակավին անորոշ է ապագան և առկա են աշխարհի խաղաղության սպառնացող խմորումները:

Սիրելի հավատացյալներ, այս սուրբ պահին, երբ Մենք ավետում ենք հրաշալի Ծնունդը և Հայտնությունը Խաղաղության իշխան Հիսուսի Քրիստոսի, միացնենք մեր մտածումներն ու մեր երազանքները և սրտեռանդ աղոթենք, որ աշխարհը համայն և ազգությունները բոլոր, հեռու պահվեն պատերազմների արհավիրքներից ու տառապանքներից, որ պետությանց պատասխանատու առաջնորդները ամեն տեսակ կացությանց առաջ կանգնած՝ մտածեն խաղաղության պահպանման մասին, արդարությամբ լուծելու համար բոլոր միջազգային հարցերը:

Հիշենք այստեղ Հակովբոս առաքյալի պատգամը որ այնքան այժմեական է հնչում, թե՛

«Արդարության պտուղը խաղաղությամբ է սերմանվում նրանց համար, ովքեր խաղաղություն են անում» (Հակ. առաք. Գ 18):

Խաղաղության պատգամները և կոչերը, մասնավոր ջերմությամբ ընկալվում են մեր Մայր Եկեղեցու և ժողովրդի կողմից, որոնք ահավոր չափերով տառապել ու զոհվել են պատերազմների ընթացքում, մանավանդ առաջին համաշխարհային պատերազմի 1915—16 տարիներին, երբ Օսմանյան ցեղասպանները բնաջինջ արեցին Արևմտահայաստանի շուրջ երկու միլիոն խաղաղ ու անզեն հայ ազգաբնակչությունը:

Հայ Եկեղեցին ու հայ ժողովուրդը երբեք չեն ցանկանա, որ մեզանք ողբերգություններ կրկնվեն հետ այսու որևէ տեղ աշխարհի վրա, որևէ ժողովրդի կյանքում:


Թող ազգությունների խաղաղ գոյակցությունը և համերաշխ գործակցությունը անխախտ կանոնը դառնան միջազգային օրենքի և կյանքի:

Այսօր, Մենք մխիթարված ենք, որ եղբայր ժողովուրդների կողքին, մեր ժողովուրդը ևս իր խաղաղ, ապահով ու հառաջադեմ կյանքը շարունակում է ապրել մույն արևի ու դրոշի ներքո, ինչպես նա ապրեց ու աճեց վերջին վաթսու տարիների ընթացքում, իբրև մեռելներից հարություն առած, վերածնված ժողովուրդ, որ կերտում է իր նոր ապագան, իր հարազատ Մայր Հայրենիքում:

Ամեն բանից վեր է՝ մեզ՝ հայերիս համար, խաղաղությունը և անվտանգությունը մեր վերածնված երկրի: Ով այս աշխարհի վրա մի հայրենիք ունի և սիրում է նրան, նա կհասկանա մեզ՝ հայաստանցիներին:

Ավելի՛ լույս, ավելի՛ սեր և ավելի՛ խաղաղություն համայն մարդկության: Ավելի՛ լույս, ավելի՛ սեր և ավելի՛ խաղաղություն մեր ժողովրդին որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի:

«Եւ շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եղիցին ընդ ձեզ ընդ ամենեւեանդ».





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԱՆ
Տ. ԱՐՄԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԵՐԲԵՐՅԱՆԻՆ ԱՐԱՐԱՏՅԱՆ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԱՐՄԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԷՐՊԷՐԵԱՆԻՆ,
ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՌՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ
ՈՂՋՈՐՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՄՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Երևան

Աստուծոյ անբաւ ողորմութեամբ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, մայրը և դաստիարակը մեր ժողովրդի, իր պատմական զարգացման ճանապարհի վրայ շարունակում է իր նուիրական առաքելութիւնը ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի նաև մեր օրերին արձանագրելով հոգեշէն իրագործումներ:

Այս պահին Մեր հայեացքը ուղղում ենք ի մասնատրի դէպի մեր մայր երկրի Արարատեան Հայրապետական թեմը, որը այսօրայ իրավիճակում կարիքը ունի ներքին վերակազմակերպման, ու բարեկարգման, հոգևոր, եկեղեցական և վարչական իմաստով, հաւատալից, իմաստուն և կորովի ղեկավարութեամբ:

Իբրև Հայրապետ Հայոց և առաջնորդ Արարատեան վիճակի, Մեր առաջ խնդիր ենք դրել նոր էջ բացել հայրապետական Մեր թեմում, Ձեզ կոչելով առաջնորդական փոխանորդի պատուաբեր ու պատասխանատու պաշտօնին սկսեալ 1 փետրուար 1981 թուից:

Դուք, սիրելի սրբազան, այսօր Ձեր ուժերի լիութեան մէջ, մօտ քսան տարիներում ձեռք բերած Ձեր փորձառութեամբ, Ձեր իմացական ու հոգևոր

արթնութեամբ և աշխատանքի եռանդով, վստահ ենք թէ պարտքի ու կոշտի խոր գիտակցութեամբ պիտի բարձրանաք Արարատեան թեմի աթոռին ու արժանատրապէս պիտի սկզբնաւորէք Ձեզ յանձնուած վիճակի եկեղեցեաց բարեկարգումը և հոգևոր զարթօնքը հետզհետէ առաւել արդիւնաւետութեամբ, պարբերաբար Մեզ տեղեակ պահելով այդ մասին:

Այսու Մեր կոնդակով կը հրահրենք Արարատեան թեմի հոգևոր դասը, եկեղեցիների վարչական մարմինները և պաշտօնէութիւնը որ նեցուկ և զօրավիզ հանդիսանան Ձեզ, բարեխղճութեամբ, կարգապահութեամբ ու մաքուր ձեռքերով, միշտ հաւատարմօրէն, յարգելով եկեղեցական կարգն ու կանոնը և օրինականութիւնը:

Այս բարի սպասումներով մաղթում ենք Ձեզ Աստուծոյ օգնականութիւնը և Սուրբ Հոգու շնորհները ի խնդիր Ձեր հոգեշէն առաքելութեան լիակատար յաջողութեան:

Ձերդ Սրբազնութեան՝ Մեր հայրական սէրը, Մեր գնահատանքը, Մեր քաջալերանքը, Մեր օրհնութիւնը:

Արդ «հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ծրացարուք, զօրացարուք, ամենայն ինչ ձեր սիրով լինիցի» (Ա. Կորնթ. ԺԶ 14—15). ամէն:

Կապույտ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 80 յունուարի
1981 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆՆ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
ՀՄՐ. 1049





ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿԶԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ԲՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻԶԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂԶՈՒՅՆԻ
ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոռմեական կաթողիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ (Հոռմ),
Կոստանդնուպոլսի հունաց Տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԵՄԵՏՐԻՈՍԻՆ (Ստամբուլ),
Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԻՄԵՆԻՆ (Մոսկվա),
Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի հունաց ուղղափառ Եկեղեցու
Պատրիարք, Նորին Սրբություն ՆԻԿՈՂԱՅՈՍ Զ-ԻՆ (Ալեքսանդրիա),
Երուսաղեմի հունաց ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Ա-ԻՆ Երուսաղեմ),
Ղպտի ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԸՆՈՒԿԱ Ե-ԻՆ (Կաֆիրե),
Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲԲԱ ԹԵՔԼԵ ՀԱՅՄԱՆՈԹԻՆ (Ադիս Աբեբա),
Հնդկաստանի և Արևելքի մալաբար Եկեղեցու կաթողիկոս, Նորին
Սրբություն ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՆՈՍ Ա-ԻՆ (Բոթալամ),
Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն
ԻԼԻԱ Բ-ԻՆ (Թբիլիսի),
Ռումին օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԺՈՒՍՏԻՆԻՆ (Բուխարեստ),
Բուլղար օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ՄԱՔՍԻՄԻՆ (Սոֆիա),

Անտիոքի և համայն Արևելքի հույն կաթոլիկ եկեղեցու Պատրիարք, Նորին
 Սրբություն **ՄԱՔՆԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄԻՆ** (Դամասկոս),
 Անտիոքի ասորի կաթոլիկ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵՔ ԲԻՆ (Բեյրութ),
 Զենթրբերիի Արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և
 միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն **ՌՈԲԵՐՏ ՌԸՆՍԻՆ** (Լոնդոն),
 Աթենքի և համայն Հելլադայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
ՍԵՐԱՖԻՄԻՆ (Աթենք),
 Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԳԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),
 Վարշավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
ՎԱՍԻԼԻՆ (Վարշավա),
 Պրագայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին
 Գերաշնորհություն **ԴՈՐՈՖԵՅԻՆ** (Պրագա),
 Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ԽՐԻՍՏՈՍՏՈՄՈՍԻՆ (Նիկոզիա),
 Անտիոքի մարոնիտ Պատրիարք, Նորին Ամենապատվություն
ԱՆՏՈՒԱՆ ՊԻԵՐ ԽՈՐԱԽԾԻՆ (Բեյրութ),
 Մարսելի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ
ՌՈԺԵ ԷՉԵԳԱՐԱՅԻՆ (Մարսել),
 Վիեննայի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ
ՅՐԱՆՑ ԲՅՈՆԻԳԻՆ (Վիեննա),
 Քրիստոնեական Միության Քարտուղարության նախագահ, Նորին
 Ամենապատվություն կարդինալ
Ժ. Գ. Մ. ՎԻԼԼԵԲՐԱՆԴՅԻՆ (Վատիկան),
 Փարիզի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ
ՅՐԱՆՍՈՒԱ ՄԱՐՏԻՆ (Փարիզ),
 Լիոնի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՌԸՆԱՐԻՆ (Լիոն),
 Լատվիական ՍՍՀ ավետարանական-լուսերական եկեղեցու Արքեպիսկոպոս,
 Նորին Գերազանցություն **ՅԱՆԻՍ ՄԱՏՈՒԼԻՍԻՆ** (Ռիգա),
 Էստոնական ՍՍՀ ավետարանական-լուսերական եկեղեցու Արքեպիսկոպոս,
 Նորին Գերազանցություն **ԷԴԳԱՐ ԽԱՐԷԻՆ** (Տալլին),
 Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ **ՄԱՌԻՐԻԼԻՈ ՍԱԿԿԻՆ**
 (Երուսաղեմ),
 Խաղաղության Համաքրիստոնեական Կոնֆերանսի գլխավոր քարտուղար,
 Նորին Սրբազնություն **ՔԱՐՈԼԻ ՏՈԹԻՆ** (Պրագա),
 Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ընդհանուր քարտուղար
 դոկտ. **ՖԻԼԻՊ ՓՈԹԸՐԻՆ** (Ժնև),
 Պապական նվիրակ և Հռոմի Սուրբ Աթոռի մշտական ներկայացուցիչ
 Միացյալ Ազգերի Կազմակերպության մոտ, Նորին Գերաշնորհություն
ԺԱՆ ՌՅՈՒՊ արքեպիսկոպոսին (Ժնև),
 Մխիթարյան ուխտի արքահայր, Գերապայծառ Հայր
ՊՈՂՈՍ վարդապետ **ԱՆԱՆՅԱՆԻՆ** (Վենետիկ),
 Մխիթարյան ուխտի արքահայր, Գերապայծառ Հայր
ԳՐԻԳՈՐԻՍ վարդապետ **ՄԱՆՅԱՆԻՆ** (Վիեննա),

«Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Այսօր նոր հույս ու լույս տեսիլքներ են ծաղկում մեր սրտերում, ի ծագել Բեթղեհեմի աստղի, որ ամեն տարի երկնքի բարձունքներից երկիր է շողարձակում ավետիսը Ծննդյան՝ Խաղաղության Իշխանի, որ մարդկային կյանքի հորիզոնը լուսավորում է արդարության արեգակով:

Այսօր, խաղաղության ու արդարության ծաղալի մեր հոգիները, ցնծությանը ողջունում են մեծ ավետիսը հրաշալի Ծննդյան մեր Փրկչի Հիսուսի Քրիստոսի: Վերստին լուսավորվում են մեր հոգիները, վերստին լցվում են մեր սրտերը վառ հույսերով դեպի ապագան, վերստին զարթնում են մեր գիտակցությանց մեջ՝ մեր նմաններին արդարն ու բարին կամենալու ու գործելու մղումները կյանքի ուղիների վրա:

Այս խոհերով ու սպասումներով, Մենք ևս Փրկչի Իջման Սուրբ Սեղանից բերում ենք Ձեզ լույս ավետիսը Քրիստոսի Ծննդյան և Աստվածհայտնության, Մեր սրտաբուխ մաղթանքներով, որ կենարար շնորհները Սուրբ Ծննդյան առատապէս բաշխվեն բոլոր եկեղեցիներին և համայն աշխարհին, հաւաքել լուսավորում ու խաղաղեցում մարդկանց և ժողովուրդների կյանքի:

Սուրբ զգացումներով մնում ենք աղոթող Ձեր արևշատության և Ձեր նվիրական առաքելության առատապէս պտղավորման համար:

Եղբայրական հարգալից սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ


Ս. Էջմիածին

*
* *

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Ամանորի և Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդյան շնորհավորական գրություններին ի պատասխան ստացվել են քույր Եկեղեցիների հոգևոր պետերի և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների ղեկավարների՝ այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում էր քրիստոնեական եղբայրության ու համագործակցության սրտագին ոգին քույր Եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԵՐԻ ԱՌԹՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ
ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ
ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հա-
նութիւն»:

Այսօր նոր հույս ու նոր լույս տեսիլքներ են ծաղկում մեր սրտերում, ի
ծագել Բեթղեհեմի աստղին, որ ամեն տարի երկնքի բարձունքներից երկիր
է շողարձակում ավետիսը Ծննդյան՝ խաղաղության իշխանին, որ մարդկա-
յին կյանքի հորիզոնը լուսավորում է արդարության արեգակով:

Այսօր, խաղաղության ու արդարության ծարավի մեր հոգիները, ցնծու-
թյամբ ողջունում են մեծ ավետիսը հրաշալի Ծննդյան Փրկչին մեր Հիսուսի
Քրիստոսի: Վերստին լուսավորվում են մեր հոգիները, վերստին լցվում են
մեր սրտերը վառ հույսերով դեպի ապագան, վերստին զարթնում են մեր
գիտակցությանց մեջ՝ մեր նմաններին արդարն ու բարին կամենալու և գոր-
ծելու մղումները կյանքի ուղիների վրա:

Այս խոհերով ու սպասումներով, Փրկչի Իջման Սուրբ Սեղանից բերում
ենք ձեզ լույս ավետիսը Քրիստոսի Ծննդյան և Աստվածհայտնության և
համայն հավատացյալ մեր ժողովրդին, Մեր սրտաբուխ մաղթանքներով, որ
կենարար շնորհները Սուրբ Ծննդյան առատապես բաշխվեն ձեզ բոլորիդ,
հառավել պայծառացում հայ հոգևոր կյանքի ու առաքելության:

Սուրբ զգացումներով մնում ենք աղոթող ձեր արևշատության և Սուրբ
Աթոռիդ անսասանության համար:

«Եւ ինքն Տէր խաղաղութեան, տացէ ձեզ խաղաղութիւն յամենայն ժամ
յամենայն իրս» (Բ Թեսալ. Գ 16):

Եղբայրական սիրո ողջագործումով՝

ՎԱԶԳԵՆ Ա.


ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածին

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացումներով զեղուն քաղմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրհորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ
ԲԱՐՁՐԱՍՏԻԺԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ
ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ ՆՈՐ ՏԱՐՎԱ ԱՌԹԻՎ

ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ԲԱԲԿԵՆ ՍԱՐԿԻՍՈՎԻՆ,
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻՆ

Երևան

Նոր տարվա սեմին երջանիկ ենք Ձեզ ողջունելու և շնորհավորելու՝
մաղթելով Ձեզ ամրակուռ առողջություն և մշտական հաջողություններ Ձեր
հայրենամյվեր գործունեության ճանապարհին:

Մաղթում ենք նաև, որ մոր տարին իր հետ բերի առավել խաղաղ
գոյավիճակ համայն աշխարհին և համերաշխ գործակցություն պետություն-
ների միջև:

Խորին հարգանք՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածին

ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ,
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Երևան

Սուրբ Էջմիածնից ջերմ սրտով շնորհավորում ենք Ձեր Նոր տարին և
մաղթում Ձեզ արևշատություն ու հարատև հաջողություններ Ձեր հայրենա-
շեն գործունեությանը:

Մնում ենք աղոթող, որ հառաջիկա տարին լինի խաղաղության տարի աշխարհի բոլոր ժողովուրդների համար, ինչպես և շինարար աշխատանքի ու վերելքի շրջան մեր վերածնված մայր հայրենիքի համար սովետական եղբայրական ազգությունների մեծ ընտանիքում:

Խորին հարգանքով՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ Վ. ԿՈՒՐՈՅԵՂՈՎԻՆ,
ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Մոսկվա

Ուրախ սրտով շնորհավորում ենք Ձեզ Նոր տարվա սեմին՝ մաղթելով Ձեզ և Ձեր գործակիցներին ամրակուռ եռանդ՝ շարունակելու Ձեր առաքելությունը՝ մվիրված հայրենիքի բարօրության:

Մենք և մեր առաքելական Եկեղեցին պիտի մնանք մաս հետ այսու ջերմ աղոթող ու գործող՝ հոգուտ խաղաղության գաղափարի հաղթանակի, մեր օրերի աշխարհում միշտ կանգնած խաղաղասիրական ուժերի կողքին:

Մեր բազմազգ մեծ հայրենիքի համար մոր տարին թող լինի մոր մկանդների և ծաղկման տարի, խաղաղության ու անվտանգության պայմաններում:

Խորին հարգանքով՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ՌՈՒԲԵՆ ՊԱՐՍԱՄՅԱՆԻՆ,
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ
ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Երևան

Հանուն Հայաստանյայց Եկեղեցու և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ձեզ ենք ներկայացնում Մեր սրտագին շնորհավորանքի խոսքը Նոր տարվա ուրախ առիթով՝ մաղթելով Ձեզ և Ձեր գործակիցներին քաջատույժ կյանք, շարունակելու Ձեր եռանդուն գործունեությունը՝ մվիրված մեր հայրենիքի վերելքին ու մեր ժողովրդի բարօրության:

Աղոթող ենք մաս, որ մոր տարին ևս առավել ամրապնդի աշխարհի խաղաղությունը և համերաշխ գործակցությունը պետությունների միջև՝ հերքանկություն համայն մարդկության:

Ընորհավոր Նոր տարի:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ**

Ս. Էջմիածին

Ընդունեցեք իմ շնորհակալությունը Նոր տարվա առթիվ Ձեր շնորհավորանքի և բարի ցանկությունների համար:

Ես նույնպես շնորհավորում եմ Ձեր Նոր տարին և ի սրտե ցանկանում Ձեզ քաջառողջություն և նորանոր հաջողություններ խաղաղության և ժողովուրդների բարեկամության ամրապնդման համար Ձեր բեղուն աշխատանքում:

Թող նոր տարին մեր հայրենիքի համար լինի խաղաղության և երջանկության տարի:

Հարգանքներով՝

ԲԱԲԿԵՆ ՍԱՐԿԻՍՈՎ

ՀՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Երևան

**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ**

Ս. Էջմիածին

Հաճեցեք ընդունել իմ ջերմագին շնորհավորանքները Ամանորի առիթով:

Մաղթում եմ Ձեզ քաջառողջություն, արևշատություն և բեղմնավոր գործունեություն՝ ի շահ մեր հայրենիքի բարօրության, աշխարհի խաղաղության և ժողովուրդների բարեկամության:

Հարգանքներով՝

ՅԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Երևան

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.

Ս. Էջմիածին

Ծնորհավորում եմ Ձեր Նոր տարին, ցանկանում եմ քաջառողջություն և հաջողություններ Ձեր հայրենասիրական գործունեության ճանապարհին՝ հանուն ժողովուրդների միջև խաղաղության և բարեկամության ամրապնդման:

Վ. ԿՈՒՐՈՅԵՂՈՎ

ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Մոսկվա

**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԳ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ**

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն, 1981 թվականի տարեմուտին ընդունեցեք իմ ջերմ
շնորհավորանքները և լավագույն քարեմաղթությունները:


Թող 1981 թվականը լինի խաղաղության տարի, թող այն լինի մեր հայ-
րենիքի նոր վերելքի և քարգավաճման տարի:


Ցանկանում եմ հաջողություններ Ձեր հայրենաակեր գործունեությանը:
Քաջատողջություն Ձեզ:

ՌՈՒԲԵՆ ՊԱՐՍԱՄՅԱՆ

ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Երևան






**ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԱՐ ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ**

Հունվարի 15-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը Երևանում, Կառավարական տանը, պաշտոնական այցելություն տվեց Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆադեյ Տաճատի Սարգսյանին:

Այդ առթիվ Հայոց Հայրապետին ուղեկցում էր Մայր Աթոռի միաբան Տ. Զատիկ արդ. Ավետիքյանը, որպես գավազանակիր:

Հայոց Հայրապետի և Մինիստրների խորհրդի մեծարգո պարոն նախագահի միջև տեղի ունեցավ ջերմ գրույց՝ սրտագին մթնոլորտում: Զրույցին մասնակցում էին Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի գործերի կառավարիչ Հ. Ե. Վարդանյանը և Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռուբեն Պարսամյանը:





ԱՄԱՆՈՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Տերունական 1980 թվականի տարեկեր-
ջին օրն է: Երեկոյան Մայր Աթոռի միա-
բանական զարդարված սեղանատանը տո-
նական ուրախ խանդավառություն է տի-
րում:

Արդեն մնալուն ավանդույթ դարձած տա-
րեմուտի ուրախ երեկոյին Նորին Սրբու-
թյուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրա-
պետի շուրջ են համախմբվել Մայր Աթոռի
միաբանությունը, Գերագույն հոգևոր խոր-
հրդի անդամները, հոգևոր ճեմարանի դա-
սախտական կազմը, ուսանողությունը և
այլ հյուրեր, շուրջ 100 հոգի:

Երեկոյին ներկա էր նաև հյուրաբար
Մայր Աթոռում գտնվող հնդիկ մալաբար
Եկեղեցու բարձրաստիճան հոգևորական,
Քոթայամի հոգևոր ճեմարանի տեսուչ միտ-
րոպոլիտ Պատուս Մար Գրիգորիոսը:

Երեկոյի բոլոր ներկաներն էլ, տարեկեր-
ջին խոկման ազնիվ զգացումներով համակ-
ված, եկել են բարի ճանապարհ ասելու
անցնող ու պատմություն դարձող 1980
թվականին և բարիգալստյան մաղթանք-
ներով դիմավորելու 1981 տարին:

Երկունքի իր վերջին պահերն է ապրում
անցնող տարին՝ մի քանի ժամից ծնունդ ու
կյանք պարգևելու ամանորին:

Սկսվում է ուրախ երեկոն: Բոլորը հո-
տրմկայա արտասանում են «Հայր մեր» ա-
ղոթքը: Նորին Սրբութուն Վեհափառ Հայ-
րապետը օրհնում է Մայր Աթոռի բարիք-
ներով լեցուն տոնական սեղանի աղն ու
հացը:

Քիչ անց երեկոյի բացման և առաջին
շնորհավորական ու բարեմաղթության խոս-
քով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի
տեսուչ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը: Տեսուչ

տեղ հայրը, ամանորյա խորհրդածություն-
ներ կատարելուց հետո, անցնող տարին
որակում է գոհացուցիչ աշխատանքների
տարի, մանավանդ հոգևոր ճեմարանի հա-
մար:

«Բերկրալից հույզերի, ցնծության, բոլոր
տոներից ամենաուրախալի և հաշվեհար-
դարի օր է այսօր ամենքի համար,—նշում
է տեղ հայրը և ավելացնում:—Մենք մոր
տարուց պետք է կազմենք մոր ծրագրեր և
աշխատենք այդ մոր ծրագրերը կյանքի կո-
չել»:

Վերջում արժանապատիվ տեսուչը, ընդ-
գծելով Հայ Եկեղեցու և Մայր Աթոռի անց-
նող բառորդարյա երջանիկ, ծաղկուն և
բարգավաճ կյանքը, որպես նշան երախտա-
գիտության, առաջարկում է բաժակ բարձ-
րացնել Նորին Սրբության կյանքի առող-
ջության, արևշատության և Մայր Աթոռի
հետագա է՛լ ավելի բարգավաճման ու պալ-
ծառության համար: Հնչում է Հայրապետա-
կան մաղթերգը:

Այնուհետև հոգևոր ճեմարանի ուսանող-
ները, ղեկավարությամբ հոգևոր ճեմարանի
ժողովրդական երաժշտության դասախոս Տ.
Ղևոնդ քհն. Հարությունյանի, կատարում են
«Սեղանն է առատ» և «Կենաց երգ» ուրախ
խմբերգերը:

Մի փոքր դադարից հետո հայերեն և
անգլերեն արտասանություններով հանդես
են գալիս հոգևոր ճեմարանի ուսանողներ
Ռազմիկ Խախանյանը (Բ դասարան) և
Ստեփան սրկ. Կարապետյանը (Բ լսարան),
որոնք հաջորդաբար կատարում են Պա-
րույր Սևակի «Լույս զվարթ» և Կիպլինգի
«IF» («Եթե») բանաստեղծությունները:

Ապա ուսանողության անուցից շնորհավորական իր հետևյալ խոսքն է կարդում Սմբատ արկ. Արիստակեսյանը.

«Նոր տարվա սեմին կանգնած, մենք՝ հուսացյալ հոգիներս, աղոթում ենք առ Աստված. «Տէ՛ր, ուղղեա՛՛ր զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան»:

Եթե ժամանակը հավիտենական է և որպես հասկացություն հարաբերական, ապա ժամանակ հասկացությունը նոր տարով դառնում է պարզ, խորհրդավոր, կյանքը խորհրդանշող մի իմաստություն:

Տարեկերջի գիշերն է: Եվս մի քանի ժամեր, և աշտարակի ժամացույցը կազդարարի ժամը 12-ը, և կունենանք մի նոր տարի՝ 1981 թվականը: Անցավ հին տարին, սակայն չմեռավ, իսկ եթե մեռավ, ապա բաւություն անելու համար, մնան ցորենի այն հատիկին, որը մեռնում է նոր կյանքեր ծնելու համար:

Ամեն անգամ, երբ բացվում են դռները նոր տարվա, մեր հոգիները մեծ սպասումով ձգվում են դեպի երկինք, մեր ականջները ավելի են զգաստանում՝ լսելու համար երգը հրեշտակների. «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Քրիստոսի Ավետարանի լույսը սփռվել է տարիների վրա: Այս նոր տարին ևս մըռնում է իր հունի մեջ: Մեզ՝ հոգևոր ճեմարանի ուսանողներին մնում է ճանաչել այդ լույսը և իմաստավորել:

Այժմ, հավաքված Ամանորի ավանդական սեղանների շուրջ, սպասում ենք ձմեռ պապին, որը երջանկության և առատության խորհրդանշանն է:

Որքա՛ն երջանիկ ենք այսօր մենք՝ շրջապատված կրկին անգամ Ձեզանով, սիրելի Վեհափառ Հայրապետ: Որքան մեծ է Ձեր հայրական հոգածությունը դեպի մեզ՝ ուսանողներս: Տակավին թարմ է մեր մըտքերում այն խոսքերը, որ Դուք արտաբերեցիք ճեմարանի բացման հանդեսին այս տարի. «Մեր հաճելի պարտականություններից մեկն է ամեն տարի գալ այստեղ, Մեր հոգևոր հարկի ներքո կատարելու դպրոցական տարեջրջանի բացումը»:

Նոր տարին մեզ՝ ուսանողներին համար մեր ուխտերը վերանորոգելու և հաստատելու մի նոր առիթ է տալիս: Մեր կյանքի գերագույն երջանկությունը, նրա բուն իմաստը պետք է գտնենք այդ ուխտի մեջ:

Գեղեցիկ օր է այսօր, ուրախության ինչպիսի՛ պահեր են ապրում մեր սրտերը: Մենք՝ ուսանողներս, Հայաստանի բոլոր շրջաններից եկած, ինչպես նաև սփյուռքի մեր ուսանող եղբայրները, կարոտ ու ծառավ ենք հավատքի ու հայրենասիրության

նշմարիտ խոսքերի ու դաստիարակության, եկել ենք Աստուծո Գիրքը կարդալու, մեր շարականները երգելու, սաղմոսներով հիանալու, Սուրբ Նարեկացիով ու Սուրբ Ծնորհայիով մեր սրտերը լցնելու: Քաջ գիտակցելով մեր ապագա գործունեությունը, խոստանում ենք միշտ հաստատ մնալ մեր ուխտին, մեր լույս հավատքին, մեր նախնիների ավանդույթներին:

Վեհափառ Տեր, թույլ տվեք, հանուն հոգևոր ճեմարանի ուսանողության, շնորհավորել Ձերդ Սրբության Նոր տարին և մաղթել երկա՛ր ու երկա՛ր տարիների զահակություն, արևշատություն, պայծառություն և անասանություն Մայր Աթոռին, բարություն՝ հայրենյաց»:

Կրկին ելույթ է ունենում հոգևոր ճեմարանի երգչախումբը, որը կատարում է «Ախ ինչ լավ է» և «Լոնց...» խմբերգերը:

Բանաստեղծ Ռազմիկ Դավոյանի «Տաք սալեր» բանաստեղծության արտասանությամբ հանդես է գալիս ճեմարանի Գ դասարանի ուսանող Հակոբ Գալսթաքյանը:

Այնուհետև հոգևոր ճեմարանի վերակացու Վաչագան Հովհաննիսյանը ընթերցում է իր՝ վերջերս գրած «Ձոն Վեհափառ Հայրապետին» ինքնատիպ բանաստեղծությունը:

Ի դիմաց հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի, շնորհավորական իր խոսքն է կարդում Երվանդ Մելքոնյանը:

«Վեհափառ Տեր,

Ծնորհավոր Նոր տարի բոլորի՛ն, բոլորի՛ն:

Այս պահը դադարի ակնթարթ է հարահու ժամանակի մեջ, մնան այն ակնթարթին, երբ անտառապահը կանգնում է, նայում իր անցած ճանապարհին, գնահատում անցածը, վստահ լինելով ու գիտակցելով, որ ինքը պետք է շարունակի իր ճանապարհը դեպի լեռան գագաթը, դեպի անտառի խորքը՝ հսկելու համար անտառի առողջությունը, այն հանձնելու համար գալիք ժամանակներին:

Բոլորս ունենում ենք այդ հետադարձ հայացքի ակնթարթները, և երանի՛ նրան, ով հետադարձ հայացքով իր անցած ուղին քննելուց հետո, պայծառ և գոհունակ հայացքով է շրջվում դեպի գալիքը՝ կայուն, հաստատական և այդ գալիքի նկատմամբ ավելի մեծ հավատով ու ներշնչմամբ:

Այս պահը այդպիսի մի ակնթարթ է նաև Ամենայն Հայոց կաթողիկոսի համար: Յուրաքանչյուր առաջնորդի ու հովվի գործի գնահատման չափանիշը անպայմանորեն և միշտ, նրա առաջնորդած ժողովրդի ու հոտի գնահատականն է:

Վեհափառ Տե՛ր,

Հետադարձ հայացքի այս պահին Դուք կարող եք հանգիստ խղճով նայել Ձեր անցած ուղյակին և մեծ գոհունակությամբ նայել ապագային: Ահա արդեն 25 տարի է, որ Դուք մշտադրո՞ւմ ուղեկիցն եք հայ ժողովրդի երազանքների իրականացման: Այնքան կրող, եռանդ ու սրտացավություն, որ Դուք ցուցաբերեցիք այդ երազանքներին պայծառություն և իրագործում հաղորդելու համար, վեր են մեկ անհատի հնարավորություններին: Դուք նվաճեցիք Ձեր ժողովրդի հավատքը Ձեր գործի նկատմամբ. իսկ դա մեծագույն գնահատականն է, բոլոր առաջնորդների համար: Ձեզ մաղթում ենք միայն առողջություն՝ հավատալով, որ եթե Դուք առողջ լինեք և բարձր, մնացած ամեն ինչ կիրագործեք Ձեր ժողովրդի սրտի զարկերի արձագանքով: Եվ մեկ էլ խաղաղություն ամբողջ աշխարհին: Ձեր ժողովուրդը ամենից խորն է տարել ու թանկ վճարել բոլոր պատերազմների դիմաց իր հազարամյակների պատմության ընթացքում: Ուստի Ձեր ձայնը Ձեր ժողովրդի ձայնն է և Ձեր աղոթքը՝ մեր աղոթքը, որպեսզի ամենաբարձրագույն Աստված խաղաղության մեջ պահի աշխարհը և Ձեր փորձիկ աժուխ:

Հոգևոր ճեմարանի նկատմամբ Ձեր մրջտակա մտահոգությունը մեկնաբանության կարիք չունի: Այս պահին ճեմարանի դասախոսական կազմի կողմից ուզում են մի անգամ ևս հավաստիացնել Ձեզ, որ այնտեղ ամեն ինչ արվում է ու կարվի ավելի շատ հայեցողություն, հայկական ոգի և մտածողություն սերմանելու համար. մենք մտահոգված ենք, որ մեր աշակերտները ճիշտ գիտակցեն ու գնահատեն մեր ժողովրդի ազգային զգացումներն ու երազանքները՝ Սովետական Հայաստանի հայկական պետականությամբ: Այդ բոլորի ամենաճշմարիտ մարմնավորումը կա Ձեր անձի մեջ, և բոլորիս հայացքը սնեոված է Ձեր գործունեությանը: Լույս և կայունություն Ձեր գործին:

Նորից շնորհավոր ձեր բոլորի Նոր տարին, և թող բոլորս մյուս տարի այս սեղանին ներկա լինենք անպակասորդ»:

Ապա Ամանորի շնորհավորական ու բարիմաղթանքների գեղեցիկ խոսքով հանդես է գալիս երեկոյի հյուր, հնդիկ միտրոպոլիտ Պաուլոս Մար Գրիգորիոսը:

Ամենապատիվ հյուրը շնորհավորում է բոլորի նոր տարին և բարեմաղթություններ կատարում գալիք տարվա երջանկության, խաղաղ շինարարության և բազում ազնիվ երազանքների ու ծրագրերի իրականացման համար:

Այնուհետև ելույթ է ունենում հոգևոր ճեմարանի «Զվարթնոց» գործիքային նվագախումբը, որը հաջորդաբար կատարում է «Այազյազ», «Խնկի ծառ», «Դե լաման» և «Տարեմուտի երգ» ժողովրդական ստեղծագործությունները:

Երեկոյի ուրախությունը բազմապատկում է զավեշտ հիշեցնող կադանդների ընթերցումը Բ լսարանի ուսանող Վարդան արկ. Բաղդասարյանի կողմից:

Տարեմուտի ավանդական վիճակահանությունից հետո, ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը հրավիրում է Վեհափառ Հայրապետին՝ տալու օրհնության Իր խոսքը:

ՎԵՀԱՓԱՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԱՄՆԱՆՈՐԻ ԵՐԵՎԱՆԻՆ
(31 դեկտեմբերի 1980 թ.)

Ժամանակի հոսքը պատմության ընթացքին կարելի է նմանեցնել մի գրքի, որի էջերը դառնում են ամեն տարի: Մեզ համար էլ ժամանակը այդ իմաստը ունի, որովհետև Մայր Աթոռը մի սրբազան հիմնարկություն է՝ հատուկ մի առաքելությամբ: Ամեն մեկս աշխատում ենք մեզ բաժին ընկած պարտականությունը կատարելու առավել կամ նվազ բարեխղճությամբ, առավել կամ նվազ հաջողություններով: Երբեմն ունենում ենք նաև ձախողանքներ: Դա էլ բնական է կյանքի ճանապարհի վրա:

Կյանքը ընդհանրապես ուղիղ ճանապարհով ընթացող իրողություն չէ բարեբախտաբար կամ դժբախտաբար. վիճելի հարց է այս: Կյանքը ընդհանրապես մի պաշար է լուսի և խավարի միջև, բարու և չարի միջև: Այս ճշմարիտ է պատմության հորիզոնի վրա, ճշմարիտ է նաև Եկեղեցու կյանքում, ճշմարիտ է նաև մեր՝ Մայր Աթոռի կյանքում. ինչ որ այդ Մեզ հետաքրքրում է այս պահին:

Անցնող տարին, նույնպես պաշարի մի տարի եղավ. ինչպես ամեն տարի: Եվ մեզանից ամեն մենք աշխատեց, յոբնեց, որպեսզի լույսը ավելի հաղթական ուրու գա. քան թե խավարը. և բարին ավելի՝ քան չարը: Որովհետև մեր կոմունիզմ էլ այդ պաշարը կա և շարունակվում է: Եվ պիտի շարունակվի: Մեր պարտքն է և մեր առաքելությունը, որ մեր ձեռաց գործերով նպաստենք լուսի տարածման և բարու իրագործման մեր կոմունիզմում. մեր Եկեղեցու կոմունիզմում. մեր ժողովրդի կյանքում և Մայր Աթոռի կյանքում:

Անցնող տարին այդ տեսակետից արձանագրեց որոշ հաջողություններ Մայր Աթոռի աշխատանքի տարբեր բաժիններում:

Այստեղ ուզում ենք նախ շեշտել հոգևոր ճեմարանից ներս կատարված բարեփոխությունները և՛ կրթական, և՛ կարգապահության, և՛ բարոյական ու հոգևոր դաստիարակության տեսակետներից:

Մենք ուզում ենք հիշել նաև այն իրավիճակը, որ ստեղծվեց մեր երկու վանքերում, որոնք նոր դեկավարությամբ սկսան գործել: Մեր խոսքը վերաբերվում է Ս. Գեղարդա վանքին և Խորվիրապի վանքին, որոնք նոր վանահայրերով օժտվեցին և նոր հոգևոր ծառայողներով, բոլորն էլ մաքուր ձեռքերով մարդիկ: Եվ այդ մաքուր ձեռքերը հրաշալի աշխատանք կատարեցին ոչ միայն նյութական-ֆինանսական, դա գուցե երկրորդական է, այլ նաև հոգևոր-բարոյական կյանքի բարելավման իմաստով: Այո՛, բարձրացավ հոգևոր և բարոյական վարկը այս երկու վանքերի: Պետք է ասել, որ նույնպիսի կարգ ու կանոն ստեղծվեց Վաղարշապատի մեր վանքերում: Մենք գոհ ենք Վաղարշապատի մեր չորս եկեղեցիների դեկավարությունից, մասնավորապես Ս. Հռիփսիմեի վանահոր շինարարական իրագործումների համար:

Մեր գնահատանքը և օրհնությունը բոլորին:

Մեր առջև նոր խնդիրներ դրված են նաև հառաջիկա՝ 1981 թվականի համար, և այդ առաջին մեր պարտականություններից մեկը պետք է լինի վերակազմել, վերակազմակերպել և կարգ ու կանոն դնել Արարատյան թեմում և Երևանի եկեղեցիներում:

Տակավիճակ ուրիշ ծրագիրներ էլ ունենք, և կարծում ենք, որ դուք բոլորդ, որ մեր գործակիցներն եք, պիտի շարունակեք ձեր աշխատանքները հանուն լուսավոր և հանուն բարի իրագործումների մեր Եկեղեցու կյանքից ներս:

Ուզում ենք մեծ հաճությամբ ողջունել այստեղ ներկայությունը Մեր սիրեցյալ եղբոր՝ Գրիգորիոս միտրոպոլիտի, որը մեր օրերին քրիստոնեական մտածողության և գործունեության փայլուն դեմքերից մեկն է հանդիսանում: Ամեն անգամ, երբ հանդիպում ենք Մենք նրան, և լսում ենք նրան, Մեզ այնպես է թվում, որ նա նաև հարազատ զավակն է մեր Հայաստանցայց Առաքելական Եկեղեցու:

Այս նոր տարվա սեմին մաղթում ենք նրան տոկուն առողջություն և մշտանորոգ ներշնչումներ, որպեսզի շարունակի իր առաքելությունը ի ծաղկումն իր Եկեղեցու և ի պատրաստություն և դաստիարակություն Եկեղեցու նոր սերունդների և նաև միասնության հառավել ամրացման մեր ոչ-քաղկեդոնական քույր Եկեղեցիների ընտանիքում: Արդեն այդպիսի առաքելությամբ ե-

կած է այստեղ նա՝ ծրագրելու, որպեսզի մոտ ապագային, այս տարվա՝ 1981 թվականի ընթացքին տեղի ունենա մի խորհրդրդակցական ժողով՝ մեր հինգ ոչ-քաղկեդոնական Եկեղեցիների պաշտոնական ներկայացուցիչների միջև: Մենք շնորհավորում և բաջալերում ենք այս ծրագիրը և մաղթում ենք լիակատար հաջողություն միտրոպոլիտ Գրիգորիոսի այս առաքելության:

Մեր սրտին շատ խոսեցին իր մտածումները և առաջարկությունները մեր երկու Եկեղեցիների փոխհարաբերությամբ առումով: Նա հրավիրեց մեր դասախոսներին, մեր ուսանողներին Հնդկաստան, և Մենք էլ փոխադարձաբար իրենց պետք է հրավիրենք:

Ահա այսպես մեր երկու Եկեղեցիները ձեռք-ձեռքի տված պետք է գործեն, մեր խղճի պարտքը կատարելու համար:

Եվ հիմա ձեզի բոլորիդ բերում ենք Աստուծո օրհնությունը, բոլորիդ արևշատություն, բաջառողջություն ենք մաղթում, ձեր աշխատանքներում հաջողություն, և Աստված մեզի մեա միշտ պահապան, օգնական մեր վերածնված մայր հայրենիքին, մեր ժողովրդին ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Կեցցե 1981 բարի տարին:

Ամանորի ուրախ երեկոն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:

Տարեվերջին գիշերն է: Կեսգիշերապահին, ուղիղ ժամը 12-ին, հնչում են Մայր տաճարի զանգակները՝ ազդարարելով գալուստը նոր տարվա: Հոգևոր ճեմարանի բոլոր ուսանողները միախորհուրդ հավաքված Իջման Ս. Սեդակի առաջ, հուզաթափվալ սրտով, մի քանի վայրկյանի մեջ ապրում են անցնող տարին և արժեվորում իրենց լավ ու բարի գործերը:

Խորախորհուրդ մթնոլորտում տեղի է ունենում խոկման աղոթք:

Վերջում բոլոր ուսանողները մոտենում են Իջման Ս. Սեդակին, ծնրադրում, նորոգում իրենց ուխտը և համրաբալլ դուրս գալիս Մայր տաճարից:

Հունվարի 1-ին, հինգշաբթի.—Առավոտյան ժամը 10.30-ին Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, մատուցվում է տարեմուտի սրբազան պատարագ: Օրվա պատարագիչն է հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը:

Ա. պատարագին ներկա է նաև Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի պատարագիչ տեր հայրը Իջման Ս. Սեդակից խոսում է օրվա խորհրդին նվիրված մի քարոզ՝ նշե-

լով անցյալ՝ 1980 տարվա արժանավայել ու քարի գործերը, միաժամանակ շնորհավորելով բոլորի նոր տարեմուտը:

Ապա Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է «Հայրապետական մաղթանք»-ի արարողությունը:

Պատարագից հետո Մայր Աթոռի ողջ միաբանությունը և հոգևոր ճեմարանի ուսանողությունը Վեհարանում այցելում են Վեհափառ Հայրապետին և աջահամբույրով

շնորհավորում Նորին Սրբության նոր տարին և մաղթում երկար ու երջանիկ տարիներ:

Ժամը 14.30-ին Վեհարանի սեղանատանը Մայր Աթոռի միաբանության պատվին տրված ճաշկերույթով ավարտվում է ամսանորյա հանդիսությունը:

ԶԱՏԻԿ ԱԲԵՂԱ, ԱՎԵՏԻՔՅԱՆ



ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

1981, հունվարի 6, երեքշաբթի.—«Տօն Ծննդեան և Աստուածայայտնության Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի».

Վաղ գարնանային ջերմ ու պայծառ օր է: Մայրավանքը և Մայր տաճարը վաղ առավոտից լի են ուխտավոր ու աղոթավոր բազմությամբ: Ամեն կողմ տիրում է տոնական հանդիսավորություն և բարի տրամադրություն:

Առավոտյան ժամերգությունը Մայր տաճարում պաշտվում է առանձին հանդիսավորությամբ՝ մասնակցությամբ Մայր Աթոռի ողջ միաբանության և հոգևոր ճեմարանի ուսանողության:

Մայր տաճարի կամարների ներքո հնչում են Ս. Ծննդյան հոգեգմայլ շարականները՝ «Խորհուրդ մեծ և սքանչելի», «Այսօր տօն է Սուրբ Ծննդեան»:

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Ժամը 11-ն է: Նորին Սուրբ Օծությունը հայրապետական լիվ զգեստավորման մեջ, եկեղեցական թափորով, շարականով ու խնկով և զանգերի ավետավոր հնչյունների ներքո, Վեհարանից առաջնորդվում է Մայր տաճար՝ մատուցելու Ս. Ծննդյան պատարագը:

Ավագ խորանի դիմաց, կենտրոնական ատյանում, տեղ են գրավել ՀՍՍՀ Միմիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանը, տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանը, Գերագույն հոգեվոր խորհրդի անդամները և այլ հրավիրյալներ:

Սուրբ պատարագին ներկա են նաև Բուենոս Այրեսի Հ. Բ. Ը. Միության Մարի Մանուկյան միջնակարգ հայ դպրոցի այս տարվա շրջանավարտ ուսանող-ուսանողուհիներ, որոնք ուխտավորաբար ժամանել են

Մայր Աթոռ և հայրենիք: Ուսանող-ուսանողուհիների խումբը Ս. Հաղորդություն է ստանում Հայոց Հայրապետի ձեռքից:

Պատարագի ընթացքում Սուրբ Սեղանին սպասարկում են Ս. Գևորգ եպս. Սերայդարյանը, Ս. Ստեփանոս և Ս. Զատիկ արքեպեղները, ասրկավագների ողջ դասը:


Մայր տաճարի երգեցիկ խումբը, ղեկավարությամբ Ս. Ղևոնդ քհն. Հարությունյանի, կատարում է Մակար Եկմայանի և Կոմիտաս վարդապետի Պատարագների հոգեգմայլ երգեցողությունները:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը, Փրկչի հրաշափառ Ս. Ծննդյան ավետիսը տալով ողջ հայությանը, խոսում է հոգեշունչ և շինիչ մի քարոզ, որը տպվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 3):

Հայրապետական սույն քարոզը նույն երեկոյան հաղորդվում է Երևանի ձայնասիյուտից:

Բազում հավատացյալներ նույնպես երկշունչ քարեպաշտությամբ Հաղորդություն են ստանում հավարտ ու պատարագի: Ապա Ավագ սեղանի բեմի վրա, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է «Ջրօրհնեաց» կարգը՝ ի հիշատակ Քրիստոսի մկրտության Հորդանան գետում:

Ժամը 14.30-ին Վեհարանի սեղանատանը տրվում է Սուրբ Ծննդյան ավանդական ճաշկերույթը, որին ներկա են լինում, ի թիվս այլ պաշտոնական հրավիրյալների, նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գրտնրվող լիբանանահայ տեղ և տիկին Գեղամ-Անգիլեն Տանձիկյանները և Մայր Աթոռի բարերար Գևորգ Այվազյանը՝ Հալեպից:



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունվարի 4-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Ստեփանոս արք. Չաքալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Որ մեծն է ի ձեզ՝ եղիցի իբրև զկրտսերն, և առաջնորդն՝ իբրև զպաաստորն» (Ղուկ. ԻԲ 26) քննախոսով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* *

Հունվարի 7-ին, չորեքշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Արտակ քհն. Սիմոնյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ «վասն համօրէն ննջեցելոց»:

* *

Հունվարի 11-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Գրիգորիս վրդ.

Բունիաթյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում Ս. Ծննդի հոգևոր նշանակության մասին:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* *

Հունվարի 13-ին, երեքշաբթի.—Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Եղիշե քհն. Բաղդամյանը:

* *

Հունվարի 14-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհաբանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

* *

Հունվարի 15-ին, հինգշաբթի.—Այսօր Վեհաբանում, Վեհափառ Հայրապետի նա-

խազահությանը, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստ:

* * *

Հունվարի 18-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Ստեփանոս արք. Զաքարյանը:

* * *

Հունվարի 20-ին, երեքշաբթի.—Այսօր Երուսաղեմից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Երուսաղեմի հայոց Սրբոց Հակոբյանց վանքի դիվանապետ և Ժառանգավորաց վարժարանի ու ընծայարանի վերատեսուչ Ս. Ծաֆե արքեպ. Աճեմյանը:

Սրբազան հորը Երևանի օղանավակայանում դիմավորում է Մայր Աթոռի դիվանապետ Ս. Արսեն եպս. Բերբերյանը:

* * *

Հունվարի 21-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական ընդլայնված հավաքույթ, որին հրավիրված էին նաև Արքեպիսկոպոսի թեմակալ առաջնորդներն ու Վաղարշապատի եկեղեցիների և Ս. Գեղարդ վանքի քահանա հայրերը:

Հավաքույթին ներկա էր նաև Ս. Ծաֆե արքեպ. Աճեմյանը:

Ժողովը շարունակվում է նաև հաջորդ օրը, հունվարի 22-ին: Այն եզրափակվում է Ս. Ծաֆե արքեպիսկոպոսի՝ անցյալ տարի, օգոստոսի 3—10 օրերին, Երուսաղեմում գումարված միաբանական խորհրդակցա-

կան համաժողովի աշխատանքների մասին ներկայացրած զեկուցումով:

* * *

Հունվարի 25-ին կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Զատիկ արք. Ավետիքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ո՛ր է Հաբել եղբայր քո» (ԾԱՆԴ. Դ 9) բնաբանով:

Ս. Զատիկ արքեպիսկոպոսը տպագրվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում: Հավարտ ս. տապարագի, ժամը 14-ին, Վեհարանում, Հայոց Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը, որին ներկա էր նաև Ս. Ծաֆե արքեպիսկոպոսը, որպես Գերագույն հոգևոր խորհրդի անդամ:

Ապա ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը, ի պատիվ Ս. Ծաֆե արքեպիսկոպոսի, տրվում է հրաժեշտի ճաշկերույթ, որն անցնում է ջերմ մթնոլորտում:

* * *

Հունվարի 28-ին, չորեքշաբթի.—Այսօր, առավոտյան, Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով, Երուսաղեմ մեկնեց Ս. Ծաֆե արքեպ. Աճեմյանը:

* * *

Նույն օրը, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:



ԱՌԱՋԻՆ ԵՂԲԱՅՐԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Յանուն Հօր և Որդու և Հոգւոյն Սրբոյ,
ամէն»:

«Ո՛ր է Հաբել եղբայր քո» (Ծննդ. Դ 9):

Սրբազան պատարագի սիրելի ներկայներ, արտասանված սույն խոսքերը քաղված են Աստվածաշնչի Ծննդոց գրքից: Այս խոսքերով Բարձրյալն Աստված հարց է տալիս Կայենին և ասում. «Ո՛ր է քո եղբայր Աբելը»:

Անշուշտ ձեզանից շատերին ցանկալի ու հետաքրքիր կլինէր իմանալ, թե ովքեր էին Կայեն և Աբել եղբայրները, և ինչ էր պատահել Աբելին, որ Աստված այդքան մտահոգված էր նրանով:

Հարցին անմիջապես պատասխանելուց առաջ ասենք, որ արարչագործության կամ աշխարհի ստեղծման պատմությունից մեզ հայտնի է, թե ինչպես Աստված, մարդուն ստեղծելուց հետո, նրան տվեց ազատ կամք և բանականություն, որով և արարչագործության պսակ հանդիսացող մարդը վեր կանգնեց կենդանական աշխարհից:

Ազատ կամքը որքանով որ կարող էր պատճառ հանդիսանալ մարդու վեհագույն վերելքին, նույնքանով և կարող էր պատճառ դառնալ նրա անդնդային անկման: Եվ այսօր, կամ ամեն ժամանակներում անժրխտելի է դարձել այն իրողությունը, թե ազատ կամքը նախամարդու կյանքում ծառայել է նրա անկման, որով և նա մեղանշելով վտարվում է դրախտից ու ժառանգում հավիտենական մահը:

Այսպես, Հին Կտակարանի Ծննդոց գրքի պատումի համաձայն, օձը, հայտնվելով Եդենական պարտեզում, պատճառ է հանդիսանում նախամարդու անկման, նույնանում է Նոր Կտակարանի մեջ Հիտուսին ներկայացող փորձիչի հետ: Այդ օձը միաժամանակ ներկայանում է իբրև մարմնացումը չարության, որով և փորձությունը, մեղքը և պատիժը աշխարհ են մտնում:

Չարության մարմնացումը՝ այդ օձը, նախ մտնում է կնոջը՝ նախամայր Եվային, որին փորձության մատնելը նրա բնավորության բերումով ավելի հեշտ էր: Եվ Եվան խաբվելով ճաշակում է Աստուծո կողմից արգելված պտուղը, որից և ծնվում է կատարյալ մեղքը: Միաժամանակ հենց այդ պահից նախամայր Եվայի միջից վերանում է անմեղությունը, որը բերում է ամոթի զգացում, խղճահարություն և Աստուծո ներկայությունից խուսափելու տրամադրություն:

Եվ այսպես, դրախտից հեռանալուց հետո, Ադամի և Եվայի ամուսնությունից ծնվում են Կայեն և Աբել եղբայրները: Առաջինը մեծանալով դառնում է հողագործ, իսկ երկրորդը՝ ոչխարների հովիվ:

Եվ երբ որոշ ժամանակ անց, սովորության համաձայն, երկու եղբայրները որոշում են իրենց ընծաները մատուցել Բարձրյալն Աստուծո, Կայենը՝ իր անեցրած պտուղներից, իսկ Աբելը՝ իր ոչխարներից, Աստված ընդունում է Աբելի ընծան, իսկ Կայենինը՝ ոչ, որովհետև վերջինս բարությանը ու սիրով չէր մատուցում: Այդ դեպքից Կայենը խորապես տխրում է և տըրտմում, ու չար նախանձից դրդված մի անգամ, երբ դաշտում առանձին են լինում, առիթից օգտվելով, մի հարմար պահի չարանեցությունը սպանում է իր եղբորը:

Ահա վախիկ այս դեպքից հետո է, որ Աստված մտահոգված հարց է տալիս Կայենին և ասում. «Ո՛ր է քո եղբայր Աբելը»: Իսկ Կայենը անամոթաբար պատասխանում է. «Չգիտեմ, մի՞թե ես նրա պահապանն եմ»: Եվ հենց այս պահին է, որ Աստված հանդիմանում է նրան և ասում. «Այդ ի՞նչ արեցիր, քո եղբոր արյան արդար ձայնը բողոքում է ինձ հողի տակից: Եվ հիմա դու անիծյալ ես այս երկրի կողմից, որը բացեց իր բերանը, եղբորդ արյունը քո ձեռքից ընդունելու»:

Այս ամենի պատճառով, Կայենը իր մեջ ունենալով անարգված և մեղսապարտի զգացումը, ամոթահար փախչում է Տիրոջ ներկայությունից:

Արդարև աշխարհի վրա կան ուժեր, որոնք մարդուն մղում են դեպի չարը:

Սիրելի հայրեր, մայրեր, քույրեր և եղբայրներ, ահա այս է Կայեն և Աբել եղբայրների պատմությունը, որը ճշտում է այն իրողությունը, թե մեղքը մեկ անգամ աշխարհ մտնելուց հետո, ինչպես այն ժառանգական դարձավ ու ահավոր կերպարանք ստացավ:

Այս պատմությունը մեզ ցույց է տալիս, թե ինչպես նախանձը, մարդու կամքի վրա տիրելուց հետո, նրան առաջնորդում է դեպի չարություն, ատելություն և անգամ նույնիսկ սպանություն: Չարաբաստիկ այդ նախանձն է, որ ոտնահարում ու պղծում է ոչ միայն մարդկային-անհատական, այլ նաև բազմաբազում ընկերային, հասարակական ու ընտանեկան կապեր:

Կայեն և Աբել եղբայրների զոհաբերության պատմությունը մեզ սովորեցնում է, որ պաշտամունքի ընթացքում կամ զոհաբերության ժամանակ, Աստված մարդու սրտին է նայում և ըստ այնմ գնահատում: Աստված կարիք չունի մարդու «ավել-ցույթ»-ին:

Սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ այսօր էլ Աստված մեզանից զոհաբերություն է պահանջում, ինչպես հազարավոր տարիներ առաջ:

Իսկ ո՞րն է այդ զոհաբերությունը:

Այսօր մենք Աստուծո առաջան տաճարում որպես զոհ պիտի ներկայացնենք մեր իմաստալից կյանքը, որը արժեվորված պիտի լինի միմիայն բարի ու մարդասիրական վսեմաշուք գործերով: Այլապես Աստուծո համար անիմաստ է առանց այս բարեմասնությունների իր զոհասեղանին ներկայացնել մեկ հատ գառնուկ, մեկ աքաղաղ, կամ էլ երկու ճերմակ տատրակ կամ աղավաղ:

Անդրադառնալով Կայեն և Աբել եղբայրների պատմությանը, մենք Կայենի գործած մեղքը՝ եղբայրասպանությունը, կարող ենք համարել մարդկային ցեղի պատմության մեջ գործված մեծ մեղքերից երկրորդը: Եթե առաջինը նախամարդու անհնազանդությունն էր իր Տիրոջ՝ Աստուծո հանդեպ, ապա երկրորդը՝ նախանձից մղված ու գործած առաջին մեծ ոճիրն էր մարդը իր նմանի նկատմամբ, որով և Կայենը վտարվում կամ

ամոթահար հեռանում է Աստուծո առջևից:

Ուրեմն Աստուծո պատվիրաններից թելադրված, յուրաքանչյուրս փորձենք մեր մեջ խեղդել ու սպանել Կայենը և նրա զգացումները և ապա օգնենք սպանել այն դիմացինի, եղբոր կամ բարեկամի մեջ:

Տեսանք, թե ինչ վախճան ունեցավ նախանձը: Փորձենք կարելին անել՝ վերացնելու մեր միջից այն, որպեսզի ավելանա մեր մեջ ամենից առաջ ճշմարիտ սերը, և այդ սիրո փոխադարձ հարաբերությամբ ապրենք ավելի երջանիկ, խաղաղ անձնական, հասարակական ու ընկերային կյանքում:

Ինչո՞ւ մեր մեջ չունենանք իդեալը նախամարդու ազնիվ ու մեղսագործ կյանքի:

Այսօր մենք շատ պարզ կերպով կարող ենք ասել, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի ավետարանական կյանքը հանդիսացավ իրական արձագանքն ու լրացումը Հին Կտակարանի վերոհիշյալ իրապատումի: Քրիստոս, որպես երկրորդ Ադամ, եկավ աշխարհ և իր մաքրամաքուր արյամբ լվաց առաջին Ադամի մեղքը: Նա էլ փորձվեց չարից, սակայն հաղթանակող դուրս եկավ և մեծ ուժով ոտնակոխ արեց ու ճզմեց չարի գլուխը՝ հեռու վանելով իրենից այն:

Ահավասիկ, եթե Քրիստոսի նման մեկը վարվեց այդպես, ինչու մենք էլ չփորձենք, թեկուզ մանանեխի հատիկի չափ, նմանվել նրան ու հետևել նրա օրինակին: Ինչու չոգևորվենք ու չգոտեպնդվենք նրա օրինակով և այն ծառայեցնենք աշխարհի ներկա կացության պայմաններում, երբ տակավին քաղաքակիրթ այս դարում կան ազգեր ու պետություններ, որոնց միջև գնալով ավելի խոր արմատներ է գցում նախանձն ու ատելությունը, որից ծնունդ է առնում անհաճո թշնամանքը:

Արբազան պատարագի այս պահին ես ուզում եմ ձեզ հետ միասին Միածնահիմն այս սուրբ տաճարում աղոթել առ Բարձրյալն Աստված, որպեսզի վերանան մեր բոլորի միջից թշնամանք ծնունդ տվող նախանձի սերմերը, որպեսզի Աստուծո բարիքներով գեղեցկացած այս աշխարհում բոլորս ապրենք հառավել երջանիկ ու բարեկամական ջերմ մթնոլորտում:

Թող մեր Տեր Հիսուս Քրիստոսի տևական սերն ու բաղձալի խաղաղությունը ծխարձակի ու տարածվի չորս ծագերը աշխարհի, այժմ և միշտ և հավիտյան ամեն:

ԶԱՏԻՆ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՔՅԱՆ

Մայր տաճար, հունվարի 25-ին, կիրակի

Փ Ա Ռ Ք ՄԵԾԱՐՈ



Ս. ՀԱՏԻՏՅԱՆ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾ ՀԱՅՐԱՊԵՏ ՊՈՆՏՈՍԻ
ՆԵՈԿԵՍԱՐԻԱ ՔԱՂԱՔԻ
(213—270)

ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանրական Եկեղեցու Երկոտասան վարդապետների¹ և Առաքելական հայրերի շարքում² իր մասնավոր տեղն ունի մահ Գրիգորի Պոնտոսի կամ «Գամրաց աշխարհի Նեոկեսարիա քաղաքի»³, որը «հիմա Նիքսար կոչվի»⁴, եպիսկոպոս Սուրբ Գրիգոր Սքանչելագործը՝ հայրը՝ Սուրբ Գրիգոր Աստվածաբանի կամ Նազիազանցու:

Ս. Գրիգոր Սքանչելագործը Գրիգորի Ընդհանրական Եկեղեցու առաքելաշավիղ և սրբակրոն հայրապետներից մեկն է, «մե-

ծաճուշակ սուրբ մը, հույժ հարգված թե՛ Արևելքի և թե՛ Արևմուտքի մեջ»⁵:

Գրիգոր Սքանչելագործը ծնվել է Պոնտոսի Նեոկեսարիա քաղաքում, 213 թվականին. «հեթանոս ծնողաց զաւակ, ի տանէ ազնուականաց տեղւոյն»⁶:

Որպէս մեծահարուստ և ազնվական, քայց հեթանոս ծնողների զավակ, մա ստանում է հելլենիստական բարձր կրթություն, հետևելով իր ծննդավայրում օրենսգիտության և հռետորական արվեստի. «հելլենական վարժիք առ քրիստոնէութեան իմացմունս առաջնորդէր»⁷: Սակայն, «Աստուծո նախախնամությունը իրեն համար տարբեր ասպարեզ մը տնօրինած էր»⁸:

¹ Օրացոյց, 1981, Ս. Էջմիածին, էջ 126:

² «Էջմիածին» ամսագիր, 1979, № Է, էջ 14—23: Ս. Կղևմուս Հոռմազի, Ս. Իգնատիոս Ամտիոքացի՝ Աստուածազգեսց, Ս. Պողիկարպոս Զմյոտնացի:

³ Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյան, Սուրբ և տօնք, Նրուսաղէմ, 1939, էջ 72:

⁴ Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյան, Համաքրիստոնէական սուրբեր, Իսթանպուլ, 1978, էջ 41:

⁵ Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյան, նույնը, էջ 72:

⁶ Լիակատար վարք և վկայարանութիւն սրբոց, հատոր Թ, Վեներտիկ, 1813, էջ 5:

⁷ Նույնը, էջ 7:

⁸ Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյան, նույնը, էջ 41:

Սքանչելագործը ըստ վարքագրական տվյալների, հեթանոսական իր դաստիարակության հետ «շուտով կրթվեցավ քրիստոնեական աստվածաբանության մեջ»⁹, Կեսարիայում և մանավանդ «մեծին վարդապետի» Որիգենեսի մոտ Պաղեստինյան Կեսարիա քաղաքում:

Գրիգորի նախաքրիստոնեական անունը եղել է Թեոդորոս, որը նշանակում է «աստուածապարզ»: Քրիստոնյա դառնալուց և մկրտվելուց հետո նա վերանվանվել է Գրիգոր:

Գրիգորը իր նախապիտան մասնագիտության՝ օրենսգիտության և հռետորական արվեստի մեջ խորանալու համար, ծրագրում է իր եղբորը՝ Սթենատորասի հետ, ապագա եպիսկոպոս՝ Պոնտոսի, մեկնել Փյունիկեի Բերիտոս (Բեյրութ) քաղաքը, երբ իր քույրը, որը կհան էր Պաղեստինի կայսերական կառավարչին, իր երկու եղբայրներին 231 թվականին հրավիրում է ընկերանալ իրեն, միևնույն Պաղեստինյան Կեսարիա քաղաքը, որը պետական, վարչական, տնտեսական ու զինվորական կենտրոն էր Հռոմի, միաժամանակ հելլենիստական ու քրիստոնեական նշանավոր համարձանոթ օջախ:

Բ—Ե դարերում, Հռոմեական կայսրության օրով, Արևելքում հիմնվում են մի շարք աստվածաբանական-քրիստոնեական, բարձրագույն տիպի նշանավոր դպրոցներ, իրենց յուրահատուկ ավանդություններով և ուղղություններով, ինչպիսիք էին Ալեքսանդրիայի, Անտիոքի, Ասորիքի, Կապադովկյան Կեսարիայի դպրոցները:

Սույն դպրոցները հանդիսանում էին քրիստոնեական մտածողության, մշակույթի և արվեստի, Աստվածաշունչի տարբեր մեկնության, ինչպես նաև հերետիկոսության դեմ մղված գաղափարական-փիլիսոփայական հակաճառության կենտրոններ:

Գ դարում քրիստոնեական այդ դպրոցների շարքում, աչքի էր ընկնում նաև Պաղեստինյան Կեսարիայի աստվածաբանական-քրիստոնեական դպրոցը, որը իր ամենափայլուն շրջանը ապրում է Որիգենեսի վերածնունդի օրով:

Այստեղ է, որ Գրիգորը և իր եղբայրը, աշակերտում են Որիգենեսին, 232—238 թվականներին և ստանում իրենց քրիստոնեական, աստվածաբանական ու մեկնողական լուրջ, մասնագիտական կրթությունը:

Հունական անտիկ մշակույթի ուժը օգնում էր, որ քրիստոնեությունը դառնա ոգեկան հզոր ու վերանորոգիչ մի ազդակ, կրոնա-

կան, փիլիսոփայական, ընկերային և նույնիսկ քաղաքական ու տնտեսական գաղափարախոսության բնագավառում:

Հունական, մանավանդ հելլենիստական մշակույթով զարգացած մարդիկ, գոհացում էին գտնում քրիստոնեական գաղափարախոսության մեջ և ընդունում էին այդ նոր կրոնը որպես իրենց իմացական ու հոգեկան հետաքրքրություններն ու որդնումները բավարարող մեծագույն ճշմարտություն, որպես ճշմարիտ ոգեկանություն, բարձր բարոյականություն, մի նոր ու ավելի մարդկային կրոնական մի ըմբռնում, մի նոր կյանքի սկիզբ, որը կոչված էր Քրիստոսով ու Ավետարանով վերանորոգելու, վերափոխելու մարդկային միտքն ու սիրտը¹⁰:

Քրիստոնեությունը այդպիսի ոգեկան ու բարոյական, կենսունակ մի ույծ էր նաև Գրիգոր Սքանչելագործի համար, որը զարգացած հեթանոսությունից, հելլենիստական գաղափարախոսությունից դառնում էր «ի լոյս Աստուած գիտութեան», Որիգենեսի (180—253) դաստիարակության միջոցով: Որիգենեսը հանդիսանում էր քրիստոնեական մտածողության մեծագույն ներկայացուցիչը, որի ուսմունքի հիմնական մտածումն էր, հայրաբանների նման «փիլիսոփայորեն հիմնավորել և արդարացնել քրիստոնեությունը»¹¹:

Որիգենեսը առաջինն էր Եկեղեցու հայրերի և քրիստոնյա մտածողների մեջ, որ «քրիստոնեական աստվածաբանական գիտության հայր դարձավ», սահմանեց եկեղեցական-գիտական աստվածաբանության հիմնական սկզբունքները ու մեթոդը և «դասական, հին գիտությունն ու փիլիսոփայությունը» եկեղեցականացնելու «առաջին վճռական քաղաքական» հաշտեցնելով «գիտությունը քրիստոնեական հավատքի հետ, բարձր քաղաքակրթությունը՝ Ավետարանի հետ, եկեղեցական վարդապետության հողի վրա»¹²:

Որիգենեսի «նշանակությունը չափել անկարելի է... Նա ամենամեծ ազդեցությունն է ունեցել եկեղեցական հայրերի մեջ... Նա

¹⁰ Johannes Quasten, Patrology, the golden age of greek patristic literature, vol. III, էջ 4—6:

¹¹ Գավիթ Անհաղթ, Երկեր, թարգմանությունը, ստաջարանը և ծանոթագրությունները՝ Ս. Ս. Արևշատյանի, Երևան, 1980, էջ 4:

¹² Պրոֆ. Ն. Սագարյան, Հույն-Արևելքի հին եկեղեցական աստվածաբանական գիտությունը յուր ճաղկման շրջանում (IV—V դդ.), ռուսերենից թարգմանությունը՝ Արտակ վարդապետ Սմբատյանի, Վաղարշապատ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1910, էջ 17, 18:

⁹ Թորոմ արքեպիսկոպոս Գուշակյան, նույնը, էջ 72:

ոչ միայն իր ժամանակի ամենամեծ քրիստոնյա գիտնականն էր, այլ ընդհանրապես չկար մեկը ամբողջ աշխարհում, որ հավասարվեր նրան գիտության և աշխատանքի ընդունակության կողմից... Կարծես պողպատից և երկաթից էր կազմված»¹³:

Պաղեստինյան Կեսարիայում, Որիգենեսի աստվածաբանական դպրոցի «ամենատաշին և երախտագետ աշակերտը Գրիգոր Սքանչելագործն էր»¹⁴, որը իր հերթին «կապաղովկիացիներին—Ս. Բարսեղ, Ս. Գրիգոր Նյուսացի, Ս. Գրիգոր Նազիազանցի—քերեց հենց Որիգենեսին մոտ... Բարսեղ Մեծը և Գրիգոր Աստվածաբանը նույնիսկ Որիգենեսի երկերի ամենաընտիր կտորների ժողովածուն՝ Ֆիլոկալիա կազմեցին... Որիգենեսի աստվածաբանության սկզբունքները հանդես էին գալիս իրեն իրենց՝ կապաղովկիացիների մայրենի երկրի աստվածաբանական ավանդությունները»¹⁵:

Որիգենեսի աստվածաբանական դպրոցի և նրա մեծ անձնավորության ազդեցությունը իր դասախոսություններով, աստվածաբանական ուղղությամբ և հանճարի կնիքով, տարածվեց Ալեքսանդրիայից, Պաղեստինյան Կեսարիայից դուրս ամբողջ հունական Արևելքում և Հռոմում:

Պաղեստինյան Կեսարիայում է, որ Գրիգորի և նրա եղբոր հանդիպումը Որիգենեսի հետ, վճռական ու բարերար նշանակություն է ունենում նրանց համար: Այստեղ Որիգենեսը «ազատաբար և անկաշկանդ կոստուցաներ նաև հունական բարձր իմաստասիրությունն ու հոեությունը և անոնք այնքան դրականորեն տպավորվեցան Որիգենեսի խոր հմտությունեն և ուսուցանելու գրավիչ մեթոդեն, որ որոշեցին իրենց ուսմունքը կատարելագործել անոր մոտ, երբ Գրիգորը 20 տարեկան էր»¹⁶:

Այստեղ, Կեսարիայում, երկու եղբայրներն իրենց դասընկեր են ունենում Գ. դարի եկեղեցական նշանավոր պատմիչ Եվսեբիոս Կեսարացուն:

Որիգենեսի մոտ երկու եղբայրների բազմակողմանի ուսուցման և դաստիարակության բարի արդյունքը այն է լինում, որ ուշիմ, ուսումնասուցվող ու լավ նկարագրի տեր երկու եղբայրները 7 տարի աշակերտում են նրան և ուսումնառության ողջ ծրագիրը

ավարտելուց հետո քրիստոնյա են դառնում:

239 թվականին Գրիգորը և նրա եղբայրը վերադառնում են իրենց ծննդավայր Նեոկեսարիա քաղաքը:

Իրենց մեծ ուսուցչին հրաժեշտ տալուց առաջ, Գրիգորը հրապարակային մի բազմամարդ հանդիսության ժամանակ արտասանում է երախտագիտության սրտառուչ, մի հռչակապ, ակադեմիական ճառ, որը հանդիսանում է մեզ հասած քրիստոնեական դաստիարակության, հայրաբանության հնագույն և իմաստալից ներդրումներից մեկը, և որը՝ միաժամանակ արժեքավոր ու կարևոր աղբյուր է մեծ ուսուցչի՝ Որիգենեսի անձնական կյանքի, կենսագրության, ուսուցման և դաստիարակության մասին¹⁷:

Հրաժեշտի այդ հուզաթաթախ ճառ-ուղերձում Գրիգորը ասում է. «Իմ հոգու մեջ բոցավառվեց մի կայծ, և իմ սերը՝ նրա հանդեպ (խոսքը Հիսուսի մասին է), նրա անբացատրելի, սիրելի և սուրբ խոսքի գեղեցկության համար և դեպի նրա քարեկամ և մարգարե այս մարդու հանդեպ (խոսքը Որիգենեսի մասին է):

Խորապես ցնցված այդ բանից, այնուհետև ես լքեցի ամեն բան, որը կապված էր ինձ հետ. աչիներ՝ գործեր, ուսում, նույնիսկ ինձ սիրելի օրենսգիտությունը, ընտանիք և այնտեղ ապրող սիրելիներ:

Մի բան միայն ինձ սիրելի էր, որը հուզում էր ինձ. փիլիսոփայությունը՝ և նրա ուսուցիչը՝ աստվածային այս մարդը»¹⁸ (Որիգենեսը):

Նեոկեսարիա վերադառնալուց հետո Գրիգորը 240 թվականին Ամասիա քաղաքի Ֆադիմոս միտրոպոլիտից եպիսկոպոս է ձեռնադրվում իր ծննդավայրի վրա, իսկ եղբայրը՝ Պոնտոսի եպիսկոպոս էր եղել: Գրիգորը իր ձեռնադրությունից հետո նվիրվում է քարոզչական, հովվական, առաքելական եռանդուն և մախանձահույզ գործունեության:

Գրիգոր Սքանչելագործի վարքագիրը վկայում է, որ 240 թվականին, երբ նա ձեռնադրվում է առաքելական իր գործունեությանը, Նեոկեսարիայում և Պոնտոսում եղել են միայն 17 քրիստոնյաներ, իսկ 273 թվականին, նրա մահվան տարին մնացել էին միայն 17 հեթանոսներ¹⁹:

¹³ Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանց, Ընդհանուր եկեղեցական պատմություն, հատոր առաջին, Ս. Էջմիածին, տպարան Մայր Աթոռ, 1908, էջ 146:

¹⁴ Նույնը, էջ 158:

¹⁵ Պրոֆ. Ն. Սազարդա, նույնը, էջ 37:

¹⁶ Ծնորհք արքեպիսկոպոս Գալուստյան, նույնը, էջ 41—42:

¹⁷ Johannes Quasten, Patrology, vol. II, 1964 էջ 123.

¹⁸ Johannes Quasten, նույնը, էջ 123:

¹⁹ Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյան, նույնը, էջ 72: Ծնորհք արքեպիսկոպոս Գալուստյան, նույնը, էջ 42: Quasten, նույնը, էջ 123:

Գրիգորը համարվում է ողջ Պոնտոսի առաքյալ:

265 թվականին Գրիգոր Սքանչելագործը ներկա է լինում Անտիոքի տեղական ժողովին, որին մասնակցում են նաև երեսուն եպիսկոպոսներ. «Յետ քազում ժամանակաց անցանելոյ դարձեալ բորբոքեցաւ ադանդն Արտիմոնայ, վասն Ամենասուրբ տօնից ալլափոխումն առնել և յաւելուածս կանոնեալ սուրբ ընթերցուածոց, որ ի սուրբ առաքելոցն աւանդեցաւ Եկեղեցւոյ սրբոյ: Վասն որոյ ժողովեալ յԱնտիոք եպիսկոպոսունք ԼԱ (31), սահմանեցին զկանոնս ԻԵ (25)»²⁰:

Անտիոքի տեղական սույն ժողովը քննում և դատաւարտում է Անտիոքի Պողոս Սամոսացու եպիսկոպոսի մոլորությունը, ըստ որի «Քրիստոսը ծնվել է իբրև մարդ և ապա լցվել Լոգոսով, կամքի միությանը և սիրտ մշտնջենավորությանը դարձել մի նրա հետ»²¹:

Սքանչելագործը շուրջ երեսուն տարիներ քարոզչական, հովվական-թեմական, կազմակերպչական գործունեություն ծավալելուց հետո, վախճանվում է 273 թվականին, Մարկոս Ավրելիոս կայսրի օրով (270—275):

Սքանչելագործը կազմակերպում է Պոնտոսի Եկեղեցին, որը դիմանում է Դեկոս կայսրի հալածանքներին և Գոթերի Պոնտոս կատարած արշավանքների ավերածություններին:

Ընդհանուր Եկեղեցու պատմության մեջ և ըստ վարքագրության Գրիգորը անվանվում է Սքանչելագործ հայրապետ. «Յոլով եցոյց զարմանալիս»²²: Նա «Սքանչելագործ կոչված է բազմաթիվ և բազմապիսի հրաշքներուն համար, զորս կատարելու աստվածային շնորհը ունեցավ»²³, «ինչ որ հավաստիք մըն է իր բացառիկ անձնավորության և ժողովրդականության»²⁴ և «աչքի ընկնող մի անձնավորություն, որպես մեծ ուսուցչի (Որիգենեսի) աշակերտը»²⁵:

Մեր Եկեղեցին Գրիգոր Սքանչելագործի հիշատակը կատարում է ամեն տարի, դեկ-

տեմբերին, «Սրբոյն Գրիգորի և Նիկողայոսի Զմիռնիայի սքանչելագործ հայրապետացն» տոնին»²⁶:

Գրիգոր Սքանչելագործի կենսագրության և վարքագրության հիմնական աղբյուրներն են Եվսեբիոս Կեսարացի եկեղեցական պատմիչը, Հերոնիմոսը, իր իսկ գրած ճանի՝ Ե գլուխը, Բարսեղ Կեսարացու նամակները, եկեղեցական մի այլ պատմիչի՝ Ռուֆանոսի արժեքավոր տեղեկությունները:

Ս. Գրիգոր Նյուսացին գրել է նրա վարքը: Կան նաև հունարեն, լատիներեն և ասորերեն ուրիշ կենսագրականներ կամ վարքագրություններ, «բոլորն էլ ոչ պատմական մկարագրով, որոնք մեզ հասել են: Կա նաև Սքանչելագործի հայերեն լեզվով մի վարքը»²⁷:

ԳՐԻԳՈՐ ՍԶԱՆՉԵԼԱԳՈՐԾԻ ՄՍՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱՎԸ

Գրիգոր Սքանչելագործը որպես Եկեղեցու մեծ առաջնորդ, հովիվ և քարոզիչ «գործնականամիտ» կազմակերպիչ, իր առաքելական, քարոզչական փայլուն կարողություններով հանդերձ, համարվում է ավելի «գործի» կամ «գործնականության մարդ», քան թե աստվածաբան, մատենագիր և վարդապետ Եկեղեցու: Այս պատճառով մեծ չէ նրա մատենագրական վաստակը: Սակայն, իր մեծ հոչակը առիթ է հանդիսացել նրան վերագրելու բազմաթիվ գործեր, որոնք գրվել են հետո:

Գրիգոր Սքանչելագործի վարքագրությունը այնուամենայնիվ վկայում է, որ նա «քազում ճառս շարագրեաց լաղազս ողղափառ հաւատոյ և վարոց»²⁸:

Ս. Բարսեղ Կեսարացին իր «Յաղագս Հոգւոյն Սրբոյ» ճառում խոսում է Սքանչելագործի մատենագրական վաստակի մասին. «Ո՛ր դիցուք Գրիգորիս մեծն և զնորա ձայնս. ո՞չ ապաքէն ընդ առաքեալս և ընդ մարգարէս, զայր՝ որ նովին հոգւով նոցա շրջեցաւ»²⁹:

Արևմտյան Եկեղեցու մեծ վարդապետ և վանական Հերոնիմոս Բուստրացին (170—250), որը Աստվածաշունչը թարգմանեց լատիներենի (Վուլգատա), Սքանչելագործին համարում է Ընդհանրական Եկեղեցու «երևելի» հայրապետներից և «եկեղեցական փատենագիրներից» մեկը:

«Գրած է նույնպես ճառեր, որոնցմե ու-

²⁰ Վազգեն Հակոբյան, Կանոնագիրք հայոց, Ա, Երևան, 1964, էջ 203—223 և էջ 587—589:

²¹ Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանց, նույնը, էջ 180: Ներսես վարդապետ Մելիք-Թանգյան, Հայոց եկեղեցական իրավունք, Շուշի, 1908, էջ 207:

²² Լիակատար վարք և վկայաբանություն սրբոց, նույնը, էջ 81:

²³ Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյան, նույնը, էջ 72:

²⁴ Ծնորդք արքեպիսկոպոս Գալուստյան, նույնը, էջ 42:

²⁵ Johannes Quasten, նույնը, էջ 128:

²⁶ Օրացոյց, նույնը, էջ 140:

²⁷ Johannes Quasten, նույնը, էջ 124:

²⁸ Լիակատար վարք և վկայաբանություն սրբոց, նույնը, էջ 81:

²⁹ Նույնը, էջ 82:

կեղարյան թարգմանությանը հայերենի փոխադրված են, «Ի Ծնունդն Քրիստոսի», «Յաւետիս Աստուածածնի», «Ներքողեան ի Ս. Ստեփանոս», «Երկրորդաւն Գլուխը նշուից» և այլն»³⁰:

Աքանջելագործը «ձգած է բազմաթիվ գրական գործեր, որոնց առաջինն է ջատագովություն մը Որիգենի մասին... Ունի նաև քրիստոնէական հիմնական ուսուցումները պատկերող գիրք մը, անհրաժեշտ՝ նորադարձ քրիստոնէից համար: Իր «Թուղթ կանոնական»ը լայն տեղեկություններ կը պարունակէ նախնական Եկեղեցիի սովորություններու մասին: Ունի վերջապէս **Ժողովողի** գրքի մեկնաբանություն մը և Թեոպոմպոս եպիսկոպոսի ուղղյալ նամակ մը: Իր գործերն են 10—12 կտոր թարգմանված են դասական հայերենի»³¹:

Որպէս մատենագրական վաստակ, ինչ մեզ հասել է Գրիգոր Աքանջելագործ հայրապետից, հետապնդում է «գործնական» նպատակ և սերտորեն, օրգանապէս կապված է նրա քարոզչական, հովվական, թեմական-կազմակերպչական աշխատանքների հետ:

Աքանջելագործի գրչին են պատկանում հետևյալ աշխատությունները.

1. Ներքող Որիգենի մասին.

Ինչպէս նշվեց վերևում, Գրիգորը իր սույն առաջին հոլանդապ ներքողը արտասանել է 238-ին, որպէս երախտագիտության հուզիչ խոսք Որիգենի մերկայությանը, երբ իր մեծ ուսուցչապետին հրաժեշտ էր տալիս իր ուսումնառության (232—238) ավարտին, իր ծննդավայրը դառնալու առթիվ: Սույն ներքողը աչքի է ընկնում «իր մեծ զգացումների ջերմությամբ, փայլուն ոճով»:

Ներքողի սկզբում Գրիգորը խոստովանում է, որ ինքը անկարող է ըստ արժանվույն ներկայացնել իր մեծահարգ ուսուցչապետի անձը, նրա ուսուցման և դաստիարակության մեթոդները: Այսուհանդերձ, նախ իր ուղերձ ճառում ամենից առաջ երախտագիտություն է հայտնում «բոլոր բարիքների և շնորհների Պարգևատուն Աստծուն», որ իրեն առիթ է հնարավորություն տվեց աշակերտելու մեծ ուսուցչապետին՝ Որիգենի մասին: Այնուհետև Գրիգորը շնորհակալության խոսք է ուղղում նաև իր պահապան հրեշտակին, որ իր և իր եղբոր քայլերը առաջնորդեց դեպի Պաղեստինյան Կեսարիա: Վերջում շնորհակալության ջերմ

խոսք է ուղղում մանավանդ Որիգենի մասին, որը իր աշակերտների եռանդը վստեց դեպի «սրբազան գիտությունը»:

Գրիգորը իր վերոհիշյալ ներքողյան մեջ միաժամանակ խոսում է հանգամանորեն և մանրամասնությամբ Որիգենի ուսուցման և դաստիարակության արժեքավոր մեթոդների և ուսումնական ծրագրի մասին:

Ներքողյան վերջում Գրիգորը խորունկ ցավ է հայտնում, որ ինքը շուտով թողնելու է Կեսարիան, գրկվելու է Որիգենի շնչից և դասախոսություններից, և խնդրում է իր մեծ ուսուցչապետի օրհնությունն ու աղոթքը:

Աքանջելագործի «Ներքող Որիգենի մասին» աշխատությունը համարվում է «մի կարևոր փաստաթուղթ այս շրջանի քրիստոնէական դաստիարակության պատմության համար»³², ինչպէս նաև իր կենսագրության մասին:

2. Յաղագս հաւատոյ.

Աքանջելագործի սույն ճառը դավանաբանական մեծ նշանակություն ունեցող գրքվածք է: Այն ներկայացնում է նախանիկիական շրջանի Ընդհանրական Եկեղեցու ուղղափառ դավանության «Հաւատոյ Հանգանակ»-ը Ամենատուրք Երրորդության մասին: «Յաղագս հաւատոյ» ճառը գրվել է հավանաբար 264—265 թվականներին, ընդդէմ Անտիոքի Պողոս Սամուստցի եպիսկոպոսի հերետիկոսական վարդապետության:

Ս. Գրիգոր Նյուսացին Աքանջելագործի վերոհիշյալ ճառը մեջ է բերել իր վարքագրության մեջ: Իսկ Ռուֆինուսը այն թարգմանել է լատիներենի: Մեզ է հասել նաև «Յաղագս հաւատոյ» ճառի ասորերեն թարգմանությունը³³:

3. Կանոնական թուղթ.

Գրիգոր Աքանջելագործը իր սույն թուղթը կամ նամակը գրել է 253—254 թվականներին: Նամակը ուղղված է մի անհայտ եպիսկոպոսի, որը համարձակվել էր անպատվել նրան:

251 թվականին Դեկոս կայսրի (249—254) պարտությունից հետո, գերման և ֆրանկ բարբարոս ցեղերը ասպատակում են փոքր Ասիան, Պոնտոսն ու Բյութինիան: Այս շրջանների Եկեղեցին և քրիստոնյաները ծանր ու դաժան օրեր են ապրում: Քրիստոնյաները գերեվարվում են, կանաք՝ բրոնզաբարվում: Ծառերը դաժան հալածանքների տակ և ավերիչ արշավանքների միջոցին ուրանում են իրենց հավատքը, համա-

³⁰ Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյան, նույնը, էջ 72—73:

³¹ Ծնորհք արքեպիսկոպոս Գալուստյան, նույնը, էջ 42:

³² Johannes Quasten, նույնը, էջ 124:

³³ Նույնը, էջ 125:

գործակցում՝ թշնամիների հետ, կատարում՝ հեթանոսական ծանր մեղքեր, մատնություն, զոդություն, սպանություն, անբարոյականություն, կոդուպուտ, կուրքերի երկրպագություն:

Գրիգոր Սքանչելագործի սույն կանոնական թուղթը նվիրված է աշո տխուր իրադարձությունների մեկնաբանմանը և չարիքը Եկեղեցուց և հավատացյալների միջից վերացնելու մտահոգություններին: Նա որպես ճշմարիտ և բարի հովիվ, զգուշացնում է եպիսկոպոսներին և խորհուրդներ է տալիս չարիքը արմատախիլ անելու մասին: Սքանչելագործը խոսում է նաև իր վճռական հաստատման մասին, անմիջապես կարգն ու կանոնը Եկեղեցու ծոցում վերահաստատելու համար: Միաժամանակ, նա թելադրում է լինել զգույշ, համբերատար, գույք և մարդասիրություն, մեղմություն և ներողամտություն հանդես բերել հանցավորների նկատմամբ:

Սքանչելագործի թուղթը բաղկանում է 11 գլուխներից և մտել է Հույն Եկեղեցու **Կանոնական Գրքի** մեջ, ստացել է կանոնական հեղինակություն, գնահատվում է որպես հայրապետական իշխանության, եկեղեցական կարգապահության պատմության կարևոր մի փաստաթուղթ³⁴:

4. Սողոմոնի «Էկեղեսիաստեա» կամ «Ժողովող» գրքի մեկնությունը³⁵.

Գրիգոր Սքանչելագործը իր սույն աշխատությունը թարգմանել է Աստվածաշնչի «Յոթանասանից» հունարեն թարգմանության օրինակի վրայից, ընտիր և մաքուր հունարենով, վերացնելով եբրայաբանությունները:

Սքանչելագործը համարվում է առաջին հայրապետը, որ ձեռնարկել է թարգմանել Հին Կտակարանի աստվածաշնչական մի բնագիր, իր ժամանակի ընտիր հունարենով, որպեսզի իր թարգմանությունն ու մեկնությունը հասկանալի լինեն հույն, քրիստոնյա հավատացյալներին:

5. Ճառ «Յաղագս Աստուծոյ անչարչարելիութեանն և չարչարելիութեանն».

Գրիգոր Սքանչելագործի սույն աստվածաբանական կարևոր աշխատությունը հասցեագրված է մի ում Թեոպոմպոս եպիսկոպոսի: Դա մի երկախություն է, դիպուկ, հեղինակի և վերոհիշյալ եպիսկոպոսի միջև, Աստուծո անչարչարելիության և չարչարելիության մասին: Սույն երկը մեզ հասել է միայն ասորերեն թարգմանությամբ:

Սքանչելագործը շեշտում է, որ Աստված եմթական լինել չի կարող տառապանքի: Նա ազատ է և ամենագոր իր որոշումների մեջ:

Մարդկության սիրուն, «Մինն ի յերրորդութենէ»՝ Որդին Աստծու, իր կամավոր չարչարանքով հաղթահարեց տառապանքն ու չարչարանքը և հաղթեց մահվան, ապացուցելով իր անչարչարելի բնությունը և իր աշո կամավոր չարչարանքի միջոցով փրկեց մարդկությունը:

Գրիգոր Սքանչելագործի ամունն ու հեղինակությունը այնքան մեծ են եղել, որ հաջորդ դարերում նրան են վերագրվել մի շարք այլ գործեր, որոնք անհարազատ են համարվել եկեղեցական քննադատության կողմից³⁶:

**ԳՐԻԳՈՐ ՍԶԱՆՉԵԼԱԳՈՐԾԻ
ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԻ ՀԱՅԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Սքանչելագործի մատենագրական վաստակի «հայկական թարգմանությունը հավանաբար ի հիմնարկ դարու եղած են»³⁷:

Ֆրանսիացի հայր Ժան Մարտինը 1883 թվականին հրատարակել է Սքանչելագործի հինգ ճառերը հայերեն լեզվով³⁸, որոնցից ոչ մեկի բնագիրը չի պահպանվել հունարեն լեզվով և կամ այլ թարգմանությամբ:

Այդ հինգ ճառերն են.

1. Խօսք ի Ծնունդն Փրկչի, «խորհուրդ մեծ և սքանչելի տեսանենք յայսմ աւուրք եղբարք»:

2. Յաղագս Մարդեղութեան. հանն Աստուած մարմնացեալ յերկրի երևեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ, կրեալ ճշմարտապէս զմերս մարդկապէս:

3. Յաւեսիս Աստուածածնի. Այսօր հրեշտակական դասուք օրհներգութիւնք պայծառաման և փայլումն զայստեան Քրիստոսի զհաւատացելովքս հրճուի:

4. Ներքողեան ի Սուրբ Ստեփանոս: Հրաշափառ և ծայրագոյն աստուածայնոցն

³⁶ Տես այս մասին՝ Migne, Patrologia graeca հատորում 46, էջ 898—958, 1101—1108, հատոր 6, էջ 988—1018, հատոր 10, էջ 987—1048, 1155—1170, հատոր 37, էջ 388—386: Johannes Quasten, Գույնը, էջ 127—128, Encyclopedia Americana, vol. 18, էջ 458:

³⁷ Մատենադարան հայկական թարգմանութեանց Գրքանոց (դար Դ—ԺԳ), Վնեստիկ, Մխիթարյան տպարան, 1889, էջ 374: Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյան, Գույնը, էջ 72—73:

³⁸ Մատենադարան հայկական թարգմանութեանց Գրքանոց, Գույնը, էջ 375:

³⁴ Գույնը, էջ 126:

³⁵ Աստուածաշունչ, Կ. Պոլիս, 1895, էջ 688—696:

փառաց արժանացեալ ու վստահական Ստեփաննոս...

5. Գովեստ ի Սուրբ Կոյսն Մարիամ. Զամենայն տոնս զօրհներգութիւնս պարտ է մեզ որպէս զողջակեզս մատուցանել Աստուծոյ. և նախ քան զամենայն զանեսարանութիւն Սրբոյ Աստուածածնին զորախ լեր Բերկրեալն. «Սույն ճառի «Հայկական բնագիրն նախապատիւ է քան զյոյնն, որ մեր ձեռքն հասած է»³⁹:

Սքանչեղագործի մատենագրական վաստակի մէջ հիշվում են նաև հայերեն հետևյալ ճառերի թարգմանությունները.

6. Երկուտասան ճգովք ընդդէմ ամենայն հերձուածողաց. եթէ կարծեօք որ կամ կերպարանօք ասէ զՔրիստոս յաշխարհի, և ոչ խոստովանի զնա մարմնով եկեալ՝ որպէս և գրեալ է, ճգովեալ եղիցի:

7. Սրբոյն Գրիգորի Սքանչեղագործի, լուսաւորեալ, Երուսաղէմ, զի հասեալ է լոյս քո... քեզ եկեղեցի հեթանոսաց մատուցանեմ ընծայաբերութիւն:

8. Նորին՝ «Էր Աստուած, և եղև մարդ, ոչ հեռացեալ ի բնութենէն, այլ որ էրն՝ նոյն եկաց անփոփոխելի և անալլալելի:

9. Նոյնի՝ խոստովանութիւն հաւատոց աղօթաբար. Մի Աստուած Հայր Բանին⁴⁰: Երևանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Զեռագրաց Մատենադարանում պահվում են Սքանչեղագործի մատենագրական վաստակի հայերեն թարգմանությունները, ըստ ձեռագրերի հետևյալ համարների.

Յուցակ Զեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատոր Ա, Երևան, 1965 թ.:

403. Ժողովածու, կազմված Հաշտերխան, 1781—1782 թվականներին, գրիչ՝ և ստացող Աքրահամ Դավթյան: Ժողովածուում հայ և հույն եկեղեցական հայրերի ճառերի հետ կա նաև Գրիգոր Սքանչեղագործի Ճառը (հատված) «Ի յարութիւնն Քրիստոսի» վերնագրով: Յուցակ, էջ 313:

578. Ժողովածու, կազմված հավանաբար Տաթևում, 1421 թվականին, գրիչ՝ Թովմա (քահանա) Կաֆայեցի: Ժողովածուում կա նաև Գրիգոր Սքանչեղագործի «Ընդդէմ բաժանողաց» ճառը: Յուցակ, էջ 351:

716. Ժողովածու, Ճառք և խրատ, նաև Գրիգոր Սքանչեղագործի: Յուցակ, էջ 390:

795. Ժողովածու, ուր կա Գրիգոր Սքանչեղագործի «Ճառ Ծննդեան», Յուցակ, էջ 412:

866. Ժառընտիր, գրիչ՝ Ստեփանոս, «Ճառք» Գրիգոր Աստվածաբանի, Ոսկեբե-

րանի և Գրիգոր Սքանչեղագործի: Յուցակ, էջ 428:

993. Ժառընտիր, գրիչ՝ Մատթեոս, ծաղկող՝ Եսայի. «Ճառք, Խրատք» Լուսավորչի, Գրիգոր Աստվածաբանի, Գրիգոր Սքանչեղագործի: Յուցակ, էջ 454:

996. Ժառընտիր, գրիչ, ծաղկող՝ Ռհանէս միայնակեաց, Ճառք, Գրիգոր Աստվածաբանի, Նյուսացի, Գրիգոր Սքանչեղագործի, Աթանասի, Բարսեղի և այլն: Յուցակ, էջ 456:

1523. Ժառընտիր, գրիչ՝ Յովանէս, Աւետ, Գրիգոր, 1668 թ., «Ճառք, խրատք, ներբողք» Լուսավորչի, Նյուսացու, Աստվածաբանի, Ոսկեբերանի, Սքանչեղագործի: Յուցակ, էջ 574:

1524. Ժառընտիր, 1401, վարգ, գրիչ՝ Աւետիս տարկաւագ, Յովանէս քահանա, Յովանէս կր: «Ճառք, խրատք, ներբողք», Ոսկեբերանի, Եփրեմի, Եպիփանի և Սքանչեղագործի: Յուցակ, էջ 575:

1798. Ժողովածու, «Ճառք, քարոզք» Բարսեղի, Աստվածաբանի, Պրոկլի, Ոսկեբերանի, Սքանչեղագործի: Յուցակ, էջ 643:

2389. Ժողովածու, 1643, էջմիածին, «Ներբող առ Աստուածածնին» Գրիգոր Սքանչեղագործի: Յուցակ, էջ 793:

2786. Ժողովածու, «Ճառք» Պրոկլի, Աթանասի, Սքանչեղագործի, Ոսկեբերանի: Յուցակ, էջ 876:

2854. Ժողովածու, գրիչ՝ Պետրոս Թիֆլիսեցի, «Քարոզք, ճառք», Յովհաննէս Երզնկացու, Մատթեոս Զողայեցու, Առաքել Սյունեցու, Գրիգոր Լուսավորչի, Գրիգոր Սքանչեղագործի: Յուցակ, էջ 889:

3192. Ժողովածու, գրիչ՝ Մկրտիչ, «Վկայութիւնք վասն Քրիստոսի», Ոսկեբերանի, Պրոկլի, Կորնել Ալեքսանդրացու, Եփրեմի, Սքանչեղագործի: Յուցակ, էջ 960:

3275. Ժողովածու, 1414 թ. Կապուսի վանք (Երզնկա), գրիչ՝ Մաղաքիա Բաբերթացի, «Վարք Գրիգորի Սքանչեղագործի»: Յուցակ, էջ 977:

3329. Ժողովածու, 1729 թ. գրիչ՝ Յովհաննէս Էրեց, «Ճառք» Աթանասի և Գրիգոր Սքանչեղագործի: Յուցակ, էջ 990:

3651. Ժողովածու, 1315 թ. 1615 թ. Ս. Կարապետի վանք (Տարոն), գրիչ՝ Առաքել աբեղա, Աքրահամ, Մկրտիչ քահանա «Դաւանութիւնք» Եփրեմի, Լուսավորչի, Նյուսացու, Աստվածաբանի, Սքանչեղագործի: Յուցակ, էջ 1057:

4189. Տօնապատճառ, 1267 թ. Հաղպատ, գրիչ՝ Յովսէփ, «Տօնապատճառ, ճառք» Եփրեմի, Գրիգոր Սքանչեղագործի: Յուցակ, էջ 1156:

4207. Ժողովածու, 1284 թ. Ատանայ, գրիչ՝ Կոստանդին Քոտաթ. «Բան հաւա-

³⁹ Նույնը, էջ 376:

⁴⁰ Նույնը, էջ 374—378:

տոյ» Դիոնեսիոս Արիսպագացի, Եփրեմ, Լուսավորիչ, Հիպպոլիտ Բուտրացի, Գրիգոր Սքանչելագործ: Ցուցակ, էջ 1170:

4670. Ճառքնախիթ, 1401 թ. Ոստան, գրիչ և ծաղկող՝ Ծերուն: «Ճառք, խրատք, ներբողեանք», Եփրեմ, Եպիփան, Պրոկո, Սքանչելագործ: Ցուցակ, էջ 1258:

4709. Ճառքնախիթ, 1344 թ. գրիչ՝ Յովանես Դեոսկորոս, «Ճառք, խրատք, ներբողեանք», Եփրեմ, Եպիփան, Աթանասի, Սքանչելագործ: Ցուցակ, էջ 1268:

4802. Ճառքնախիթ, 1404-ից հետո, Տշող (Ռշտունիք), գրիչ՝ Ստեփանոս սրկ., «Ճառք, խրատք, ներբողեանք» Պրոկո, Եփրեմ, Եպիփան, Աթանասի, Նյուսացու, Գրիգոր Սքանչելագործ: Ցուցակ, էջ 1290:

4869. Ճառքնախիթ, 1482 թ. Կոտուց, գրիչ՝ Յովհաննես քհ., ծաղկող՝ Մինաս կր. «Ճառք, խրատք, ներբողեանք» Պրոկո, Եփրեմ, Աթանասի, Սքանչելագործ: Ցուցակ, էջ 1305:

4929. Ճառքնախիթ, ԺԵ դ., գրիչ՝ Բարսեղ սարկ., «Ճառք» Գրիգոր Սքանչելագործի, Ոսկեբերանի: Ցուցակ, էջ 1317:

Այնուհետև Ցուցակ Զեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատոր Բ, Երեվան, 1970 թ.:

5406. Ճառքնախիթ, ԺԵ դ., գրիչ՝ Խաչատուր քհ., «Ճառք, խրատք, ներբողեանք» Ոսկեբերանի, Եփրեմ, Սքանչելագործ: Ցուցակ, էջ 100:

5244. Ճառք Պրոկոի ու Գրիգոր Սքանչելագործի: Ցուցակ, էջ 86:

7170. Բանք խրատականք, ԺԵ դ., Ոսկեբերանի, Կյուրեղի, Կեսարացու, Աստվածաբանի, Սքանչելագործ: Ցուցակ, էջ 475:

7439. Ճառքնախիթ, 1725—1729, Երուսաղեմ, Կ. Պոլիս, գրիչ՝ Մարտիրոս, «Ճառք, ներբողեանք» Աթանասի, Եփրեմ, Ոսկեբերանի, Աստվածաբանի, Պրոկո, Սքանչելագործ: Ցուցակ, էջ 544:

7729. Ճառքնախիթ (Մշոյ) 1200—1202 թ. Աագ վանք (Երզնկա), գրիչ՝ Վարդան քհ. Կարենցի, ծաղկող՝ Ստեփանոս, «Ճառք, ներբողեանք» Ոսկեբերանի, Կեսարացու, Նյուսացու, Սքանչելագործ: Ցուցակ, էջ 598:

8467. Ժողովածու, 1626—1629 թթ. Իլով, գրիչ՝ Եսայի Սեբաստացի, Դուկաս, անանուն, «Բանք հաւատոյ», Լուսավորիչ, Դիոնիսիոս Արիսպագացու, Եփրեմ, Հիպպոլիտի, Գրիգոր Սքանչելագործ: Ցուցակ, էջ 751:

Եկեղեցական իրավունքի ընդհանուր աղբյուրների մեջ մտնում են նաև Եկեղեցու տասներեք հայրերի և հայրապետների սահմանած կանոնները, որոնք ընդունվում

են նաև Հայ Եկեղեցու կողմից: Դրանք են Աթանասի, Բարսեղի, Գրիգոր Աստվածաբանի, Գրիգոր Նյուսացու, Կյուրեղ Ալեքսանդրացու, Հովհան Ոսկեբերանի, Եպիփանի, Եփրեմի և ուրիշների կանոնները⁴¹:

Գրիգոր Սքանչելագործին ևս վերագրվում են 12 կանոններ, գերման և ֆրանկ բարբարոս ցեղերի Պոնտոս կատարած «արշավանքների ժամանակ պատահած զանազան հանցանքների վերաբերյալ»⁴²:

Սքանչելագործի վերագրված այդ 12 կանոնները քաղված են նրա նշանավոր «Կանոնական ամսակներ»-ից կամ «Թուրթ կանոնական»-ից, որի մասին խոսվեց վերելում⁴³:

Այդ 12 կանոններից 11-ը վերաբերվում են բարբարոսների արշավանքների պատճառով Եկեղեցու և հավատացյալների ծոցում պատահած անկարգությունների առաջը առնելուն: 12-րդ կանոնը սահմանում է հալածանքներից հետո կրկին Եկեղեցու գիրկը վերադարձողների վրա ապաշխարություն սահմանելու կարգին և որոշում է «ապաշխարության տեսակները»⁴⁴:

Սքանչելագործի մատենագրական վաստակի հայերեն թարգմանության հատվածներ կան նաև «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ Եկեղեցոյ», Ս. Էջմիածին, տպարան Մայր Աթոռոյ 1914 աշխատության մեջ, ըստ հետևյալների.

1. Գրիգոր Սքանչելագործի՝ Յաղագս հաւատոյ ի սուրբ Երրորդութիւն, էջ 18:

2. Ս. Գրիգորի Սքանչելագործի՝ Հաւատամք, նորին՝ Յաղագս Երրորդութեանն, մեկնութիւն հաւատոյ, ճառք ԺԲ գլխոց նոյնից և մեկնութիւն, էջ 71—78: Գրիգոր Նյուսացին վկայում է, որ Սքանչելագործի «Հաւատամք»-ը՝ էջ 71, գործածվում էր Կապադովկյան Կեսարիայում, որպէս նորահաւատների «Հաւատոյ հանգանակ»-ի հիմքը, մինչև իր ժամանակները⁴⁵:

Սքանչելագործի մատենագրական վաստակի հայերեն թարգմանությունների տպագրության մասին տես «Արարատ», 1895, ապրիլ, էջ 111, սեպտեմբեր, էջ 366: Նույնը, 1896, փետրվար, էջ 60: Անգլիացի պրոֆ. Կոնիքերը 1896-ին անգլերենի թարգմանելով հրատարակել է «Յորժամ յիշեմ

⁴¹ Վազգեն Հակոբյան, Երևան, էջ 491—500, 741—742, հատոր Բ, 1971, էջ 474—475: Հայոց եկեղեցական իրավունքը, Երևան, էջ 233—253:

⁴² Հայոց եկեղեցական իրավունքը, Երևան, էջ 251:

⁴³ Encyclopedia Americana, Երևան, էջ 458:

⁴⁴ Հայոց եկեղեցական իրավունքը, Երևան, էջ 251:

⁴⁵ Պրոֆ. Ն. Մազարյան, Երևան, էջ 29:

զեայի ստուգանելն» Աքանչեղագործի ճառը⁴⁶:

«Տիմոթեոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի» աշխատության հայերեն թարգմանության մեջ (Ս. Էջմիածին, 1908) Աքանչեղագործի մատենագրական վաստակի հայերեն թարգմանությունից կան հետևյալները.

1. Գրիգորի Աքանչեղագործի ի Բանէն որ յաղագս յարութեան, էջ 19—20. «Եւ ստեպ ստեպ լընթիս կոչիր. և յերեսս ամենայն մարդկութեան ուտէ և ըմպէ, ոչ պատրելով զնոսա... նորին՝ յաղագս մարմնատրութեան և հաւատոյ, ըստ մասանց, էջ 19—21:

2. Պիտատութիւն Գրիգոր Աքանչեղագործի էջ 60. «Եթ՝ որ ասէ այլ քան զլատեանս Որդի Աստուծոյ, և այլ ի վերջինս,

և ո՛չ խառտվանի զնոյն նախալստենական, զնոյն առ վերջնովք, որպէս գրեալ է, նզովեցի:

3. Պիտատութիւն Նեոկեսարիա, ըստ մասին յաղագս հաւատոյ, էջ 92. «Եւ է Աստուած ճշմարիտ, անմարմին ի մարմնի երեւեալ կատարեալ ճշմարտութեամբ և աստուածային կատարելութեամբ. ո՛չ երկուս դէմս և ո՛չ երկուս բնութիւնս...


4. Պիտատութիւն Գրիգորի Նեոկեսարեայ, էջ 141—142. «Եթ՝ որ ասէ այլ ախտակրեալն և այլ ոչ ախտակրեալն, և ոչ խառտվանի զնոյն զանխախտ Աստուածն Բան մարմնով իրով ախտակրեալ, որպէս գրեալ է, նզով եղիցի»:

Ինչպէս նշվեց, մեր Եկեղեցին Գրիգոր Աքանչեղագործի հիշատակը կատարում է ամեն տարի դեկտեմբերի 5-ին, «Սրբոյն Գրիգորի և Նիկողայոս Զմիտնիայի Աքանչեղագործ հայրապետացն» տոնին:

Հույն և լատին Եկեղեցիները Գրիգոր Աքանչեղագործի տոնը կատարում են նոյեմբերի 17-ին:

⁴⁶ Կնիք հաւատոյ, նույնը, էջ XXXVIII: Տես դարձեալ «Կնիք հաւատոյ», Աքանչեղագործի ճառերի հայերեն թարգմանության մասին, ըստ մեր ձեռագրերի:





ԱՐԱՄ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

ԱՆՁԵՌԱԳՈՐԾ ԴԱՍՏԱՌԱԿԸ ԱՐԱԲ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԷԶԵՐՈՒՄ

Միջնադարյան ալլախեզու պատմագրության մեջ հիշվում է մի հետաքրքրական իրադարձություն՝ Քրիստոսի անձեռագործ դաստառակի Եդեսիայից տարվելը Կոստանդնուպոլիս, որը խնդրել էր Բյուզանդիայի կայսր Ռոմանոս Ա Լեկապենոսը (920—944) արաբներից, խոստանալով փոխարենը ազատ արձակել մի խումբ մահմեդական գերիների: 944 թվականին անձեռագործ դաստառակը, իրոք, ուղարկվեց Կոստանդնուպոլիս, և գերիների մի խումբ ազատ արձակվեց:

Այս պատմական իրադարձությունը այլալեզու աղբյուրներում քննելուց առաջ, նախ հետադարձ ակնարկ անենք պատմիչների՝ անձեռագործ դաստառակի մասին հաղորդած տեղեկություններին:

Անձեռագործ դաստառակի մասին խոսվում է Եդեսիայի Աբգար թագավորի՝ Քրիստոսին ուղարկած նամակի և նրա պատասխանի առթիվ: Առաջին անգամ այս մասին հիշվում է ասորական և հունական աղբյուրներում: Դ դարի մատենագիր Եվսեբիոս Կեսարացին գրում է.

«Եւ Աբգար թագաւոր որ ազգաց անդրագոյն քան զԵփրատ իջխեր քաջութեամբ, չարաչար ցաւովք հիւանդութեան վարակեալ ի մարմին իւր և անյոյս ի զօրութենէ մարդկեղէն արուեստից, իբրև լուաւ զանուն Յիսուսի և վասն զօրութեանցն զոր գործէր նա վկայեալ հոշակէր հասարակ առ ամենայն մարդիկ արձակեաց առ նա

ի ձեռն ծառայից իւրոց աղաչաւորս և նա մականի, գալ թժկել զնա ի հիւանդութենէ իւրմէ: Իսկ Փրկիչն մեր ոչ անալով կոչոյն քայց արժանի արար զնա թղթոյ յորում խոստանայր առաքել զմի ոք յաշակերտաց իւրոց թժկել զհիւանդութիւն նորա և տալ նա և ամենայն մերձակայից նորա կեանս և ոչ յամեաց կատարումն խոստմանն»¹: Սակայն այստեղ խոսք չկա դաստառակի մասին:

Այս նույնը կրկնվում է նրան նախորդող ասորի մատենագիր Լաբուրնայի (Ղերութնայ) թղթում, ուր ավելացվում է.

«Եւ լուեալ զայս ամենայն Անան՝ զոր ասաց ցնա Յիսուս, առեալ նկարեաց զպատկերն Յիսուսի ընտիր դեղովք, քանզի արուեստաւոր թագաւորին էր. և քերեալ մատոյց Աբգարու թագաւորին տեսոն իւրում: Եւ իբրև ետես Աբգար թագաւոր զպատկերն Յիսուսի ընկալաւ զնա մեծաւ ուրախութեամբ և եղ զնա պատուով ի սենեկի իւրում յապարանս իւր»²:

Այստեղ արդեն խոսվում է տերունական պատկերի մասին, սակայն նրա հեղինակը Աբգար թագավորի ուղարկած Անանիան է, որը եղել է նկարիչ:

Հայ պատմիչներից առաջինը, որ խոսում

¹ Եւսեբիոսի Կեսարացու Պատմութիւն Եկեղեցու, Վենետիկ, 1877, էջ 80:

² Լաբուրնայի դիւանագիր դարի Եդեսիոյ թուղթ Աբգարու, Վենետիկ, 1868, էջ 6:

է Արգարի անմակագրության մասին, Մովսէս Խորենացին է: Պատմության երկրորդ գրքի ԼԱ գլխում (Թուղթ Արգարու առ Փրկչին) պատմահայրը տալիս է Արգարի անմակի պատճենը, ապա ԼԲ գլխի (Պատմական թղթոյն Արգարու, զոր գրեաց Թովմաս առաքեալ հրամանաւ Փրկչին) վերջում նշում է.

«Ձայս թուղթ երէր Անան սուրհանդակ Արգարու, ընդ որում և զկենդանագրութիւն փրկչական պատկերին, որ կայ յԵդեսացոց քաղաքին մինչև ցայսօր ժամանակի»³:

Հայ մատենագրության մեջ «Վարք սրբոյն Արգարու թագաւորին» գրվածքի էջերում արդեն հատակորեն նկարագրված է դաստառակը.

«Ապա ի գուն գործել հրեշտակաց Արգարու գէջ՝ զպատկեր Փրկչին առնուլ ի ձեռն պատկերահանի իբրև ի դերև ելին ի խորհրդոց իրեանց զի ոչ կարէր նկարիչն առնուլ ի իւր զճշգրիտ մանութիւն Տաւոն գթացաւ ի նորա Յիսուս ծածկագէտն ամենայնի և առեալ դաստառակ մի սուրբ եղ ի վերայ աստուածային երեսաց իրոց և տպատրեալ ի նմին զկենդանագիր իւր երկըրպագելի ետ նոցա ըստ փափաքանաց Արգարու հանդերձ թղթովն»⁴:

Ահա այս տեղեկությունները գտնում ենք թե՛ հայ, թե՛ բյուզանդացի⁵ մատենագիրների մոտ ամբողջ միջնադարում:

Դարեր շարունակ անձեռագործ դաստառակը մնում է Եդեսիայի եկեղեցում:

Բանն այն է, որ Բյուզանդիան է—Թ դարերում արաբական խալիֆայության ճնշման նկատմամբ պաշտպանողական դիրքում գտնվելուց հետո, Թ դարի երկրորդ կեսում, Մակեդոնական կամ հայկական հարստության օրոք (867—959), սկսեց ետ մղել արաբական զորքերը Փոքր Ասիայի արևելյան այն հատվածից, որն արաբական խալիֆայության սահմանային գոտին (իկլիմ ալ-սուլուր) էր կազմում: Դա ընդգրկում էր Փոքր Հայքը, Եփրատացիքը և Կիլիկիան: Արքայանների թուլացումից (860-ական թթ.) հետո մայս Եգիպտոսի Թուլունիներն իրենց ձեռքը վերցրին սահմանային գոտու պաշտպանությունը, ապա Հալեպի Համդանյանները, որոնցից հատկապես հայտնի էր Սալֆ ալ-Դաուլան: Այս երկու պետություններն էլ ձևականորեն ըն-

դունում էին Արքայանների գերագահությունը:

Երկարատև պայքարից հետո հույները 934 թվականին նվաճեցին արաբական սահմանային գոտու երկու գլխավոր քաղաքներից մեկը՝ Մալաթիան (Մելիտին): Սալֆ ալ-Դաուլան հակահարված տվեց և 940 թվականին, մտնելով Հալապուսի հարավ արևմտյան գավառները, դիմեց դեպի արևմուտք: 942-ին բյուզանդացիք հարձակման անցան և հաասն մի կողմից Հալեպի հյուսիսային կողմերը, մյուս կողմից դոմեստիկոս Հովհան Կուրկուսար (Հովհաննես Գուրգեն) մոտավորապես 80 հազարանոց զորքով հասավ Մեծ Հայքի Այծնիք մահանգը, որը Համդանյանների ձեռքում էր գտնվում, գրավեց Արգն, Նիքիերտ (Մայաֆարիկին), Ամիդ քաղաքները, ապա դիմեց Վերին Միջագետք ու պաշարեց Դարան ու Մծքինը: Առավել առաջ խաղաղով բյուզանդական զորքը 943 թվականին պաշարեց Եդեսիան, և ահա այստեղ էր, որ հույներն առաջարկեցին նեղ փնակում գտնվող Եդեսիայի կառավարչին (Համդանյաններին ենթակա), որ իրենց հանձնվի անձեռագործ դաստառակը: Իրոք 944 թվականին դաստառակը հանձնվեց հույներին և տարվեց Կոստանդնուպոլիս:

Այս դեպքերի առաջին և հավաստի աղբյուրը բյուզանդացի կայսր պատմագիր Կոստանդին Ծիրանածնի «Քրիստոսի անձեռագործ պատկերի մասին» հակիրճ զրբվածքն է: Պատմվում է, թե ինչպես Եդեսիայի անբուժելի հիվանդությամբ տառապող Արգար թագավորը (տուպարբեքը) իր ծառա Անանիայի միջոցով իմանում է Քրիստոսի հրաշագործության մասին և գրում նրան մի նամակ (որը նույնությամբ համապատասխանում է Մովսէս Խորենացու հիշած անմակի բնագրին): Երբ Անանիան եկավ, «Փրկչին ահա լվաց դեմքը, ապա դեմքի խոնավությունը չորացրեց իրեն տրված վարշամակով, որի վրա գերբնականորեն, աստվածային նախախնամությամբ արտատպվեց իր դիմապատկերը»: Անանիան վարշամակն ու պատասխան նամակը տարավ-հանձնեց Արգարին:

Վերջապես Ծիրանածնին անցնում է Ժ դարի դեպքերի շարադրանքին. «Հռոմայեցիների պետության տեր Ռոմանոսը ջանք էր թափում, որ ինքն արժանանա դրան և հարստացնի մայրաքաղաքը: Այդ նպատա-

³ Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1913, էջ 150:

⁴ Լիսկատար վարք և վկայաբանութիւն սրբոց, Ժ, Վնետիկ, 1814, էջ 149:

⁵ Յիսուսի Քրիստոսի ալեկալ պատկերների մասին (թարգմ. Վ. Վ. Բ.) «Արարատ», Վաղարշապատ, 1877, էջ 325—330:

⁶ A. A. Vasiliev, Byzance et les Arabes, t. 11, 1re partie, La dynastie Macédonienne, Bruxelles, 1968, p. 295—296.

G. Le Strange, The Lands of the Eastern Caliphate, Cambridge, 1905, p. 103—104.

կով նա ստեպ-ստեպ դիմում էր Եդեսիա և խնդրում այն, ինչպես նաև Տիրոջ ինքնագիրն անակը, խոստանալով դրանց փոխարեն տալ մինչև երկու հարյուր (ոսգմագերի) սառակինոս և տասներկու հազար մաքուր արծաթ: Բայց Եդեսացիք պատասխանեցին, թե իրենց համար ձեռնտու չէ սեփական քաղաքի պահակն ու պահապանը փոխանակել արծաթով և մահկանացու մարդկանցով:

Նա նորից խնդրեց նրանց, բայց բազմիցս անգամ մերժում ստացավ: Վերջապես աշխարհի արարչագործության վեց հազար չորս հարյուր հիսուներկու տարին (944) Եդեսիայի ամիրան դիմեց կայսեր, պահանջելով ոսկե կնիքով հաստատված վավերագիր այն մասին, որ հոռմայեցիների զորքերը թշնամական նպատակներով չեն դիմի հետևյալ չորս քաղաքների վրա, այն է Ռոհայի (քարքարոս լեզվով այդպես է կոչվում Եդեսիան), Խառանի, Սարատի և Սամոսատի, ավարի չեն տա այդ (քաղաքների) արտերը, չեն գերեվարի նրա բնակիչներին: (Պահանջեց) նաև ազատ արձակել և իրեն ուղարկել իր ցեղակից երկու հարյուր սառակինոսներին՝ առաջարկված արծաթով հանդերձ, որոնց դիմաց ինքը խոստանում է տալ խնդրված պատկերը և Քրիստոսի նամակը⁷:

Կայսրը համաձայնեց, և սառակինոսների պետը, հակառակ եդեսացիների՝ հատկապես քրիստոնյաների դիմադրությանը, քաղաքից դուրս հանեց դաստառակն ու նամակը: Դրանք փոխադրելու պատիվը վիճակվել էր Սամոսատի Աբրահամ եպիսկոպոսին:

Վերջապես օգոստոս տասնհինգին սրբությունները հասցվեցին Կոստանդնուպոլիս և ամփոփվեցին Ս. Աստվածածնի տաճարում, մի տուփի մեջ: Ապա տուփը կայսերական նավով տարան պալատ և այնտեղ ամփոփեցին Փարոս կոչված տաճարում: Հաջորդ օրը, օգոստոս տասնվեցին, սաղմոսերգությանը ու տաղերգությանը նորից մտան կայսերական նավը, գրեթե ամբողջ քաղաքի ավիով թիավարեցին, որպեսզի սրբություններն աչպիսով փրկեն քաղաքը: Արևմտյան պարսպի կողմում իջան, և ահա կայսրերը, ծերակուտականները, պատրիարքը համայն եկեղեցու կազմով հետիոտն տարան դաստառակն ու նամակը, որպես նոր տապանակ, և Ոսկե դռնից մտան քաղաքը: Վերջապես թափորը հասավ Աստվածային իմաստության (Ս. Սոփիա) տաճարը և այնտեղ ամփոփեցին

սրբությունները: Ապա թափորը նորից դուրս եկավ և ուղղվեց կայսերական պալատը, և գահի վրա ամփոփեցին դաստառակը: Վերջապես այն ամփոփվեց վերոհիշյալ Փարոսի տաճարում⁸:

Հետաքրքրական է, որ անձեռագործ դաստառակի տեղափոխումը Եդեսիայից Կոստանդնուպոլիս իր արձագանքն է գտել արաբ պատմագրության էջերում:

Առաջին անգամ հիշում է մահմեդական արաբ պատմիչ Մասուդին (մեռ. 956), որն այդ դեպքերին ժամանակակից է, և վարչամակի⁹ փոխադրման դեպքը դնում է 332 (943—944) թվականին: Պատմելով Բյուզանդիայի կայսրերի մասին նա գրում է Հուստինիանոսի (527—565) ժամանակաշրջանի մասին.

«Նրանից (Հուստինոս) հետո իշխեց Հուստինիանոսը երեսունհին տարի, ասվում է նաև քառասուն տարի: Նա կառուցեց բազում եկեղեցիներ և ուժեղացրեց քրիստոնեական կրոնը, պաշտպան կանգնեց մեղքիտների (հունարկական) աղանդին (մազհաբ): Կառուցեց Եդեսիայի (Ռոհա) եկեղեցին, որն աշխարհի հրաշալիքներից է, (վերևում) հիշյալ տաճարների նման: Այդ եկեղեցում կար մի թաշկինակ (մանդիլ, հուն. մանդիլիոն, վարչամակ), որը պաշտում էին քրիստոնյաները: Բանն այն է, որ Հիսուս Նազովրեցին երբ մկրտության ջրից դուրս էր եկել, դրանով սրբվել էր, և այդ թաշկինակը շրջում էր, մինչև որ հաստատվել է Եդեսիայի եկեղեցում: Երբ հոռմներն սկսեցին մեղել մահմեդականներին և պաշարեցին Եդեսիան, այն տարում, որն է երեք հարյուր երեսներկու թվականը, թաշկինակը տրվեց հոռմներին, և նրանք համաձայնեցին հաշտություն կնքել: Թաշկինակը հանձնելու առթիվ հոռմները չափազանց հրճվեցին»¹⁰:

Քրիստոնյա արաբ պատմիչ Յահիա Ա. Կոնստանդինոպոլսի (ալ-Անթաքի, 980—1066)

⁸ Աճ, 189—194:

⁹ Կա նաև վարչամակի կաթոլիկ տարբերակը, ըստ որի Վերոնիկա (Veronika) կոչված մի քարե պաշտոնի հետևում էր Քրիստոսին, երբ խաչն ուսին քարձարանում էր Գողգոթա, և տվել էր իր թաշկինակը, որ քրտինքը սրբի: Սրբելուց հետո Նա Վերոնիկային վերադարձրել է թաշկինակը, որի վրա արդեն իր դեմքն է պատկերվել: Այս թաշկինակով Վերոնիկան բուժել է Տիբերիոս կայսրին, ապա այն մնացել է Հոռմում: Grand Larousse encyclopédique, Paris, 1964, t. X, p. 758.

¹⁰ Masudi, Les prairies d'or, ed. B. de Meynard et p. de Courteille, revue et corrigée par Ch. Pellat, t. II, Beyrouth, 1966, p. 51.

¹¹ G. Graf, Geschichte der Christlichen Arabischen Literatur, II, Vatican, 1947, S. 49—51.

⁷ Կոստանդին Ծիրանածին, թարգմ. Հ. Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 189—190:

Ակարագրում է այս դեպքը՝ մասամբ կրկնելով Ծիրանածնին և մասամբ էլ հաղորդելով նոր կարևոր տեղեկություններ.

«Երեք հարյուր երեսունմեկ (942—943) թվականին հոռոմոց զորքերը հաասն Ամիդ և բնակիչներից մի մեծ մասին գերեվարեցին, ապա գրավեցին Արզնը և, ավերելով այդ գավառի մեծ մասը, մոտեցան Մծքիմին (Նասիբին): Նրանք խնդրեցին Եղեսիայի (Ռուհա) ժողովրդից, որ իրենց հանձնվի սրբապատկերը (իկոնա), այսինքն թաշկինակը (մանդիլ), որը գտնվում էր Եղեսիայի եկեղեցում: Մեր Տեր Հիսուս Քրիստոսն այն իր դեմքին էր քսել, և դիմանկարը վրան էր դրոշմվել: Հոռոմները նրանց խոստացան, որ եթե թաշկինակը հանձնեն, իրենց ձեռքում գտնվող մահմեդական գերիներին ազատ կարձակեն ինչքան կամենան: (Եղեսիայի արարներն) այդ մասին նամակ գրեցին ալ-Մուտտակի խալիֆային: Վեզիր Աբու-լ-Հասան Իբն Մուկլան այդ առթիվ մի գեկուցում գրեց ալ-Մուտտակիին, խնդրելով, որ մատնացույց անի, թե ինչպես վարվել նման պայմաններում: (Ամիրապետը) հրամայեց դատավորների (կադի) ու իրավագետների (ֆակիհ) ժողով հրավիրել, վճիռ (ֆատուա) պահանջել և ըստ այնմ գործել:

Վեզիր Աբու-լ-Հասան Իբն Մուկլան հրավիրեց նրանց, ինչպես նաև Ալի իբն Իսաին ու թագավորության մեծամեծներին: Նա ծանոթացրեց նրանց հարցի բոլոր կողմերին և նրանց կարծիքները հարցրեց այդ մասին: Այն ժամանակ երկար վեճեր տեղի ունեցան այս հարցի շուրջը, ընդ որում ներկաներից ոմանք մատնանշում էին այս թաշկինակի պարագաները, թե դա երկար ժամանակ գտնվել է այդ եկեղեցում, և հոռոմների ոչ մի թագավոր (կայսր) այն չի պահանջել: Ուստի այն հանձնելը իսլամի համար նվաստացում է, իսկ մահմեդականները ավելի իրավունք ունեն Հիսուսի (խաղաղությունը նրան) թաշկինակի նկատմամբ, որի վրա նրա պատկերը կար: Սակայն Ալի իբն Իսան ասաց, որ մահմեդականների գերությունից ազատ արձակվելը և նրանց փրկվելը անհավատների երկրից և այնտեղ կրած տառապանքներից ու ճրճումից, շատ ավելի անհրաժեշտ է և արդարացի [քան թաշկինակը՝ վարչապետի պահելը]: Բոլոր մասնակիցները հավանություն տվեցին այս խոսքերին, և նա, ինչպես նաև բազում մահմեդական դատավորներ որոշեցին, որ պետք է ընդունել գերյալներին ու հանձնել թաշկինակը, քանզի տիրակալը (սուլթան, այսինքն ամիրապետը) անգոր էր և ոչ մի հնար չուներ այդ գերյալներին նրանց ձեռքից ազատելու:

Վեզիրն այդ մասին մի արձանագրություն (մահդար) կազմեց և բոլոր ներկաներին ստորագրել տվեց ու ներկայացրեց Մուտտակիին, որը հրամայեց ըստ արձանագրության գրել պատասխանը: Այսպիսով Եղեսիայի բնակիչների ու հոռոմների միջև խնդիրը կարգավորվեց, ըստ որի վերջիններս ազատ արձակեցին երկու հարյուր մահմեդականների, որոնք գերի էին ընկել, իսկ Եղեսիայի բնակիչները նրանց պայման դրեցին, որ հետագայում արշավանքներ չկատարեն իրենց քաղաքի դեմ: Այսպիսով նրանց միջև հավիտենական պայմանագիր կնքվեց:

Հոռոմները թաշկինակն ստանալով տառան Կոստանդնուպոլիս, ուր հաասն օգոստոս ամսի (աբ) տասնհինգին: Ստեփանոսը, նրա եղբայր Թեոփիլակտոս պատրիարքը, Կոստանդինը՝ Ռոմանոս թագավորի (կայսեր) որդիները, ընդառաջ ելան դեպի Ոսկե դուռը և ընդունեցին [թաշկինակը]: Թագավորության բոլոր մեծամեծները իրենց ձեռքերին բազմաթիվ մոմեր պահած քալեցին նրա (թաշկինակի) առջևից, ապա բերեցին Սուրբ Սուփիայի մեծ տաճարը և այնտեղից տարան [կայսերական] պալատը: Սա տեղի ունեցավ ձեր Ռոմանոսի Լևոնի որդի Կոստանդինի հետ վարած իշխանության քսանչորսերորդ տարում»¹⁰:

Քրիստոնյա արաբ պատմիչը բնականաբար օգտագործել է Կոստանդին Ծիրանածնի գրվածքը, քանի որ դատառական Կոստանդնուպոլիս քերելու մանրամասնությունները երկուսի մոտ նման են, սակայն նա տալիս է շատ արժեքավոր տեղեկություններ այն մասին, թե ինչպիսի քննարկումներից հետո Աբբասյան խալիֆայությունը թույլ տվեց, որ թաշկինակը (մանդիլ) դուրս բերվի երկրից:

Այսպես, ստանալով բյուզանդական առաջարկը, Եղեսիայի կառավարիչը (ամիր), նկատի ունենալով հարցի բարդությունը, դիմում է օրվա Աբբասյան ամիրապետ ալ-Մուտտակիին (940—944)՝ կարծիք հարցնելու: Այդ ժամանակ արդեն Աբբասյան խալիֆաները կորցրել էին իրենց քաղաքական նախկին իշխանությունը, և Եղեսիայի կառավարիչը բնականաբար եղթակա պիտի լիներ Համդանյան ամիր Նասիր ալ-Դաուլային, սակայն նկատի ունենալով, որ այս հարցը թե՛ քաղաքական, թե՛ կրոնական բնույթ ուներ, ուստի նա պետք է դիմեր մահմեդական աշխարհի կրոնապետ համարված Աբբասյան ամիրապետին:

Երբ վեզիր Իբն Մուկլան այս մասին գե-

¹⁰ Histoire de Yahia ibn Said d'Antioche. Patrologia Orientalis, t. 18, Paris, 1921, p. 32—33.

կուցեց ամիրապետին, վերջինս հրամայեց ժողովի հրավիրել դատավորներին ու իրավագետներին: Նման ժողովներ գումարվում էին, երբ կրոնական կամ իրավագիտական բարդ հարցեր էին առաջանում: Տվյալ դեպքում ժողովը, ինչպես տեսանք, նվաստացում համարեց այդքան երկար ժամանակ խալիֆայության մեջ գտնվող այս սրբությունը¹³ հանձնել թշնամուն: Ժողովին ներկա էր Ալի իբն Իսան, որը նախորդ խալիֆաներից Մուկտադիի (908—932) օրոք աչքի էր ընկել որպես ընդունակ վեզիր և կարողացավ ժողովականներին համոզել, որ գերիների ազատվելը (նաև մեծ գումարի ստացումը) նախընտրելի է, քան սրբապատկերը պահելը¹⁴:

Դաստառակի փոխադրման մասին խոսում է նաև արաբ մահմեդական պատմագիր Իբն ալ-Ասիրը (1160—1233), որը հավանաբար իր տեղեկությունները քաղել է Յահիա Անտիոքացուց:

«Երեք հարյուր երեսունմեկ թվական (942—943)

Այդ տարում Ռումի թագավորը լուր ուղարկեց Մուստակի լիլահ [խալիֆային]՝ խնդրելով մի թաշկինակ, որի մասին ասում էին, թե Բրիստոսը իր երեսին էր քսել և դեմքը նրա վրա էր պատկերել: Դա գտնվում էր Եդեսիայի (Ռուհա) եկեղեցիներից մեկում: Նա նշում էր, որ եթե թաշկինակը իրեն ուղարկվի, ապա ինքը մեծ թվով մահմեդական գերիների ազատ կարձակի:

Մուստակի լիլահը հրավիրեց դատավորների, իրավագետների և նրանցից վճիռ (ֆատուա) պահանջեց: Նրանք տարբեր կարծիքներ հայտնեցին. ոմանք համաձայն էին այն հանձնել [Ռումի] թագավորին և գերիներին փրկել, իսկ ուրիշները ասացին՝ այս թաշկինակը (մանդիլ) հնագույն ժամանակներից գտնվել է իսլամի երկրում, և Ռումի ոչ մի թագավոր (կալս) այն չի պահանջել, ուստի հանձնելը նվաստացում է: Հավաքվածների մեջ էր նաև [նախկին] վեզիր Ալի իբն Իսան, որն ասաց՝ մահմեդականներին գերությունից, նեղությունից ու զրկանքից ազատելը ավելի լավ է, քան այդ թաշկինակը մեզ մոտ պահելը: Խալիֆան հրամայեց այն հանձնել և գերիներին

ազատել: Այդպես էլ արվեց, և մարդ ուղարկեց, որ գնա Ռումի երկրից գերիներին բերի, և (իրոք) սրանք ազատ արձակվեցին»¹⁵:

Դաստառակը Եդեսիայից տարվելու մասին հաղորդում է նաև քրիստոնյա արաբ պատմիչ, հակոբիկ ասորիների մափրիան (պատրիարքի տեղակալ) Գրիգորիս Աբու-լ-ֆարաջ Բար Հեբրեոսը (1225—1286).

«Երեք հարյուր երեսունմեկ (942—943) թվական

Այդ տարում Ռումի թագավորը [դեսպաններ] ուղարկեց Մուստակի [ամիրապետին], նրանից պահանջելով մի թաշկինակ (մանդիլ), որով Բրիստոս (Մահի) իր երեսն էր սրբել, և իր պատկերը դրա վրա էր դրոշմվել, իսկ դա գտնվում էր Եդեսիայի (Ռուհա) եկեղեցում: Նա հիշեցրել էր, որ եթե այն (դաստառակը) ուղարկվի, ինքը մահմեդական գերիների մի մեծ խումբ ազատ կարձակի: Մուստակին դատավորներից ու իրավագետներից վճիռ պահանջեց, և ոմանք անընդունելի համարեցին հանձնելը, իսկ ուրիշները պատասխանեցին, թե մահմեդականների ազատումը գերությունից, չարիքից ու նեղությունից, որի մեջ գտնվում են, ավելի ցանկալի է [քան թաշկինակը պահելը]: Ուստի Մուստակին հրամայեց թաշկինակը հանձնել դեսպաններին և նրանց հետ մարդկանց ուղարկեց, որ ստանան գերիներին»¹⁶:

Եթե վերլուծենք պատմիչներից քաղած մեր տեղեկությունները, կտեսնենք, որ նրանք տարբեր տրամադրություններ են արտահայտում: Կոստանդին Միրանադինը և մելքիտ (հունադավան) արաբ Յահիա Անտիոքացին խանդավառ են դաստառակը Կոստանդնուպոլիս տարվելու փաստով և մանրամասն պատմում են այդ մասին, ապա մյուսները տարբեր վերաբերմունք ունեն: Մահմեդական արաբ իբն ալ-Ասիրը բնականաբար զուսպ է և անտարբեր: Բանն այն է, որ զուսպ և հակիրճ է նաև հակոբիկ ասորի (հայադավան) Գրիգորիոս Աբու-լ-ֆարաջ Բար Հեբրեոսը, և դա պետք է ունենա իր քաջատրությունը: Նույն անտարբեր տրամադրությունը մենք կտեսնենք նաև հակոբիկ ասորիների պատրիարք Միքայել Ասորու (մեռ. 1199) ասորերեն գրած ժամանակագրության մեջ և հատկապես հայ պատմիչների մոտ:

Միքայել Ասորին հակիրճ և զուսպ շեշտով գրում է.

¹⁵ Ibn al-Athir, al-Kamil fi-l-tarikh, al-Qahira, VI, 1353, (1934—1935) p. 296.

¹⁶ Historia Compendiose Dynastiarum auctore Gregorio Abu-l-Farajio, Oxoniae, 1663, p. 306.

¹³ Իսլամի համար Բրիստոսը նույնպիսի մի մարգարե է, ինչպես Մովսեսն ու Մուհամմադը, ուստի նրա պատկերը սրբություն էր նաև մահմեդականների համար, թեև մահմեդական իրավագիտությունը տեսականորեն արգելում է պատկերների օգտագործումը և պաշտամունքը:

¹⁴ Vasiliev, Byzance et les Arabes, t. 11, 1^{re} partie, p. 298—301.

«Հոռոմները պաշարեցին Եդեսիան և անդեցին իրենց հարձակումներով:

Այն ժամանակ, երբ Եդեսիան պաշարված էր հոռոմների կողմից, Եդեսացիք դեսպաններ ուղարկեցին Ռոմանոս կայսրին՝ նրան հայտնելու, որ եթե իրենցից հեռացնի զորքը, որ այդ ժամանակ նրանց պաշարում էր, նրան կտային այն թանկարժեք քողը, որ մեր Փրկիչ Քրիստոսն էր ուղարկել հավատացյալ Աբգար թագավորին: Կայսրը համաձայնեց: Նրանք հանձնեցին, և նա (կայսրը) հոռոմներին ետ քաշեց Եդեսիայից և նրա գավառից:

Կարծվում է նաև, որ կայսրն ինքն էր ճնշել Եդեսացիներին, այդ քողի պատճառով, և այն ստացել»¹⁷:

Եդեսացիք ասելով պատմիչը նկատի ունի մահմեդական արաբ կառավարողներին, բայց ոչ քրիստոնյա բնակիչներին, որոնք, ինչպես կոտեսները, բացարձակապես դեմ էին, որ հոռոմները խլեն իրենց քաղաքի սրբությունը:

Ինչ վերաբերում է հայկական աղբյուրներին, ապա նրանք թեև հիշում են Ռոմանոս կայսեր օրոք առաջխաղացումը դեպի արևելք, սակայն նույնիսկ չեն հիշատակում դաստառակի տարվելու փաստը: Այսպես Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը, որը ժամանակով ամենամոտոն է այս դեպքերին, չոր ոճով նշում է. «Այլ յաւորս Ռոմանոսի կայսերն Յումաց և ի ժամանակս Աբասայ թագաւորի Հայոց, առաւ Մելտենի ի Տաճկաց յձգ թուականին»¹⁸ այսինքն 934 թվականին: Ինչպես տեսանք, Մելիտիների գրավումից 9 տարի անց Հովհանն Կուրկուսարը (Հովհաննես Գուրգեն) պաշարել էր Եդեսիան, սակայն Ստեփանոս Տարոնեցին, ոչ էլ նրան հաջողորոշ Սամուել Անեցին (որը նույնպես խոսում է Ռոմանոսի օրոք առաջխաղացման մասին) չեն հիշում Եդեսիայի պաշարումը կամ դաստառակի տարվելը:

Հայ պատմիչների նման վերաբերմունքի պատճառը պարզ է դառնում Կիրակոս Գանձակեցու և Վարդան պատմիչի այն տեղեկությունից, թե Ռոմանոսը հալածել էր հայ եկեղեցականներին՝ նպատակ ունենալով պարտադրել քաղկեդոնականությունը: Ըստ Գանձակեցու «սա (Ռոմանոս) հալածեաց զամենայն կրօնաւորս և զքահանայս հայոց, որք էին յաշխարհն Հոռոմոց, զի ոչ հաւանեցան դասաւորութեանն Քաղկեդոնի, եւ եկեալ յաշխարհս Հայոց յաւորս Աբա-

սայ, որդւոյ Սմբատայ, հաստատեցին վանորայս»¹⁹: Նույնը հաղորդում է Վարդանը՝ խոսելով Աբասի մասին. «Ի սորա աւորս յոյժ բազմութիւնք կրօնաւորաց հալածեալք ի հոռոմոց աշխարհէն սակս ուղղափառութեան եկեալ յաշխարհս մեր շինեցին յովով՝ վանորայս»²⁰:

Միայն Հայամալուրքի մեջ խոսվում է դաստառակի Եդեսիայից տարվելու մասին, սակայն հիշելով, որ դա տեղի ունեցավ Կոստանդին Է Ծիրանածնի օրոք, որի կայսերակիցն էր Ռոմանոսը. «Եւ յետ ժամանակաց յաւորս Կոստանդեայ որդւոյ Լեոնի կայսեր տարան զսուրբ դաստառակն ի Կոստանդնուպոլիս ի թվականիս Հայոց զճող (945) ամին: Եւ անդ բազում զօրութիւն արար ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ»²¹:

Ուստի հայ պատմիչների լուրջությունը և հակոթիկ (հայադավան) ասորիների (Միքայել Ասորի և այլն) անսուրբեր շեշտը վարչամակի տեղափոխման առթիվ հետևյալն էր լուրջ պատճառների, քանզի այդ ժամանակ հարաբերությունները սրված էին հայոց ու հոռոմոց միջև: Բնականաբար հակոթիկ ասորիները նույնպես լարված էին հույների դեմ, և Կոստանդին Ծիրանածնի համեմայն դեպս չի թաքցնում, որ Եդեսիայի քրիստոնյա (ասորի հակոթիկ և հայ) ազգաբնակչությունը կատաղի դիմադրություն ցուցաբերեց՝ տեսնելով բյուզանդացիների՝ դաստառակը խլելու ձգտումը: Փաստորեն կայսրությունը միայն մահմեդական իշխողներին խոստումներ անելու միջոցով (200 մահմեդական զերիների ազատ արձակում և տասներկու հազար մաքուր արծաթ դրամի վճարում) կարողացավ նրանց ձեռքով խեղդել Եդեսիայի քրիստոնյա ազգաբնակչության զայրույթը և դիմադրությունը: Դաստառակը հանձնելու համաձայնությունը կայանալուց հետո Ծիրանածնի արտահայտությամբ «Եդեսիայի հավատացյալները խոտվություն բարձրացրին, քաղաքում մեծ տակնուվրայություններ եղան. (քաղաքացիները) չէին ուզում զրկվել իրենց ամենահարգի (իրերից)՝ իրենց պաշտպաններից, մինչև որ սարակիճոսների գլխավորը ոմանց համոզելով, ոմանց վրա ճնշում գործադրելով, ոմանց էլ մահապատժի սպառնալիքի տակ ստիպեց տալ այն»:

¹⁹ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 84:

²⁰ Մեծին Վարդանայ Բարձրբերդոյ Պատմութիւն Տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 119—120:

²¹ Յայմատուրք, Կ. Պոլիս, 1730, Նաւասարդի գ. օգ. ձգ:

¹⁷ Chronique de Michel le Syrien, éd. et trad. par J. B. Chabot, t. III, Paris, 1963, p. 123.

¹⁸ Ստեփանոս Տարոնեցու Ասողկան Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետրոպոլ, 1885, էջ 179:

քից դուրս քերելու ժամանակ և նույնիսկ Եփրատի ափը հասնելուց հետո էլ երրորդ անգամ²² փորձեցին թույլ չտալ, որ հափըշտակեն դաստառակը:


Բանն այն է, որ իրեն շատ ուժեղ էր զգում Բյուզանդիան արաբների դեմ տարած հաղթանակների ազդեցության տակ, հաղթանակներ, որոնց ձեռքբերումն իրականացել էր հայ զորավարների ու ռազմիկների եռանդուն մասնակցության շնորհիվ: Սակայն որպես հատուցում կայսրությունը

արհամարհում ու հայածում էր հայերին: Հայ Եկեղեցու պատմության գիտակ, մեծանուն հայագետ Մաղաքիա՝ արքեպիսկոպոս Օրմանյանը այսպես է բնորոշում Ռոմանոս կայսեր վերաբերմունքը. «Ասիոյ մէջ ունեցած յաջողութիւններէն խրոխտացած սկսաւ կայսրութեան սահմանին մէջ եղող հայերը քաղկեդոնականութեան ստիպել, մասնաւորապէս իր խստութիւնը եկեղեցականներու վրայ ծանրացնելով»²³:

²³ Մ. Օրմանյան, Ազգապատում, Պեյրուք, 1959, հատ. Ա, էջ 1084:

²² Կոստանդին Միրանաձին, էջ 190—191:





ԵՂՎԱՐԴ ԳՈՂԱՆԾՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ



Լրացավ արևմտահայ հայտնի բանաստեղծ, արձակագիր, գրական քննադատ, թատերագիր և հասարակական գործիչ Եղվարդ Մելքոնի Գողանճյանի ծննդյան 100 ամյակը:

Նա ծնվել է Սկյուտարում (Կ. Պոլիս) 1880 թ. հոկտեմբերի 28-ին (նոր տոմարով նոյեմբերի 9-ին) գրասեր արհեստավորի

ընտանիքում և փոքր հասակից շրջապատված է եղել հայ գրիկ ծառայող հարազատներով: Նա իր մոր կողմից ազգական էր Պետրոս Դուրյանին ու Սիպիլին, իսկ հոր կողմից՝ Եղիա Տեմիրճիպաշյանին:

Սկյուտարի նախակրթարանների ընթացքը ավարտելուց հետո 1896 թ. մուտք է գործել Պերպերյան վարժարանը, ուր և մեծանուն մանկավարժ Ռեթեոս Պերպերյանի և այլ կարող ուսուցիչների շնչի տակ ստացել է հայագիտական խմամված ուսում և հմտացել ֆրանսերեն և անգլերեն լեզուների մեջ:

Այստեղ էլ նա մտերմացել է իրենից մեկ դասարան բարձր եղող Սիամանթոյի հետ: Գողանճյանը դեռ 13 տարեկան էր, երբ դպրոցի գրասեղաններից գրեց ու լույս ընծայեց Կ. Պոլսի «Փունջ» թերթում իր արձակ գրվածքը «Վերջին համբույր» խորագրով: Դարձյալ իր ուսումնառության շրջանում կազմել է երկու ձեռագիր հանդեսներ. «Պսակ» և «Դերասան» անուններով: Գողանճյանը իբրև ընթացավարտ արժանացել է հայերեն, ֆրանսերեն և անգլերեն լեզուները դասախոսելու վկայականի: Ծնորհիվ իր բացառիկ ընթերցասիրության նա հրմտացել է արևմտյան և արևելյան գրականության և իմաստասիրության մեջ, զբաղվել լեզուների դասավանդությամբ:

Հատկապես շատ բեղմնավոր է եղել Գողանճյանի աշխատակցությունը պոլսահայ և զմյուռնահայ գրական հանդեսներին: Առհասարակ մինչև 1922 թ. իր Կ. Պոլսից հեռանալը, դժվար է գտնել թերթ—հանդես, տարեգիրք—տարեցույց կամ ժողովածու և դասագիրք, ուր նա իր աշխատակցությունը բերած չլիներ:

1909 թ. Կ. Պոլսում լույս տեսավ Գոլանձյանի բանաստեղծությունների առաջին ժողովածուն «Արևելքի բոցեր» խորագրով: Այն հայ գրականության մեջ առաջին խոսքն էր ուղղված արևելքի զարթոնքին: Ինչպես պոլսահայ, այնպես էլ ամերիկահայ մամուլի կողմից Գոլանձյանի այս գիրքը արժանացավ բարձր գնահատանքի: Հայրենասեր բանաստեղծը իր այս գրքի եկամուտը հատկացրեց Ադանայի որբերին: Դարձյալ Կ. Պոլսում լույս տեսավ գեղեցիկ ձևավորումով Գոլանձյանի կողմից հայերեն և ֆրանսերեն լեզուներով գրված «Վառունա» (երազերգ) բանաստեղծությունը հայտնի երգահան Միհրան Տաբենտեյանի երաժշտությամբ:

Գոլանձյանը հեղինակ է մեծ թիվ կազմող քնարական-հայրենասիրական, խոհական-փիլիսոփայական, ընկերային և համամարդկային բնույթի բանաստեղծությունների, որոնք ցրված են աշխարհի հայ մամուլի էջերում: Իր այդ ստեղծագործությունները հիմնականում մաս էին կազմելու նրա «Արևելքի բոցեր» և շարքին, «Մարմարե մենություն», «Երկնային մեղեդիներ», «Կարապի երգեր», «Ապագայի տեսիլներ», «Հավերժություն Հայության» և այլ խորագրեր կրող բանաստեղծությունների ժողովածուներին, որոնք սակայն գաղթական հայ գրողի դժին ճակատագիրը թույլ չտվեց առանձին գրքերով հրատարակված տեսնելու:

Գոլանձյանը հայ գրականության մեջ համարվում է հայ ժողովրդին վիճակված գողգոթան երգող մեր հայտնի բանաստեղծներից մեկը Վարուժանի և Սիամանթոյի հետ միասին: Իսկ 1915 թ. նա տխուր պարտականություն ունեցավ գրեթե մեռակ գրելու ուժգին պատկերներով հագեցված բանաստեղծություններ, որոնք լույս տեսան «Խաչված քաղաքներու ձայնը» խորագրով և որոնց ամբողջությունը մի ժողովածու կարող է կազմել: Հայ ժողովրդին վիճակված ողբերգության հետազոտման համար արժեքավոր են նաև Գոլանձյանի «Չարչարապատում» խորագրով հոդվածաշարը նվիրված հայ եղեռնին, սկսած Սեբաստիայից մինչև Տեր-Ջորի կտորածներն և հայերի հերոսական դիմադրությանը:

Նրա գործերը հագեցված են խոր մարդասիրությամբ: Դեռևս 1911 թ. Նյու Յորքի «Արագած» հանդեսում շարունակաբար լույս է տեսել «Խափշիկուհին» տաղաչափյալ պոեմ-պատմվածքը, որը ուժեղ մի պլաք է ուղղված ցեղային խտրականության դեմ: 1945 թ. այն վերամշակելով և «Խառնածին» անունով արժանացավ Բուխարեստի «Հայ մշակույթի տան» գրական մրցանա-

լին: Ուշադրության արժանի են նաև Գոլանձյանի մեծ թիվ կազմող քաղակաները, որոնք գրված են 1910—1940 թթ. Կ. Պոլսում և Բուխարեստում: Դրանցում հեղինակը ամենայն վարպետությամբ կարողացել է արտահայտել ազգային ու համամարդկային բազմազան հարցեր, որոնք գրված են փիլիսոփայական ներշնչումով:

Սկսած դեռ 1912 թ. իր «Ծառաները՝ տեր» բանաստեղծությամբ և հետո Գոլանձյանը արևմտահայ և սփյուռքահայ գրականության մեջ ամենից ավելի մեծ տեղ է տվել ընկերային հարցերին:

Գոլանձյանը թողել է նաև մեծ թվով արձակ գրվածքներ, ինչպես 1900 թ. գրած «Երկրորդ կյանք» (նորավեպ), «Սրտի փորձ (Ուսանողի մը հուշատետրը)» ևն: Նրա արձակին մաս են կազմում նաև նրա հուշագրությունը, որն ունի ճանաչողական կարևոր նշանակություն և գրված է պատկերավոր և գեղեցկագույն ոճով: Այդպիսիներից է նրա «Առաքյալի մը վախճանը» նվիրված նրա մտերիմ ընկերոջ Տիրան Չրաքյանի (Ինտրա) մերձ ի մահ ապրած ողիսականին, Արշակունի Թեոդիկին, Զոհրապին, Երուխանին, Ալ. Փանոսյանին, հայագետ Հ. Մ. Պոտուրյանին և այլն: Կարևոր է նրա «Սկյուտարի հիշատակներ. Լևոնի սրճարանը» հուշապատումը ևն:

Գոլանձյանը իր կարևոր նպաստն է բերել նաև հայ և համաշխարհային գրականության արժեքավորման և պրոպագանդման գործում: Երկար տարիների ընթացքում նա հայ ընթերցողին ծանոթացրել է հայկական, ֆրանսիական, ռուսական, անգլիական, գերմանական և այլ ժողովուրդների գրականության ականավոր ներկայացուցիչներին: Նա առաջիններից մեկն էր, որ հատուկ գրախոսությամբ դրվատեց Մեծարենցի հանդես գալը: Դեռ 1913 թ.-ին է վերաբերում Գոլանձյանի ելույթը Դանիել Վարուժանի «Հեթանոս երգեր»-ին նվիրված գրական ասուլիսին: Ծանաչողական նշանակություն ունեն Գոլանձյանի ընդարձակ ուսումնասիրությունները նվիրված Պ. Դուրյանին, Ռ. Պերպերյանին, Սիամանթոյին, Ա. Չոպանյանին և ուրիշներին:

Գոլանձյանը, իբրև գրական քննադատ և արևմտաեվրոպական ու արևելյան և հատկապես ֆրանսիական գրականության և իմաստասիրության քաջաճանոթ, դեռևս 1899 թ. պոլսահայ մամուլում ունի ուշագրավ ուսումնասիրություններ նվիրված Մորես Վոգելին, Մորիս Ռոլինային, Էմիլ Վեդհարնին, Ժերար դը Ներվային, Սպենսերին, Նիցշեին և այլ շատերին: Դարձյալ Գոլանձյանն է եղել արևմտահայ ընթերցողներին ռուսական առաջավոր գրական

մտքին գլխավոր հաղորդակից դարձնողներից մեկը: Դեռ 1899 թ. նա ծանոթացրեց և և Տոյատոյին, իսկ հետագայում թարգմանություններ կատարեց Տուրգենևից, Պուշկինից, Լեոնտովից և այլն: Նա հաջող թարգմանություններ է կատարել նաև Մաքս Կորդաուսից, Էմիլ Վեհարնից, Պոլ Վերլենից, Լը կոմ դը Լիլից և ուրիշներից:

Գոլանճյանը հեղինակել է նաև թատերգություններ, որոնցից է «Կարմիր ավանդը» ողբերգությունը նվիրված հայաշինչ տպանդին: Նա գրել է նաև ֆրանսերեն բազմաթիվ բանաստեղծություններ, որոնք լույս են տեսել դարասկզբին Կ. Պոլսում ֆրանսերեն «Stamboul» և «Levand Herald» թերթերում: Նա հայտնի է նաև իբրև հայ գրողների երկերի թարգմանիչ: 1912 թ. Փարիզում նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Մակլերի առաջաբանով հրատարակվեց Ռուբեն Զարդարյանի «Ցայապուս»-ի ֆրանսերեն թարգմանությունը «Clarté nocturne» խորագրով, որը կատարել էին Գոլանճյանը, Ա. Չոպանյանը և նահատակ գրող Գր. Եսայանը:

1922 թ. Կ. Պոլսում և համալսարանական հայության համար ստեղծված անապահով պայմանները Գոլանճյանին ևս նետեցին Ռումինիայի հյուրընկալ ասիերը: Հակառակ գաղթական գրողին բաժին ընկած ամեն տեսակի զրկանքներին նա վայր չդրեց գրիչը: Նա իր նպաստի բաժինը բերեց ռումինահայ գաղութի մշակութային և հասարակական կյանքին և իր կանոնավոր աշխատակցությունը՝ տեղական հայկական թերթերին, գրական հանդեսներին և տարեգրքերին: Այստեղ նա զեկուցումներ է կարդացել իբրև Կ. Պոլսի «Արվեստի տան» հիմնադիրներից մեկը Մեծարենցի, Օտյանի և այլոց նվիրված գրական երեկոներին, Ֆր. Մակլերի, Ար. Չոպանյանի և այլ ականավոր դեմքերի պատվին տեղի ունեցած հանդիսություններին: «Սերմեր օտար հողի վրա»... այստեղ գրված բանաստեղծությունների շարքը իր ծննդավայրից, իր ընտանիքից ու մերձավորներից հեռու գրված կարոտի ու պանդխտության երգեր են, որոնք բացի անձնականից պարուրված են նաև համամարդկային ներշնչումներով: Գոլանճյանի բանաստեղծություններից մեկ քանին թարգմանվել են նաև ռումիներենի և լույս տեսել «Propriile Literare» հանդեսում, իսկ նրա քառյակներից հրատարակվել են վերջերս լրագրող Ս. Սեյլանի հրատարակած «Հայկական առածներ և իմաստալից խոսքեր» ռումիներեն ժողովածուում: Նա Բուխարեստից իր աշխատակցությունն է բերել սփյուռքահայ գրեթե բոլոր կարևորագույն պարբերականներին:

Գոլանճյանը սփյուռքահայ առաջին գրողներից մեկն էր, որ ողջունեց հայ ժողովրդի վերածնունդը և ամբողջ սրտով և հայացքներով հակվեց Սովետական Հայաստանին: Նա իր գրիչը ի սպաս դրեց իր հայրենիքի վերելքը երգելուն. «Հորդորական հայ սպարդակին», «Մեր անմահ Սևանին» (երաժշտ. Նոնու Գրիգորյանի) և այլ գործերը վկայում են այդ մասին: Հայրենական պատերազմի օրերին իր գրած ստեղծագործություններում նա համակված էր այն բուն հավատքով, որ ֆաշիստական Գերմանիան ի վերջո ջախջախվելու է: Հայրենադարձության օրերին Գոլանճյանը ներթողներ նվիրեց այդ իր նախընթացը չունեցող նվիրական իրադարձությանը. «Ես քեզ կու գամ» և «Ներգաղթի երգ» (երաժշտությունը բեմանշխատ Ռուբենի) խորագրերով և այլն: Ռումինիան ֆաշիստական լծից ազատագրվելու է նվիրված Գոլանճյանի «Միջև և Էլենա» անուի պատմվածքը (1955), իսկ հայրենադարձության և իր ընտանիքի կյանքին է նվիրված «Մայր անանգ, մայր ամենուն...» (Անհայրենիք ընտանիքի մը կյանքին) գեղեցիկ պատմվածքը, որոնք արժանացան Բուխարեստի «Նոր կյանք» թերթի գրական մրցանակին և այլն:

Գոլանճյանը ստեղծագործել է մինչև իր վերջին շունչը: Գոլանճյանի հողվածներն ու գրախոսությունները (որոնք մինչև իր կյանքի վերջը լույս են տեսել Բուխարեստի «Նոր կյանք» թերթում և արտատպվել սփյուռքահայ բազմաթիվ թերթերում) կարևոր նշանակություն են ունեցել սփյուռքահայությանը Սովետական Հայաստանի գրականությունը ծանոթացնելու գործում:

Գոլանճյանի երազանքն էր սարել ու շնչել իր հայրենիքում և իր գրչով իր մասնակցությունը բերել իր հայրենիքի վերածարկմանը, սակայն 1957 թ. հունիսի 12-ին վրա հասնող հանկարծակյա մահը վերջ տվեց ամեն ինչի և Հայաստան բառը մնաց ստաճ իր շրթունքների վրա...:

Գոլանճյանի երևումը հայ գրականության անդաստանում դեռևս շատ շուտով արժանացել է հայ ականավոր գրողների բարձր գնահատանքին: Դեռևս 1911 թ. նրա բանաստեղծությունը հյուրընկալվել է հայ գրականության մեծանուն ներկայացուցիչների՝ Հ. Թումանյանի, Դ. Աղայանի և Վ. Փափագյանի կողմից կազմված «Մարգարիտներ արևմտահայ գրականությունից» հատորում, Գոլանճյանի 5 քնարական բանաստեղծություններ տեղ են գրավել 1930 թ. Երևանում Վ. Նորենցի, Ալազանի և Ս. Տարոնցու կողմից կազմված «Արևմտահայ բանաստեղծներ» հատընտիրում: Նրա գործերը գնահատվել են Տիրան Զրաքյանի

(Ինտրա), Եղիա Տեմիրճիպաշյանի, Ռ. Պերպերյանի, Ա. Հարությունյանի, Մեծաբենցի, Վարուժանի, Սիամանթոյի, Ավետիք Իսահակյանի, պրոֆ. Հ. Ծ. Սիրունու (Բուխարեստ), Եղ. Սիմբեշյանի (Վ. Պոլիս), Հ. Մ. Ծանաշյանի (Վենետիկ), Ս. Պալրզայանի (Բրազիլիա), դոցենտ Հ. Մարգարյանի, գրականագետ Ս. Ծոխկյանի (Հայաստան) և շատ ու շատ ուրիշների կողմից:


Գոլանճյանը 60 տարի իր բեղմնավոր աշխատակցությունն է բերել շուրջ 100 անուն պարբերականների, այդ թվում նաև հոգևոր և գիտական բնույթի հանդեսների և տարեգրքերի, ինչպես «Տաճար» (Վ. Պոլիս), «Հայ խոսնակ» (Վ. Պոլիս), «Սիոն» (Երուսաղեմ), «Հայաստանի կոչնակ» (Նյու Յորք), «Բազմավեպ» (Վենետիկ), «Տաթև» տարեգիրք (Հալեպ) և այլն:

Եղ. Գոլանճյանը իր աշխատակցությունն է բերել նաև «Էջմիածին» ամսագրին դեռևս երջանկահիշատակ Գևորգ Զ Ամենայն Հայոց կաթողիկոսի գահակալության շրջանից գրելով 1954 և 1956 թթ. հուշեր և նոթեր Հայ Եկեղեցու մեծանուն դեմքերի՝ Եղիշե արքեպիսկ. Դուրյանի և Մաղաքիա արքեպիսկ. Օրմանյանի մասին: Գոլանճյանը Բուխարեստում իր ընտանիքով կապի մեջ է եղել ապագա Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի և Տիրամոր հետ: Նորին Սրբության կաթողիկոսանալու ավետիսը մեծ ցնծությամբ է լցնում ծերունագարդ բանաստեղծի սիրտը և այս առթիվ գրում է «Հավերժական Արարատին» իր հայրենաշունչ բանաստեղծությունը, որը մի տեսակ խոսացումն է հազարամյակների հայոց

պատմության, և ձոնում այն Վեհափառ Հայրապետին: «Էջմիածին» ամսագիրը բանաստեղծի մահից հետո էլ լույս է ընծայել Մեծ Եղեռնի 50-ամյակին նվիրած իր բացառիկ համարում ցնցող մի նմուշ Գոլանճյանի «Խաչված քաղաքներու ձայնը» ժողովածուից «Կարմիր գիշերները» խորագրով (1965 թ. № 2—4, էջ 110—112), բանաստեղծի մահվան 10-ամյակի առթիվ կենսագրական համառոտ ակնարկ և նրա «Բարաքայի դատապարտությունը» բանաստեղծությունը (1967 թ. № 6, էջ 110—112) և վերջապես անմահ Կոմիտասի 100-ամյակի առթիվ Գոլանճյանի «Մեծ սգավոր երգիչին. Կոմիտաս վարդապետին» գեղեցիկ արձակ բանաստեղծությունը (1969, № 12, էջ 51—52): Նշենք նաև, որ 1967 հունիսի 11-ին Էջմիածնի Մայր տաճարում հավարտ ա. պատարագի հոգեհանգստյան արարողություն կատարվեց Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ բանաստեղծ Եղ. Գոլանճյանի մահվան 10-րդ տարեկիցի առթիվ, ինչպես նաև նրա բարեպաշտ կնոջ՝ Արրիմեի (ծնյալ Ծաֆիկյան) և վաղամեռ որդու մեքենագետ և երգիծաբան Մանուելի հիշատակին:

Եղ. Գոլանճյանի հատընտիրի (որը պատրաստել է հայրենաբնակ իր կրտսեր որդին՝ Սուրենը, երկար տարիների որոնումներից հետո) հրատարակումը լավագույն հուշարձան կլինի այդ տիպար բանաստեղծի և հայ մշակույթի և գրականության նվիրյալի անմեռ հիշատակին:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ «ԷԶՄԻԱԾԻՆ»
ԱՄՍԱԳՐԻ





Հ Ա Յ Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ն

Հայ Եկեղեցի՞ն:—Տանջված արև,
Փուշ փուշ՝ նոսր ավոտ, մշուշով լացող...
Փուշե Պրսակին Ժանգերուն ներքև
Սևտվածորդվուն հո՛րդ ճակատն, անհուն Ցող՝
Խավարեն ծծվող...:

«Առավոտ լուսոյ», «Լոյս զլարթ» աղո,
Արշալույս բռնկող կակաչներով շառ,
Իդձ՝ վսեմ տղու.
«Փա՛ռք ի բարձունքս», աստղերու բարբառ
Որ անդունդներուն մեղքը կը հեղու,
Եվ կ'ընե նեխանքն՝ հալվե անըսպառ.
Դաշն «Արևագալ», նոր Սիոնի կանչ,
Զոհերու բույրով նոր այգ հիասքանչ:

Հայ Եկեղեցի՞ն: Աստղա՛հն գիշեր,
Խավարին թևոց վրա խաչվող լույս,
Ցիրցան՝ մույթ ոսկերց շարական, սույլեր
Հովերով անհույս,
Ծրագներ մարող հովերով վիհին,
Աղերս միշտ նոր, հին.
Խաչվողի նայվա՛ծք, լույսին մեջ հալող
Եռուսայի դող...:

«Հա՛յր գթած»,—հեռուն մարող քաներուն,
Նավաբեկյալին, խոնջ ողևորին,
Հիվանդին տեղուն ու մեմավորին,
Բոլոր ցավերուն համրիչն հրահրուն.
Ա՛հ, «Խաղաղականք» խորունկ, սխրալի—
Գիշերատանջված «Ի քէն հայցեմ»ն հուր,
Խլակի երագ, համբույր ովկեանի,
Աղերսող իբրև ծիրանի փրկուր...:

Հայ Եկեղեցի՛ն:—Ի՛նչ սիրածարժ քոց,
 Քարե աղաղակ մե՛ծ մարտիրոսի,
 Քարացած կայծակ մութ այս դարում ծոց...
 Կարմիր կանթեղեն արյուն կը հոսի
 Խորանին առջև,
 Մեծ Եղբայրության համար դառնահոծ
 Արյո՛ւն նորոգած վերքերն Հիսուսի,
 Ցողաթուրմ հոգվոց հեք—ու հրանձրե՛լ...:

«Սիրտ իմ սասանի», սարսափ մատնության,
 Պծգանք աշխարհին, երկրածեշտ խորին.
 «Այսօր անճառ», կա՛նչ Սիրո Գիշերին,
 Այրումը Զոհին Սրտին անմեան,
 Ու «Տարածեալ»ն ուր կը ցողվի հոգին
 Մարգարիտ ցողովն երկնի արցունքին.
 «Ընկալ քաղցրութեամբ» հայցող մեծ կեղերջ,
 Խավարներ ծամող հոգեվարք անվե՛րջ...:

Հայ Եկեղեցի՛ն:—Մամո՛ւտ, ավերա՛կ,
 Ուր թաղված Սրտեն քարեր կը ճաթին...
 Կանաճչով ժպտող ժանգը երկաթին
 Ուրկե խլած են ոսկին անատակ...:
 Ծընորհքը Լքման, Լուռն աստվածարյալ,
 Ու խոնարհ վուվում մութ աղավնետան
 Որ ցամքած արյունը զոհերուն մոայլ
 Կ'ընեն շատրվա՛ն...

Հայ Եկեղեցի՛ն:—Տապանաքարին
 Չորս անկյուններուն մեջ փորված ըմպա՛կ
 Ուրկե տատրակներ, զմայլմամբ խորին,
 Կ'ըմպեն մեռելոց արցունքն անապակ...:
 Արվե՛ստ Հեգության, ջախջախիչ Ծընորհ
 Ուր մեր մեռելնե՛րն իսկ քարի՛ք կ'ապրին...:
 Ո՛ր ազգի քարեն Սիրտն ա՛յսքան հզոր
 Բարվույն հավատքով՝ լացալ Ցողն Անդրին:

Հայ Եկեղեցի՛ն:—Այում անե՛ղծ, անույծ,
 Չարչարված այլ մի՛շտ անալլալ, մի՛շտ նույն,
 Որ, աճյունին մեջ անիծված դարուց,
 Վե՛ր կը բռնե միշտ անմեռ Սիրտն Հայուն,
 Լույսին ընծայած՝ լո՛ւյս առժծելով...:
 Հե՛ք Նարեկացվույն, Ծնորհավույն ճաճանչ,
 Մեսրոպի Աջք, ջի՛ղ Վարդանի վողով,
 Բազուկ Ղևոնդյանց, Ալիշանի կանչ:

Ոսկեդարու Զա՛յն, Բընագրե՛ն ալ վա՛ն,
 Գիտակից Ծընորհք Ավետարանին,
 Զ՛Աստված հայացնո՛ղ գերագույն Բարբադ՝

Պարզությամբ վսեմ, պարզությամբ խորին:
 Օծված սուրբ արչամբ մարտիրոսներուդ,
 Մյուտունի պես ծանր ու հոծ ու լուսեղ,
 Դուն կ'օրորես Կույսն անանց, հըրանուտ,
 Գրաքարիդ կուտ ալիքովն ահեղ:


Խավարին մեջեն քարերուդ ցիրցան,
 Դուն պիտի կանգնիս, Հա՛յ Եկեղեցի,
 Որքան Տառապանքն իր թեն անասանման
 Պատերուդ վրա կքած՝ արծարծի.
 Ու ո՛չ մեկ երկինք, լըվացված, վճիտ,
 Այնքան գողտր, այնքան նո՛սր ըլլա պիտի՝
 Որքան քու վերջին զանգակատունիդ
 Լուսանցքեն լացող պատառիկն երկնի...:

Դուն պիտի կանգնիս մեր մոխրին մեջեն,
 Ծերմակ ժպիտովդդ ներման անհուն.
 Զանգակների հպարտ միշտ պիտի հնչեն,
 Սարսելով խիղճերը կույր ազգերուն,
 Մեր ոսկերց լողով կանթեղդ միշտ վառ,
 Արև-Աչք ըրած Տառապանքն Հայուն,
 Դուն պիտի կանգնիս ցնորքի պես անճառ,
 Խունկ ըրած ծխյունն ավերակներուն...:

Ավագ Հինգշաբթի 1922

ԵՂՎԱՐԴ ԳՈՒԱՆԾՅԱՆ

«Երկնային մեղեդիներ» ժողովածուից





ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ, ԵՐԿԵՐ, ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ,
ԱՌԱՋԱԲԱՆԸ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝
Ս. Ս. ԱՐԵՎՇԱՏՅԱՆԻ, «ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ, 1980, 328 էջ

Վերջերս Երևանում, ինչպես նաև Մոսկվայում հանդիսավորությամբ նշվեց հայ միջնադարյան ականավոր փիլիսոփա Դավիթ Անհաղթի ծննդյան 1500-ամյակը։ Որոշվեց նաև մեծ փիլիսոփայի հոբելյանը նշել Յունեսկո-ի գծով՝ արտասահմանում։

Այդ առթիվ Երևանում և Մոսկվայում լույս ընծայվեցին Դ. Անհաղթի երկերը գրաքարով ու ժամանակակից հայերեն և ռուսերեն թարգմանություններով, լույս տեսան մեծ մտածողի ստեղծագործությանը նվիրված արժեքավոր մենագրություններ, գրքույկներ, ամսագրային հոդվածներ և հիտախանդրամատչելի հրատարակություններ։ Դրանց մեջ հատկապես առանձնանում է գրախոսվող գիրքը, որով փաստորեն հիմք է դրվում հայ փիլիսոփայական մտքի կարևոր հուշարձանների աշխարհաբար թարգմանությանը, որը, հուսով ենք, կունենա իր շարունակությունը և շրջանառության մեջ կդրվեն, բացի Դավիթ Անհաղթից, նաև հայ փիլիսոփայական մտքի մյուս կարկառուն ներկայացուցիչների երկերը, և իրենց անհրաժեշտ նպաստը կրենեն արդի պատմափիլիսոփայական գիտության զարգացմանը։

Միջնադարի մեծ փիլիսոփայի սույն մի-հատորյակը գրաքարից թարգմանել և հրատարակության է պատրաստել փիլիսոփայական գիտությունների դոկտոր, Երեվանի Մետրոպ Մաշտոցի անվան մատենադարանի ավագ գիտաշխատող Սեն Արևշատյանը։

Սեն Արևշատյանը գիտական մեծ և շնորհակալ աշխատանք է կատարել Դավիթ Անհաղթի ժառանգության ուսումնասիրու-

թյան գործում և նույնիսկ կարող ենք ասել, որ Դավիթ Անհաղթին «Անհաղթ» դարձնողը հենց ինքն է։ Բացի այս մի հատորյակից, նա հրատարակել է նաև Անհաղթի գործերի համահավաք քննական բնագրերը՝ առանձին և ռուսերեն թարգմանությունների հետ միասին¹, ինչպես նաև մի փոքրիկ, բայց արժեքավոր գրքույկ՝ նվիրված մեծ մատենագրի կյանքի և ստեղծագործության պատմությանը, ժառանգության ժակատագրին, փիլիսոփայական հայացքների բնույթին ու համակարգին, գիտությունների դասակարգմանը և այլն²։

Դավիթ Անհաղթի երկերի աշխարհաբար սույն գիտական և բարեխիղճ թարգմանությամբ Սեն Արևշատյանը նոր ավանդ է մուծում հայագիտության և հայ փիլիսոփայության պատմության զարգացման գործում՝ ավելի նպաստելով Դավիթ Անհաղթի կյանքի ու գործունեության և, հատկապես, մատենագրական վաստակի հետ կապված

¹ Դավիթ Անհաղթ, Սահմանք իմաստասիրության, Երևան, 1960։

Դավիթ Անհաղթ, Մեկնություն ի «Վերլուծական» Արիստոտելի, Երևան, 1964։

Դավիթ Անհաղթ, Վերլուծություն «Ներածութեան» Պորփիրի, Երևան, 1976։

Давид Анахт. Сочинения: составление, перевод с древнеармянского, вступительная статья и примечания С. С. Арешатяна. М., 1973.

Դավիթ Անհաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, Երևան, 1980, և այլն։

² Արևշատյան Սեն, Դավիթ Անհաղթը հին Հայաստանի ականավոր փիլիսոփա, Երևան, 1980։

քաղաքային փհնելի և դեռևս մշտնջալատ հարցերի պարզաբանմանը:

Աշխատությունը բաղկացած է հետևյալ մասերից. «Առաջաբան» (էջ 3—32), «Փիլիսոփայության սահմանումները» (33—126), «Պոլիտիկայի «Ներածություն» վերլուծությունը» (127—248), «Արիստոտելի «Անալիտիկայի» մեկնությունը» (249—300), «Ծանոթագրություններ» (301—325) և «Անձնանունների ցանկ» (326—327):

Ցավոք արտի միհատորյակի մեջ չի մտել Դավիթ Անհաղթի չորրորդ կարևոր երկը՝ «Մեկնություն «Ստորագրության» Արիստոտելի», քանի որ այս երկը մեզ է հասել թերի փհնակում: Այս գործը երկար ժամանակ վերագրվում էր Ալեքսանդրյան դպրոցի մեկ այլ ներկայացուցչի՝ Էլիաս իմաստասերի գրչին, որի անվամբ էլ հրատարակվել է Հակոբ Մանանդյանի կողմից, Պետերբուրգում³: Բայց ժամանակին Սեն Արևշատյանը կարողացել է հերքել այդ սխալ կարծիքը և ապացուցել, որ այդ գործը կազմում է Դավիթ Անհաղթի ժառանգության անբաժանելի մասը⁴:

Գրախոսվող աշխատությունը մեծ արժեք է ներկայացնում հատկապես այն տեսակետից, որ հանդիսանում է առաջին աշխարհաբար թարգմանությունը՝ կատարված Դավիթ Անհաղթի երկերի քննական բնագրի հիման վրա: Թարգմանությունը կատարված է ընտիր հայերենով, աշխույժ և գեղեցիկ ոճով:

Երևում է, որ հեղինակը երկար և բարեխիղճ, նույնիսկ՝ չափազանց բարդ ու տրքնաջան աշխատանք է կատարել, քանի որ Դավիթ Անհաղթի լեզուն չափազանց խորթին է և իր լեզվաոճական ու շարահյուսական առանձնահատկություններով տարբերվում է դասական գրաբարից (ինչպես հունաբան հայերենի բոլոր մյուս գրվածքները) և ուսումնասիրողից պահանջում է կրկնակի ջանք այդ երկերի բովանդակությունը լավ հասկանալու, առավել ևս՝ ճշգրիտ թարգմանելու համար:

Դժվարությունները մեծ են եղել հատկապես Դավիթ Անհաղթի «Փիլիսոփայության սահմանումները» երկի թարգմանության ժամանակ, քանի որ այս գործը հանդիսա-

նում է ոչ միայն մեծ փիլիսոփայի ամբողջ հայացքների, այլև Հին Աշխարհի ուսմունքների և տրամաբանական մտքի խտացումը, և այստեղ առկա են հարյուրավոր տերմիններ, ժամանակին հատուկ հասկացություններ և հատկապես, որ ամենակարևորն է, փիլիսոփայական սահմանումների ձևակերպումներ, որոնք թարգմանչից մեծ ճշգրտություն են պահանջում⁵:

Այնուամենայնիվ, չնայած այս բոլորի առկայությանը, հեղինակին հաջողվել է հաղթահարել բոլոր դժվարությունները: Նա աշխատել է հնարավորին չափ հարազատ մնալ բնագրին, որը մեծապես չափով մեծացրել է թարգմանության արժեքը, բայց նաև կարողացել է ամեն կերպ, ինչպես ինքն էլ ասում, «աշխարհաբարացնել» այն և խուսափել է «թարգմանչի գործը հեշտացնող, բայց ընդերցողին ոչինչ չտվող, բովանդակությունը փակ պահող շարահյուսական փոխադրում-շրջումներից»⁶: Ընշտ է, երբեմն թարգմանիչը բառացի թարգմանությունից անցնում է ազատ թարգմանության՝ փոխելով առանձին շարկապների կամ մակբայների իմաստը, սակայն պայմանով, որ չխաթարվի գրվածքի բովանդակությունը: Այսպես, օրինակ, Դավիթ Անհաղթը, խոսելով, որ փիլիսոփայության նպատակն է ըստ մարդկային հնարավորության նմանվել Աստծուն, ավելացնում է. «Վասն որոյ ասեն ոմանք...»⁷: Բառացի պետք և թարգմանել «Որի մասին ոմանք ասում են...» ձևով: Բայց թարգմանիչը թարգմանել է այսպես. «Այդ առթիվ ոմանք ասում են...»⁸ (ընդգծումները մերն է—Վ. Բ.): Տեսնում ենք, որ իմաստը բոլորովին չի փոխվել, և դեռ ավելին, երկրորդ ձևով ավելի է շեշտվում փիլիսոփայի գլխավոր միտքը, այն է՝ «Աստծուն նմանվելը»⁹:

Կարևոր են գրքի վերջի պատմա-բանասիրական ծանոթագրությունները (301—325), որոնցում ուշադրություն է հատկացված բնագրական առնչակցության հարցերին, համառոտ կերպով տրվում է Դավիթ Անհաղթի գործերի մեջ հիշված անտիկ փիլիսոփաների կյանքն ու գործունեությունը, պարզաբանվում է, թե տվյալ միտքը արտահայտելիս հայ իմաստասերը ո՞ր դրույրոցին է հակվել և այլն:

Առավել արժեքավոր է գրքի առաջաբա-

³ Մեկնություն Ստորագրության Արիստոտելի, ընծայելով Էլիասի իմաստասիրի, Ս. Պետերբուրգ, 1911:

⁴ Տե՛ս Արևշատյան Ա., Դավիթ Անհաղթի ժառանգությունը մոր լուսարանմամբ, «Հանրեր մատենադարանի», հ. 9, Երևան, 1969: Տե՛ս նաև Արևշատյան Ս. Ս., Формирование философской науки в древней Армении (V—VI вв.), Ереван, 1973, стр. 275—285:

⁵ Դավիթ Անհաղթ, Երկեր, Երևան, 1980, էջ 31:

⁶ Նույնը:

⁷ Դավիթ Անհաղթ, Երկախորթից փիլիսոփայականը, համահավաք քննական բնագրերը և առաջաբանը Ս. Ս. Արևշատյանի, Երևան, 1980, Ժ, 66:

⁸ Դավիթ Անհաղթ, Երկեր, Երևան, 1980, Ժ, 80:

⁹ Նույնը:

նը (3—32): Հենց սկզբում հեղինակը կատարում է հետևյալ ճշգրիտ եզրահանգումը.

«5—6-րդ դարերի ակամավոր փիլիսոփա Դավիթ Անհաղթը պատկանում է հին հայ գիտնականների համաստեղությանը, որոնց հոգևոր սխրանքը շարունակվում է գոյատևել դարերի մեջ: Նրանց անմահությունը անմահությունն է մի ժողովրդի, որը փոթորիկների և պատմության ողբերգական շրջադարձերի պայմաններում պահել-պահպանել է իր ազգային նկարագիրը, իր լեզուն և հոգևոր հարուստ ժառանգությունը, ստեղծված բազում սերունդների անձնուրաց աշխատանքով»¹⁰:

Հեղինակը ճշմարտացիորեն Դավիթ Անհաղթի ժառանգությունը կապում է 5-րդ դարի գաղափարական պայքարի և հայրաբանական գրականության հետ¹¹, որովհետև այդ ուղղությանը հարող մտածողների նպատակն էր փիլիսոփայորեն հիմնավորել և արդարացնել քրիստոնեությունը, որն արդեն Դ դարի սկզբին դարձել էր պետական կրոն և գաղափարական կարևոր գեմը էր մեկ կողմից պարսկական և հետագայում՝ արաբական, մյուս կողմից էլ, հատկապես Քաղկեդոնի ժողովից հետո, բյուզանդական գաղթիչների դեմ հայ ժողովրդի մղած կենսա-մահու պայքարում:

Թարգմանվում են անվանի քրիստոնյա գրողներ և մտածողներ Արիստոտել Աթենացու, Իրենեոսի (Երանոսի), Եվսեբիոս Կեսարացու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիազանցու, Հովհան Ոսկեբերանի և այլոց երկերը, ինչպես նաև անտիկ փիլիսոփաների գործերը (հատկապես հունաբան դպրոցի կողմից), որոնք իրենց ազդեցությունն են թողել 5—6-րդ դարերի հայ փիլիսոփայական և կրոնա-դավանաբանական գրականությունների վրա:

Առաջաբանում համառոտ կերպով խոսվում է մեծ փիլիսոփայի կենսագրության մասին¹²: Դժբախտաբար մինչև այժմ որոշակի կերպով լուծված չէ Դավիթ Անհաղթի անձնավորության հարցը: Բանն այն է, որ 5—7-րդ դարերում երկրի մտավոր կյանքում գործել են բազմաթիվ Դավիթներ (Դավիթ Անհաղթ, Դավիթ Քերական, Դավիթ Բագրևանդի, Դավիթ Տարոնացի, Դավիթ Իպատ, Դավիթ Հարթացի և Դավիթ Քերթոյ)¹³: Դրանց մասին մեզ հասել

են կցկտուր տեղեկություններ, և առայժմ հնարավոր չէ որևէ վերջնական եզրակացության հանգել: Միայն պատմա-բանասիրական հետազոտություններով գիտնականները մոտավորապես որոշում են Դավիթ Անհաղթի ապրած ժամանակը: Ըստ Ս. Արևշատյանի Դավիթ Անհաղթը ծնվել է Ե դարի 70-ական թվականներին, Տարոնի Ներգին գյուղում և մահացել է Զ դարի 50—60-ական թվականներին: Ուսումն առացել և երկար ժամանակ ապրել ու գործել է Ալեքսանդրիայում, Կ. Պոլսում և Աթենքում, որտեղ էլ ստացել է «Անհաղթ» պատվավոր կոչումը: Առաջացած տարիքում վերադարձել է Հայաստան, այստեղ հիմնել է դպրոց, հունարենից հայերենի է թարգմանել իր գործերը և այլն¹⁴:

Այնուհետև հանգամանալից ձևով ներկայացվում են Դավիթ Անհաղթի փիլիսոփայական հայացքների բնույթն ու համակարգը, տրամաբանական, իմացաբանական և բարոյագիտական ուսմունքները¹⁵:

Առաջաբանում նշվում է, որ Դավիթ Անհաղթի փիլիսոփայությունը ոչ միայն հրեական դեր է խաղացել հետագա դարերի հայ փիլիսոփայության և այլ գիտությունների զարգացման գործում (Անանիա Շիրակացի, Հովհ. սրկ. Իմաստասեր, Վահրամ Ռաբունի, Հովհան Որոտնեցի, Գր. Տաթևացի, լուսավորության դարաշրջան և այլն), այլև տարածվել է այլ ժողովուրդների՝ հույների, պարսիկների, արաբների ու մուսուլմանների մեջ և, այդ խողովակով նաև, ազդեցություն է գործել մուսուլման միջնադարյան Եվրոպայի փիլիսոփայական մտքի վրա¹⁶:

Ըստ Ս. Արևշատյանի, մուսուլմանական Հովհաննես Դամասկացին (մոտ. 675—750), որը վաղ միջնադարի ամենամեծ փիլիսոփաներից ու աստվածաբաններից մեկն էր, իր «Գիտելիքի աղբյուրը» գլխավոր աշխատության բաղկացուցիչ մասը կազմող «Դիալեկտիկայում» Դավթի «Փիլիսոփայության սահմանումներից» ամբողջությամբ փոխ է առել բոլոր 6 սահմանումները՝ մուսուլմանաբանությանը և մուսուլմանականությանը, ինչպես նաև փիլիսոփայությունը տեսականի և գործնական բաժանելու դրույթը և այդ երկու բաժանների մեջ մղտնող գիտությունների դասակարգումը և բնութագրումը¹⁷:

Այսպիսով, Դավիթ Անհաղթի երկերի աշխարհաբար սույն միատորոշակը, որակյալ թարգմանությամբ, հմուտ ծանոթագրու-

¹⁰ Նույնը, էջ 8:

¹¹ Նույնը, էջ 4:

¹² Նույնը, էջ 5—7:

¹³ Տե՛ս Վ. Կ. 2ալոյան, Դավիթ Անհաղթ, Պատմա-բանասիրական հանդես, հ. 1, Երևան, էջ 52—53:

¹⁴ Դավիթ Անհաղթ, Երկեր, էջ 5—6:

¹⁵ Նույնը, էջ 10—25:

¹⁶ Նույնը, էջ 25—28:

¹⁷ Նույնը, էջ 28—29:

թյուններով և արժեքավոր առաջաբանով, հիրավի մի գիտական և լուրջ հրատարակություն է:

Բայց պետք է ասել, որ դեռևս ամբողջությամբ ճշտված չէ Դավիթ Անհաղթի ողջ ժառանգությունը: Մեծ մտածողի գրչին պատկանող շատ գործեր դեռևս քողարկված են թանձր մշուշի ներքո: Նույնիսկ նրա գլխավոր գործը՝ «Իմաստության ասման ասմունքները», մեզ է հասել ոչ ամբողջական վիճակում¹⁸:

Այստեղ պետք է նկատի ունենալ հատկապես այն հանգամանքը, որ Դավիթ Անհաղթը Հայ Եկեղեցու հարազատ զավակն է, նրա մեծագույն վարդապետներից մեկը՝ սերած է սնված Սահակ-Մարտայան հոգեվոր սնունդից:

Մեր Եկեղեցին Դավիթ Անհաղթի հիշատակը կատարում է Հայ Եկեղեցու մեծավաստակ վարդապետների, այդ թվում՝ Ս. Մարտայի, Եղիշեի, Մովսես Քերթողի, Գրիգոր Նարեկացու և Ներսես Շնորհալու (Կլայեցու) հետ միասին, Թարգմանաց տոմարի¹⁹ որպես Հայ Եկեղեցու թարգմանիչ վարդապետի: Հետևաբար նա, ըստ վարքագրության, գրել է նաև կրոնա-դավանաբանական և աստվածաբանական բազմաթիվ գործեր, որովհետև չէր կարող անտարբեր մնալ աստվածաբանական և եկեղեցա-քաղաքական այն վեճերին, որոնք Քաղկեդոնի ժողովից հետո տրոհեցին ողջ քրիստոնեական աշխարհը²⁰:

¹⁸ Տե՛ս Ս. Ե. Քոլանջյան, Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրության» երկի ուսմանը ներդրող հրատարակության հայագիտական արժեքը, Դավիթ Անհաղթ, հոդվածների ժողովածու, Երևան, 1980, էջ 238—263:

¹⁹ Օրացոյց, 1981, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, էջ 121:

²⁰ Ս. Արևշատյան, Դավիթ Անհաղթը և հին Հայաստանի փիլիսոփայական միտքը, Պատմա-բանասիրական հանդես, հ. 1, էջ 24—27:

Ս. Արևշատյանը գտնում է, որ Դավիթ Անհաղթին են պատկանում Դիոնիսիոս Արիսպագացու անվամբ սրբագործված չորս աշխատությունները²¹: Դրանք են «Ցաղագս երկնային քահանայապետության», «Ցաղագս եկեղեցական քահանայապետության», «Ցաղագս Աստուածայնոց անուամբ», «Ցաղագս խորհրդականի աստուածաբանության» փիլիսոփայական-աստվածաբանական տրակտատները:

Բացի դրանցից, ըստ ավանդության, Դավթին են վերագրվում նաև ևս երեք կրոնաշունչ աշխատություններ՝ «Ներքողեան ի սուրբ խաչն Աստուածընկալ», «Առածք հինգ», «Վասն բաժանման» գործերը²²:

Իսկ վերջերս Պ. Պողոսյանը իր ընդարձակ հոդվածով փորձել է ապացուցել, որ հայ միջնադարյան մի շատ կարևոր, բայց անուշադրության մատնված ձեռագիր՝ «Եօթնագրեանք»-ը, նույնպես պատկանում է Դավիթ Անհաղթի գրչին²³:

Հույս հայտնենք, որ ապագայում նոր ուսումնասիրությունների լույսի տակ կճշտվի Դավիթ Անհաղթի ողջ ժառանգությունը և սեղանի վրա կդրվի մեծ մտածողի, Հայ Եկեղեցու եռամեծ վարդապետի երկերի ամբողջական հրատարակությունը:

ՎԱՐԴԱՆ ՍՐԿ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ


Հոգևոր ճեմարանի Բ լսարանի ուսանող

²¹ Նույնը:

²² «Մատենագրություն նախնեաց. Կորիւն, Մամբրե, Դավիթ», Վենետիկ, 1833, էջ 103—119, 217—222, 223—224:

²³ Պ. Մ. Պողոսյան, «Եօթնագրեանք»-ի ատեղծվածը և Դավիթ Անհաղթը, Դավիթ Անհաղթ, հոդվածների ժողովածու, 1980, էջ 143—211:





Յ Ո Ւ Յ Ա Կ

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՅՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԻ*

Թ. Բա.— 1590 թվին պարսից Ծափաբա թագաւորի օրօք որ իր զօրքով եկաւ Հայաստան աշխարհը գրավելու և քանի ժամանակից ետոյ որ ուզեց Հայաստանից մեր հայերին գերի տանէր. մեր հայերից մէկ մասը գերի վերցրաւ ու քնեց դէպի Արագ գետը և մեր հայերը չուզելով Արագ գետն անցնեն, Ծափաբա թագաւորը իր զօրքին հրամայում է որ մտրակի գօռով անցկացնեն ու անցել կացրան և այնտեղից էլ տարան ՀՍՖՔԻան քաղաքը, որ Ծափաբասի մայրաքաղաքն էր և այն տեղից էր փոխադրան Փէրիա (Թ. Բք) գաւառում. և այն տեղից էլ բաժան բաժան արան, մէկ մասը Բուրվարի գաւառում, մէկ մասը Քեազազ գաւառում և մէկ մասը Քեաժարա գաւառում, և այդ բաժան բաժան անելոց ետոյ այս հիշեալ Սր. Թուխմանուկ Ավետարանը Մելիքեան գերդաստանը իրենց ետն առնելով ու գնացին Բուրվարի գաւառում և այնտեղ բնակչութիւն հաստատեցին և տարիներից ի վեր եկան Գովզ գիւղում և այս հիշեալ Սր. Թուխմանուկ (Թ. Գա) Ավետարանը Գովզ գիւղում մնաց մինչև 1948 թվին ներգաղթի ժամանակ: Այս յիշեալ Ավետարանը վերցրանք տարանք Նաւարաթ գիւղ և այնտեղից էլ վերցրանք 1948 թվին Յունվար 8-ին տարանք Թէհրան քաղաքում և Թէհրանից մեր ետն առանք ու քերանք հայրենիք, Արովեան քաղաքում Սարալանջ 15 շենքում 82 բնակարանում:

1978 թվին բոլոր Մելիքեան և Դալիթեան տո(հ)-

մը խորուրդ արան որ այս հիշեալ Սր. Թուխմանուկ Ավետարանը տանենք հանձնենք Սր. Էջմիածին վանքը Մայր Տաճարին:

Գրվեց և վավերացվեծ

1975 թ. Յունիս 25:

Թ. Գր.— Արդ օվ հայրք և եղբայրք, յորժամ ընթեռնուք զՍուրբ Ավետարանս և կամ տեսանէք հիշեցէք զիս, ստացող սորա զիսօջա Դավութն և կողակիցն իւր զՄասում Փաշէն և զԾնօղքն իւր զՍէթ և զԽանաղէն և եղբայրքներ, Մելիքեան և Դալիթեան գերդաստանի անունները Տէր Պետրոս, Տէր Պետրոսի որդին Տէր Մկարոբ, Տէր Մկարոբի որդին Տէր Յովհաննէս, Տէր Յովհաննէսի որդիքն Մկրտում, Կարապետ, Աղբաբա և Հէրապետ, (Թ. Դա) Մկրտումի որդին Ինջիրդուլի, Ինջիրդուլի որդիքը Զօրաք և Մելիքսէթ, Զօրաքի որդիքը Եղիա, Յովակիմ և Պողոս: Այս երեք եղբայրները ամեն մէկը երեքից չորս զավակ են ունեցել, բաց դժբախտաբար այս ամբողջ ընտանիքը 1918 թվին սովից և հիվանդութիւնից կոտորվեցին զրօ եղան: Մելիքսէթի որդիքը Յովհաննէս, Կարապետ և Խաչիկ. Յովհաննէսի որդիքը Դավիթ և Սուրէն, Դավիթի որդիքը Վաղենակ, Ռաֆիկ և Ժօրժ. Վաղենակի որդիքը Գեորգ:

Թ. Դք.— Գեորգի որդիքը.

Ռաֆիկի որդիքի անունը Էմին.

Էմինի որդիքը.

Ժօրժիկի որդիքը.

Թ. Եա.— Սուրէնի որդիքն Ռուբիկ, Վիգէն, Մաւիս և Արարատ.

Ռուբիկի որդիքը.

Վիգէնի որդիքը.

Մաւիսի որդիքը.

Արարատի որդիքը.

Թ. Եք.— Կարապետի որդիքը Յակոբ և Վաղարշակ, Հակոբի որդիքը Ժուզէֆ և Վաղարշակ.

Ժուզէֆի որդիքը.

Վաղարշակի որդիքը.

Խաչիկի որդիքը Իվան և Երվանդ. Երվանդի որդիքը Սուրիկ.

Սուրիկի որդիքը.

* Ծարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի Ռ Ռ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի Ռ Ռ Ը—Ժ-ից, 1968 թվականի Ռ Է-ից, 1970 թվականի Ռ Ռ Դ—Ե-ից, ԺԲ-ից, 1971 թվականի Ռ Ռ Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի Ռ Ռ Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի Ռ Ռ Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի Ռ Ռ Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի Ռ Ռ Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի Ռ Ռ Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից, 1977 թվականի Ռ Ռ Գ—Ժ-ից, 1978 թվականի Ռ Ռ Ա-ից, Դ-ից, 1979 թվականի Ռ Ռ Բ-ից, Դ-ից, Զ—Է-ից, ԺԲ-ից և 1980 թվականի Ռ Ռ Բ—Գ-ից, Ը-ից և Ժ—ԺԲ-ից:

Թ. Զա.— Աղբարի որդիքը Պետրոս Գրիգոր, Պետրոսի որդին Սիմոն և Յարութիւն. Յարութիւնի որդին Արշակ. Արշակի որդին Պետրոս. Սիմոնի որդին Հաբեաւ և Ասատուր, Հաբեաւի որդիքը Անդրանիկ, Սերոբ, Մարտիրոս, Քերոբ, Դավիթ, Մարգար, Գրիգոր:

Պետրոսի որդիքը.

Անդրանիկի որդիքը Սարօ.

Սարոբի որդիքը.

Թ. Զբ.— Սերոբի որդիքը Ռուբիկ, Ռաֆիկ.

Ռուբիկի որդիքը.

Ռաֆիկի որդիքը.

Մարտիրոսի որդիքը Աբեաւ, Աշոտ, Կոստանդ.

Աբեաւի որդիքը.

Աշոտի որդիքը.

Թ. Էա.— Կոստանդի որդիքը.

Քերոբի որդիքը, Ատոմիկ, Ռոմիկ, Գեղամ, Սպարտակ.

Ատոմի որդիքը.

Ռոմիկի որդիքը.

Գեղամի որդիքը.

Սպարտակի որդիքը.

Դավիթի որդիքը Վրէժ Սերեան.

Վրէժի որդիքը.

Թ. Էբ.— Սերեանի որդիքը.

Մարգարի որդիքը Համլէթ, Գագիկ, Ռուբէթ.

Համլէթի որդիքը.

Գագիկի որդիքը.

Ռուբէթի որդիքը.

Գրիգորի որդիքը, Ռուդիկ, Արտուրիկ.

Ռուդիկի որդիքը.

Արտուրի որդիքը.

Թ. Թա.— Ասատուրի որդիքը Սիմէոն, Զաքար, Մանուկ և Մասիս, Սիմէոնի որդիքը Հրաշ և Ռազմիկ.

Զաքարի որդիքը Ժիրապր.

Մանուկի որդիքը Ռուբէթ.

Մասիսի որդիքը.

Թ. Թբ.— Հերապետի որդին Մարտիրոս, Մարտիրոսի որդիքը Սուլթան և Մուսի, Սուլթանի որդիքը Հերապետ և Հակոբ, Հերապետի որդիքը Յարութիւն, Մատթէոս Է Ռուստամ, Յարութիւնի որդիքը Թադէոս, Յովնաննէս և Ծմակ, Թադէոսի որդիքը Անդրանիկ, Ռուբիկ և Էդիկ, Յովնաննէսի որդիքը Վրէժ, Վարուժ, Վիգէն, Ալֆրէտ և Ալբերթ, Ծմակի որդիքը Վարդան և Ռազմիկ.

Անդրանիկի որդիքը.

Ռուբիկի որդիքը.

Էդիկի որդիքը.

Թ. Ժա.— Վրէժի որդիքը.

Վարուժի որդիքը.

Վիգէնի որդիքը.

Ալֆրէդի որդիքը.

Ալբերդի որդիքը.

Վարդանի որդիքը.

Ռազմիկի որդիքը.

Թ. ԺԱբ.— Հակոբի որդիքը.

Սարգիսի որդիքը.

Գագիկի որդիքը.

Անդրանիկի որդիքը.

Վալօդի որդիքը.

Արշակի որդիքը.

Վազգենի որդիքը.

Վարդգէսի որդիքը.

Արարատի որդիքը.

Արշակի որդիքը.

Յովնաննէսի որդիքը.

Ռուբիկի որդիքը.

Ռաֆիկի որդիքը.

Թ. ԺԲա.— Հակոբի որդիքը Ռաթէոս, Արթուր և Ստեփան, Արթուրի որդիքը Հակոբ, Սարգիս և Գագիկ, Ստեփանի որդիքը Անդրանիկ, Վալօդ, Արշակի:

Ռաթէոսի որդին Աղասի, Աղասիի որդիքը Վազգէն, Վարդգէս և Արարատ.

Ռուստամի որդիքը Գեորգ, Մինաս և Վաղարշակ. Գեորգի որդիքը Արշակ, Հովնաննէս, Ռուբիկ, Ռաֆիկ.

Մինասի որդիքը Մնացական, Վահան, Ռուստամ. Վաղարշակի որդիքը Լօվա, Նորիկ.

Մնացականի որդիքը.

Ռուստամի որդիքը.

Վահանի որդիքը.

Թ. ԺԲբ.— Լօվայի որդիքը.

Նորիկի որդիքը.

Մուսի որդին Իսաղուլի. Իսաղուլիի որդիքը Սողոմոն և Ծատուր, Սողոմոնի որդիքը Խանգար, Տիրոս և Յովնանի, Խանգարի որդիքը Սնակ, Սաւաղ, Բանաթ, Բաշիր, Էդիկ. Սնակի որդիքը Վարուժ, Սուրեն, Վազգէն, Ֆրէդ. Սաւաղի որդիքը Դերենիկ, Վաղրիկ, Վանիկ. Բանաթի որդիքը Ալբերթ, Բաշիրի որդիքը Ռուբիկ, Հովիկ.

Սնակի որդիքը Վարուժ, Սուրեն, Վազգէն, Ֆրէդ. Վարուժի որդիքը.

Թ. ԺԳա.— Սուրենի որդիքը.

Վազգէնի որդիքը.

Ֆրէդի որդիքը.

Սաւաղի որդիքը Դերենիկ, Վարդիկ, Վանիկ.

Դերենիկի որդիքը.

Վարդիկի որդիքը.

Վանիկի որդիքը.

Բանաթի որդիքը Ալբերդ.

Ալբերդի որդիքը.

Բաշիրի որդիքը Ռուբիկ, Հովիկ.

Ռուբիկի որդիքը.

Հովիկի որդիքը.

Թ. ԺԳբ.— Տիրոսի որդիքը Սամվէլ և Շերամ, Սամվէլի որդիքը Ռոմիկ, Ռօբերթ, Ռաիմոն. Շերամի որդիքը Զօրիկ և Ժօրժիկ.

Ռոմիկի որդիքը.

Ռուբերթի որդիքը.

Ռաիմոնի որդիքը.

Ժօրժիկի որդիքը.

Զօրիկի որդիքը.

Ծատուրի որդիքը Խաչատուր և Յովնան.

Խաչատուրի որդիքը Նորիկ և Հովիկ.

Թ. ԺԴա.— Նորիկի որդիքը,
Հովիկի որդիքը:

№ 509
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Թերթերը՝ 210:— **Պրակները՝ 18,** յուրաքանչյուրը 12 թերթից, բացի ԺԸ, Ի և ԻԱ պրակները, որոնք 10-ական թերթից են:— **Մեծությունը՝** $14.8 \times 10.4 \times 3.7$ սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:— **Կազմը՝** կաշեպատ տախտակ, որի վրա ճնշումով խաչ և այլ զարդեր են նկարված:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում կա մեկական թերթ խումացած և կեղտոտած հաստ մագաղաթ վրան հումարեն գրությամբ, հավանաբար ԺԴ—ԺԵ դարերի: Բովանդակությունը Նոր Կտակարանից է և վերաբերում կույրի աչքը բացելու Քրիստոսի հրաշքին:— **Վիճակը՝** անբավարար, կազմը քայքայված է և սկզբից էլ ամբողջ երեք պրակ պակասում:— **Գրությունը՝** միապսղես:— **Դատարկ թղթերը՝ 210ա** և **210բ:**— **Տողերը՝ 17:**— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** նոսրգիր:— **Հարդագրությունը՝** ձեռագրում կան միջակ գեղեցկությամբ թռչնագրեր և զարդագրեր, ինչպես նաև լուսանցազարդեր և վեց զբլ-խազարդեր (22ա, 53ա, 79բ, 111բ, 188բ և 167ա):— **Գրիչը՝** Գրիգոր դպիր:— **Պատվիրատուն՝** Մահտեսի Կուլապի:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 1666 թ.:— **Վայրը՝** Կեսարիա:— **Մանրությունը՝** ձեռագիրը նկեր է ստացվել Ֆրանսիայից, Իսի-Լե-Մուլիոնյի բնակիչ Պրմ. Զատիկ Ասլանյանից: Այն Մայր Աթոռ է բերվել Վեհափառ Հայրապետի ձեռամբ 1979 թ. հունիս ամսին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիրն ունի սաղմոսներ, երգեր և աղոթքներ:
Թ. 22ա.— Սաղմոս Դաթի: Մի նախանձիր ընդ չարս, մի ընդ այնուհիլ որ գործեն զանօրէնութիւն:

Թ. 53ա.— Ի կատարած վս. ժողովրդեանն որ ի սրբոյն հետացեալ էին: Ի ժամանակի զի կալան զնա այլազգիքն ի գէթ: Յարձանագիր, Սաղմոս դաթի:
Թ. 79բ.— Պակասեացին օրհնութի ի Դաթէ յողոյ յեսեա աղմս Յասաի: Իբրև զի բարի է իւր Ած. և ոյք ուղեղեն սրտիք:

Թ. 111բ.— Աղօթք ի Մովսէս յայրն Այ. Տր. ապա: Էն եղեր մեր ազգէ մինչև յազգ...

Թ. 188բ.— Ալելուիա: Խոստովան եղերութ տն զի քաղցր է, զի յախտեան է ողորմութիւն նորա:

Թ. 167ա.— Օրհնութիք աշտիճանաց: Ի ննդութի իմոմ ես առ տր կարդացի և լուսա ինձ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 21բ.— Զանպիտան գծողս Գր(իգոր) յիշեա ի տ(է)ր ամէն:

Թ. 208ա.— Պայծառ ընթերցողաց ծանուցում: Փառք անպարագիծ էին. այնմ որ ոչ էն հետագօտի:

Գոհութի(ւն) անգըն(208բ)մին գոյին, որ է բան կնիք և սահման էին. փառատրութի(ւն) անպար իմանալի սեռին, որ է համագոյ էին, և փառակից բանին: Այժմ և միշտ և յախտեանս յախտեցից ամէն:

Աստանօր յանգեղեալ ասարտեցաւ ս(ուր)ք երգարանս՝ զոր հոգին ս(ուր)ք թելադրեաց ի շրթունս մարգարէին Ածախօրն Դաթի, և լաւ և ընտիր օրինակէ, որ կոչի Գառնեցոյ, ի թուաբերութեան Հայկազեան տումարի և Յաքեթական տոհմի ՌԾ (1100)երորդի և ԺԵ (15) յանդորդի, մայիս ի յերեսնի (80): Ի հայրապետութե(ան) հայոց Տեառն Եղիազար սրբազան Կողկսի, ի մայրաքաղաքն Կեսարիա, ընդ հովանեալ յԱծաքնակ և քրօքազումար մէ(208ա)նաստանս սր Ածածնա և սր Սարգըսա, և այլ բազմահոյլ ժողովս սրբոց որ աստ կան հաւաքեալ: Ձեռամբ յոգնամեղ և մատնադեղև անարհեստ գրչի Գրիգորի դպրի, ի խնդրոյ պարոն մահտեսի Կուլապուն, ի վայելումն որոյն Ածատուրին, զոր Տ(է)ր Ած բարով և խաղաղութք վայելել տացէ մինչև ի խորին ծերութե(ան) ամէն:

Արդ յերեսս անկեալ պաղատիմ Քասսէր մանկանց Սր Սիօնի, որք հանդիպիք սմա կարդալով և կամ գաղափարելով, յիշեսցիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զեղկելի գծողս Գրիգոր, և զուսուցիչն իմ զտէր վարպետ Միմաս երածիշուն, զհայրն իմ Յովհաննէս, և զմայրն իմ Աննա, զեղբարքս (208բ) իմ զՄարտիրոս և զՅովհաննէս, և զամ արեան մերձաւորքս զկենդանիս և զհանգուցեալս առ Քս: Եւ որ ասացէ Ած ողորմի, ողորմեսցի նմա Յս Քս ի միս անգամ գալստեանն իւրոյ, որ է օրհնեալ անգրաւ յախտեմի ամէն:

Հայր մեր որ յերկինս ես:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկզբի մագաղաթ պահպանակի վրա)
ա բ գ դ ե զ է (գրչափորձ, գրված է մի քանի անգամ):

Թ. 210բ.— Ռաբբի, վրտ, ուսն, ջամբ: ալտայ. վի. տայ. կամա. զելտայ. է՝ է զիտայ. ի դայ. եօրայ. դապատլավ. գայ մինի. ի Քսի օպի. ուսիմայ:

(վերջի մագաղաթ պահպանակի վրա)
Կաղնտոսին.

Կաղնտին, Ած ոմ մանիցէք ի շառի:

№ 510
ՇԱՐԱԿՆՈՑ

Թերթերը՝ 337:— **Պրակները՝** նախապես եղել է 33, սակայն հետագայում վեց պրակ (Ա, Բ, Գ, Դ, Զ և Ժ) ընկել և կորել է: Պրակների ծավալը շատ անկանոն է, զանազան չափերի են, այսպես ի՛նչ և ԼԳ՝ 8 թերթից են, Ե, Լ և ԼԱ՝ 10, ԺԱ՝ 11, Է, ԺԶ, ԺԸ, ԻԱ, ԻԶ, ԻԸ, ԻԹ և ԼԲ՝ 12, Ը, ԺԷ, ԺԹ և ԻԳ՝ 13, Թ, ԺԲ, ԺԴ, Ի, ԻԲ և ԻԴ՝ 14, ԺԳ՝ 15, ԺԵ՝ 17:— **Մեծությունը՝** $14.2 \times 10.2 \times 4.5$ սմ.:— **Նյութը՝**

դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:— **Կազմը**՝ ընկել և կորել է:— **Պահպանակներ**՝ չունի:— **Վիճակը**՝ վատ, սկզբից, միջից և վերջից պակասավոր է: Ամբողջ արակներ կորել են: Տեղ-տեղ էլ միջից կտրտված թերթեր կան, հատկապես մանրանկար-չություն պարունակող թերթերը:— **Գրությունը**՝ 108ա, 245բ, 316ա—318ա:— **Տողերը**՝ 21—22:— **Գծումները**՝ ճշմոտմով:— **Գիրը**՝ բոլորգիր:— **Ջարդագրություն**՝ ձեռագիրն ունի բավականի սիրուն մանրանկարչություն: Սկզբնական՝ մատյանից բավական թվով նկարներ կորել են: Այժմ կան ամբողջական էջի չորս նկարներ (108բ, 161բ, 221բ և 245ա), վեց գլխագրեր (40ա, 54ա, 107ա, 162ա, 222ա և 275ա), ինչպես նաև բազմաթիվ սիրուն թղթագրեր և զարդագրեր, ծաղիկներ և բույսեր, սրբեր և հրեշտակներ, գմբեթներ և խաչեր, լուսանցազարդեր և թղթումներ, նաև Ս. Գրիգոր Լուսավորչի նկարը (28բ): Նաև կտրատված գլխագրեր (4բ և 244բ) և ամբողջական էջի կտրատված նկարի մի մասը (274բ):— **Գրիչը**՝ անհայտ:— **Պատվիրատուն**՝ անհայտ:— **Մաղկողը**՝ անհայտ:— **Ժամանակը**՝ ժե—ժԶ դարեր:— **Վայրը**՝ անհայտ:— **Մանրություն**՝ ձեռագիրը նկեր է ստացվել Ֆրանսիայից, Իսի-Լե-Մուլի-նոյի բնակիչ Պրմ. Ջատիկ Ապանյանից: Այն Մայր Աթոռ է քերվել Վեհափառ Հայրապետի ձեռամբ 1979 թ. հունիս ամսին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիրը պարունակում է շարականներ, կանոններ և երգեր, բոլորը գրված հայկական խազերով:

ՀԻՇՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Թ. 106բ.— Գալուստ հոբուն սրբոյ յօր պէնտա-կոստին ի դասս առաքելոցն ըստ խոստման բանին:
Թ. 316բ.— Զօրահն շարական է:
Զօրայ Սերիկեանին է այս շարականը այժմ:
Թ. 317բ.— Այս շարականը Զօրային է այժմ:

№ 511 ՏՕՆԱՑՈՅՑ

Թերթերը՝ 160:— **Պրակները**՝ 14, յուրաքանչյուրը 12 թերթից, բացի Ա՝ 11 և ԺԴ՝ 5 թերթից են:— **Մեծությունը**՝ 11×8×3.7 սմ:— **Նյութը**՝ դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:— **Կազմը**՝ կաշեպատ տախտակ, որի վրա ճշմոտմով զարդեր են նկարված: Ունեցել է երկու բռնիչներ, որոնց մեկն ընկել է:— **Պահպանակներ**՝ սկզբում և վերջում մեկական թերթ յուրուր, բացի այդ սկզբում կա նաև մի թերթ դեղնած և խումացած մագաղաթ, Ավետարանի բովանդակությամբ և ժԲ—ժԳ դդ. գրությամբ:— **Վիճակը**՝ բավարար:— **Գրությունը**՝ միասյուն:— **Դատարկ թղթերը**՝ 1ա, 1բ, 160ա և 160բ:— **Տողերը**՝ 12—13:— **Գծումները**՝ ճշմոտմով:— **Գիրը**՝ բոլորգիր:— **Ջարդա-**

գրություն՝ ձեռագիրն ունի մի քանի հասարակ մանրանկարներ. զարդագրեր՝ 31բ և 38ա, թղթագրեր՝ 4ա և 69ա, գլխագրեր՝ 4ա և լուսանցազարդ՝ 4ա:— **Գրիչը**՝ անհայտ:— **Պատվիրատուն**՝ անհայտ:— **Մաղկողը**՝ անհայտ:— **Ժամանակը**՝ ժԷ—ժԸ դարեր:— **Վայրը**՝ անհայտ:— **Մանրություն**՝ ձեռագիրը նկեր է ստացվել Ֆրանսիայից, Իսի-Լե-Մուլի-նոյի բնակիչ Պրմ. Ջատիկ Ապանյանից: Այն Մայր Աթոռ է քերվել Վեհափառ Հայրապետի ձեռամբ 1979 թ. հունիս ամսին:

ՀԻՇՍԱԿԱՐԱՆ

Թ. 159բ.— Փառք համագոյ և համապատի գուգակչիո և հաւասար անբաժանկի Սբ. Երրորդու-թե(ան) հատ և որդոյ և հոգոյն սրբոյ:

№ 512 ՍՏԵՂԻԲ

Թերթերը՝ 214:— **Պրակները**՝ 27 հատ: յուրաքանչյուրը 8-ական թերթից:— **Մեծությունը**՝ 21.2×15×2.5 սմ:— **Նյութը**՝ դիմացկուն տպիտակ մալուր թղթ:— **Կազմը**՝ լաթակազմ սովորաբար: Երկու երեսների վրա ճշմոտմով նկարված է խաչ և նշխարնով սկիհ, իսկ չորս անկյուններում կան զարդաբանքներ: Կողմն գրված է ուկեղույն տառերով «Ստեղիք» 3:— **Պահպանակները**՝ սկզբում և վերջում կա մեկական վարդագույն հասարակ թուղթ:— **Վիճակը**՝ գերազանց:— **Գրությունը**՝ միասյուն:— **Դատարկ թղթերը**՝ 1ա—2բ, 4ա—7բ, 181ա—214բ:— **Տողերը**՝ 5:— **Գծումներ**՝ չունի:— **Գիրը**՝ ամբողջ ձեռագիրը գրված է չինական սև թանաքով և հայկական նոր խազերով:— **Ջարդագրություն**՝ չունի:— **Գրիչը**՝ անհայտ:— **Պատվիրատուն**՝ անհայտ:— **Ժամանակը**՝ 20-րդ դարի սկիզբ:— **Վայրը**՝ անհայտ:— **Մանրություն**՝ ձեռագիր սույն մատյանը 1979 թ. հուլիս ամսին ստացված է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Նոր Վեհարանի հայրապետական գրադարանից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Թ. 3ա.— Ցանկ ստեղեաց:
Թ. 8ա.— Մանկունք Պետրոսի և Պողոսի սրբազան առաքելոց:
Թ. 13բ.— Համբարձի նոցին:
Թ. 20ա.— Մանկունք որդուցն որոտման Սրբոց առաքելոցն Յակովբայ և Յովհաննո:
Թ. 27ա.— Մանկունք եօթանասուն երկու աշակերտացն Քրիստոսի:
Թ. 32բ.— Մանկունք քառասնից մանկանց:
Թ. 38ա.— Մանկունք ասորշարութեան:
Թ. 43ա.— Մանկունք աուր յարու(թեան) Ղազարոս:
Թ. 46բ.— Համբարձի առազ ուրբաթոս:
Թ. 51բ.— Մանկունք առազ շաբթոս:

- Թ. 54բ.— Մանկունք վարդապետի Ա. ատուր:
 Թ. 58բ.— Համբարձի վարդապետի Ա. ատուր:
 Թ. 68ա.— Մանկունք վարդապետի Բ. ատուր:
 Թ. 67ա.— Մանկունք վարդապետի Գ. ատուր:
 Թ. 72բ.— Մանկունք խաչի եօթներորդ ատուր:
 Թ. 79բ.— Մանկունք մանկանցն Բեթլեհեմի:
 Թ. 82բ.— Մանկունք Կրեշտակապետացն Միքա-

յէլի և Գաբրիէլի:

- Թ. 89ա.— Մանկունք Սրբոցն Սուրբասեանց:
 Թ. 97ա.— Համբարձի Վահանայ Գողթնացուն:
 Թ. 111ա.— Համբարձի Սրբոց Ղևոնդեանց:
 Թ. 127բ.— Մանկունք Նիկողայոսի հայրապետին:
 Թ. 133ա.— Մանկունք Յովհաննու Ոսկերեան

հայրապետին:

- Թ. 140ա.— Մանկունք Սրբոցն Բարս(և)դի հայրապետին:

- Թ. 147ա.— Մանկունք սրբոցն Վարդանանց զօրավարաց:

- Թ. 155ա.— Համբարձի Սրբոց Խաչի:

- Թ. 167ա.— Մանկունք մանկանցն Բեթլեհեմի.

Բ. Տեսակ եղանակաւ:

- Թ. 170բ.— Վերացման Ա. Խաչի Զ.րդ ատուր օրհնութեան վերջին հատուածը: ԲՃ. ծանր:

ՀԻՇՍԱՍԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1ա, 2ա և 16ա թերթերում երեք տեղ կա Վազգէն Ա Հայրապետի ուղղանկյուն կնիքը, 3.5×2.2 սմ. չափերով, մանուշակագույն թանաքով, որի վրա գրված է հետևյալը.—

Վազգէն Ա.

Վթղիս. Ամ. Հայոց:

№ 518

ՕՐԱՑՈՅՑ

Թերթերը՝ 103:— Պրակները՝ 9, յուրաքանչյուրը 12-ական թերթից:— Մեծությունը՝ $9.2 \times 7.3 \times 2$ սմ.:— Նյութը՝ դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:— Կազմը՝ կաշեպատ ստվարաթուղթ, որ դրված է ստվարաթուղթից պատրաստված մի տուփի մեջ:— Պահպանակները՝ սկզբում և վերջում երեքական թերթ հասարակ թուղթ:— Վիճակը՝ լավ:— Գրությունը՝ միասնական:— Դատարկ թղթերը՝ 3ա և 10բ:— Տողերը՝ 13:— Գծումները՝ ճնշումով:— Գիրը՝ բոլորգիր:— Զարդագրություն՝ ձեռագրում կա հասարակ մի գլխազարդ և մի հատ էլ լուսանցազարդ (11ա) և 36 հատ զարդագրեր, որոնք այբուբենի տառերն են (Ա—Զ):— Գրիչը և ծաղկողը՝ Հովսեփ:— Պատվիրատուն՝ անհայտ:— Ժամանակը՝ 17—18-րդ դարեր:— Վայրը՝ անհայտ:— Մանրությունը՝ նվեր ստացված սույն մատյանը Վեհափառ Հայրապետը հանձնեց Ձեռագրատուն 3 հոկտեմբերի 1979 թ.:

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առաջաբան՝ թթ. 1ա—2բ.

Օրացուցային տախտակ՝ թթ. 3բ—10ա.

Օրացուց՝ թթ. 11ա—103բ:

ՀԻՇՍԱՍԿԱՐԱՆ

- Թ. 1ա.— Հինգ հարիւր ամ անցանի.
 Երսուն և երկու յարաքարդի.
 այսքան ամօք վերջքըն
 լինի, դձ յառաքն սկսանի:
 Է սահմանած անփոխելի.
 մինչ ի գալուստըն Բի. որք
 ընթեռնուք սիրով սրտի.
 յիշման արեք զմեզ արծ(ա)նի:

Ով ընթերցողք՝ յործ(ա)մ

տարին մահանջ լինի. . . .

- Թ. 2բ.— Յայտց մէջն անլի և պակաս չի գար
 մինչև ի կատարած աշխարհի: Ամէն:

- Թ. 103բ.— Քէն հանապազ մահանջէ՝ զմնացեալն
 ի փիրն հարց՝ և զանարծան զՅովսէփս յիշեա:

ՀԻՇՍԱՍԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Ձեռագրի սկզբի պահպանակի վրա գրված է)

Ն. Ա. Օծություն

Տ. Տ. Վազգէն Ա.

Կաթողիկոսին

Ամենայն Հայոց:

№ 514

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՑ

Թերթերը՝ 480:— Պրակները՝ կազմված լինելուն մնացել են թելակարի տակ և հայտնի չէ, թե քանի հատ են:— Մեծությունը՝ $20.8 \times 16 \times 2.6$ սմ.:— Նյութը՝ դեղնած գծավոր բարակ թուղթ:— Կազմը՝ ստվարաթուղթ:— Պահպանակներ՝ սկզբում և վերջում մեկական հասարակ դեղին թուղթ:— Վիճակը՝ բավարար:— Գրությունը՝ միասնական:— Դատարկ թղթերը՝ ամբողջ ձեռագիրը գրված է թղթի մեկ երեսի վրա (393ա—494ա թերթերը), որով ձախակողմյան բոլոր էջերը դատարկ են, ի բաց առջալ մի շարք թերթերից, որոնց վրա հետագայում հավելումներ, ծանոթագրություններ և բացատրություններ են գրված դիմացի էջի բովանդակության հետ առնչվող: Սկզբից, միջից և վերջից դատարկ են հետևյալ թերթերը՝ 1ա—7բ, 256ա, 276ա, 403ա, 424բ—430բ:— Տողերը՝ 19:— Գծումները՝ գործարանային գծավոր թուղթ:— Գիրը՝ շղագիր:— Զարդագրություն՝ ձեռագիրն ունի մի շարք հասարակ փոքրիկ զարդեր, գծված կապույտ և կարմիր թանաքով: Առանձնապես գեղեցիկ են կարմիր թանաքով գծված 214ա և 215ա թերթերի ծաղիկներն ու բույսերը:— Գրիչը և պատվիրատուն՝ անհայտ:—


Ծաղկողը՝ անհայտ։— **Ժամանակը՝** 19-րդ դար։—
Վայրը՝ անհայտ։— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն
ստացվել է «Էջմիածին» ամսագրի խմբագրությունից
29 նոյեմբերի 1979 թ.:

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆ

- Թ. 8ա.— Պատմություն Հայ Եկեղեցույ.
Հայ աշխարհի առաջին զոյգ լուսատրիչ-
ները.
Ս. Թադևոս Առաքեալ:
Թ. 12ա.— Ս. Բարդուղիմէոս Առաքեալ:
Թ. 14ա.— Առաքելական յաջորդները:
Թ. 18ա.— Քրիստոնէութեան հետքեր ի Հայս.
Բ. և Գ. դարուց մէջ:
Թ. 23ա.— Ս. Գրիգոր Լուսատրիչ.
Ծնունդ և դաստիարակութիւն Գրիգորի:
Թ. 25ա.— Տրդատի գահակալութիւնը.
Գրիգորի տանջանքը:
Թ. 28ա.— Հոփսիսիմանք:
Թ. 32.— Տրդատայ հիւանդութիւնը.
Գրիգորին ելքը ի վիրապէն:
Թ. 34ա.— Ս. Լուսատրիչին տեսիլքը:
Թ. 36ա.— Մեհեաններու կործանումը.
Ս. Գրիգորի ձեռնադրութիւնը.
Քրիստոնէական վերջնական յաղթա-
նակը:
Թ. 43ա.— Ս. Գրիգորի մեծատրական կեանքը և
Արիստագէսի ձեռնադրութիւնը.
Տրդատայ ուղևորութիւնը դէպ ի Հռոմ:
Թ. 47ա.— Վրաց և Աղուանից դարձը:
Թ. 48ա.— Ս. Արիստակէս հայրապետ:
Թ. 51ա.— Ս. Վրթանէս հայրապետ:
Թ. 54ա.— Ս. Գրիգորիս աղուանից հայրապետ:
Թ. 56ա.— Ս. Յուսիկ հայրապետ:
Թ. 58ա.— Դանիել Բոր Եպիսկոպոս և Յուսիկ
որդուց եղերական մահը:
Թ. 60ա.— Տ. Տ. Փառէն և Շահակ հայրապետք:
Թ. 62բ.— (Այստեղ տրված է ժամանակագրա-
կան մի փոքր ցուցակ, որտեղ նշված
են հռովմեացի կայսրերի, հայոց թա-
գաւորների և հայրապետների ամուս-
նելը, նշանավոր դէպքերը և թվական-
ները):
Թ. 63ա.— Ս. Ներսէս Պարթև. ընտրութիւն և
ձեռնադրութիւն Ներսիսի:
Թ. 69ա.— Արշակի և Ներսէսի միջև գծադրական
առիթներն ու Չունակ հակաթոռ կա-
թողիկոսը:
Թ. 72ա.— Ներսէսի դեսպանութիւնն առ Վաղէս.
Խաղ եպիսկոպոս և Արշակաւանի հիմ-
նարկութիւնը:
Թ. 75ա.— Պապի գահակալութիւնը. Ս. Ներսէսի
մահը:
Թ. 79ա.— Յուսիկ Բ. կաթողիկոս. բարեգործա-
կան հաստատութիւններու և եկեղե-
ցական կարգերու խանգարումը:

- Թ. 82ա.— Զաւէն և Ասպուրակէս կաթողիկոս:
Թ. 85ա.— Սահակայ ընտրութիւնը. Կենսագրա-
կան գիծեր. Վաղարշապատի տեսիլքը:
Թ. 88ա.— Վասնշապուհի թագաւորութիւնը. Սա-
հակ պարսից դուռը կերթաց:
Թ. 92ա.— Ս. Մեսրոպ և գրի գիտը:
Թ. 95ա.— Թարգմանիչք. Ս. Գրոց թարգմանու-
թիւնը:
Թ. 103ա.— Սահակ արևմտեան հայոց մէջ:
Թ. 106ա.— Սահակի դարձը և Արտաշիրի թա-
գաւորութիւնը:
Թ. 108ա.— Մեսրոպի կրթական գործունէութիւնը
յունական բաժնին մէջ. Բոքորիտոն աղանդատունե-
րը վրաց և աղուանից գրերու գիտը:
Թ. 113ա.— Արշակունեաց թագաւորութեան բար-
ձրութիւնը. Սահակայ գահընկէցութիւնը.
Թ. 121ա.— Եփեսոսի Ս. ժողովը:
Թ. 123ա.— Վախճան Ս. Սահակայ և Ս. Մեսրոպ-
(պ)այ:
Թ. 127ա.— Ս. Յովսէփ:
Թ. 129ա.— Կրօնական մեծ պատերազմը: Վա-
սակայ մարգարանութիւնը. Շահապիվանի ժողովը:
Թ. 133ա.— Յազկերտի հալածանքը. Նախարա-
բաց ուրացութիւնը և դարձը:
Թ. 139ա.— Ուխտատրներու միաբանութիւնը. Ա-
ւարայրի ճակատամարտը:
Թ. 146ա.— Եկեղեցականներու և նախարարներու
կազմաւորումը. Վասակայ դատաւարութիւնը:
Թ. 151ա.— Ղևոնդեանց նահատակութիւնը:
Թ. 156ա.— Քաղկեդոնի ժողովը. Մկիտէի և
Մովսէսի կաթողիկոսութիւնը:
Թ. 158ա.— Գիտի կաթողիկոսութիւնը. Նախա-
րարներու վերադարձը:
Թ. 162ա.— Գիտի պաշտօնընկերութիւնը:
Թ. 168ա.— Կաթողիկոսական Աթոռը Գիտին մէջ.
Յովհաննէս արքայապետութիւնը. Վահան Մամիկոն-
եան սպարապետ. Ակոտի կոչը. Ներսէսապատի
ժամանակի ճակատամարտերը. Զարմիր Հագա-
բաւախ:
Թ. 175ա.— Նուարակի դաշնադրութիւնը. Վա-
հան մարգարան:
Թ. 180ա.— Բարգէն կաթողիկոս և Քաղկեդոնի
ժողովը. Հայոց վիճակը Կաւատի ժամանակ:
Թ. 186ա.— Հինգ կաթողիկոսները:
Թ. 187ա.— Ներսէս Աշտարակեցի:
Թ. 189ա.— Դվնայ Բ. ժողովը. տոմարի նորո-
գութիւնը և եկեղեցական բարեկարգութիւնները.
Դվնայ Գ. ժողովը և խոժիկ նկատարականները:
Թ. 195ա.— Յովհաննէս Գաբրէլեան կաթողիկոսը:
Թ. 198ա.— Մովսէս Բ. Եղիվարդեցի:
Թ. 204ա.— Վրաց բաժանումը. Աքրահամ Ս.
Աղբաթանեցի. վրաց Կիրիոն կաթողիկոսը:
Թ. 211ա.— Կոմիտաս կաթողիկոս:
Թ. 214ա.— Քրիստափոր Գ. Ապահունի:
Թ. 215ա.— Միակամեան վէճը:
Թ. 218ա.— Եզր կաթողիկոս և Կարմուշ ժողովը:

(Շարունակելի)



«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(ЯНВАРЬ, 1981 Г.).

1. Проповедь Его Святейшества Вазгена Первого, произнесенная 6 января 1981 года, по случаю Рождества Господа нашего Иисуса Христа (стр. 3—5).

2. Энциклика Его Святейшества от 30 января 1981 года, о назначении преосвященного епископа Арсена Берберяна Викарием Араратской Патриаршей епархии (стр. 6—7).

3. Приветственные послания и поздравительные телеграммы между Его Святейшеством и главами сестер-церквей, по случаю Рождества Иисуса Христа, январь 1981 год (стр. 8—10).

4. Приветственное послание Его Святейшества Историческим престолом Армянской церкви, епархиальным предводителям и церковным общинам по случаю Рождества Иисуса Христа (стр. 11—12).

5. Обмен поздравительных телеграмм между Его Святейшеством и высокопоставленными государственными деятелями по случаю Нового Года (стр. 13—16).

6. Визит Его Святейшества Председателю Совета Министров Арм. ССР Фадею Саркисяну, 15 января 1981 года (стр. 17).

7. Иеромонах Затик Аветикян, описание Новогоднего Торжества, организованным в Первопрестоле 31 декабря (стр. 18—22).

8. О торжествах, посвященных Рождеству Иисуса Христа в Первопрестоле 6 января 1981 года: Патриаршее служение и проповедь в Кафедральном Соборе (стр. 23).

9. Описание торжеств, Литургий и проповедей в Кафедральном Соборе в январе м-це 1981 г. (стр. 24—25).

10. Проповедь иеромонаха Затика Аветикяна, произнесенная 25 января в Кафедральном Соборе: мотто: «Где Авель, брат твой?», Бытие, 4, 9 (стр. 26—27).

11. Артун Атитян: «Святой Григорий Чудотворец из Неокесарии Понтийской». В исследовании представлены жизнь и деятельность святого, его литературное наследие, а также, переводы и издания его творений (стр. 28—36).


12. Арам Тер-Гевондян, исследование, посвященное Нерукотворному Спасу Иисуса Христа в Средневековом Арабском Историковедении (стр. 37—43).

13. Биографический очерк, посвященный 100-летию юбилею поэта, прозаика, литературного критика, драматурга и общественного деятеля Эдварда Голанчяна (стр. 44—47).

14. Эдвард Голанчян: «Армянская церковь», стихи (стр. 48—50).

15. Диякон Вардан Багдасарян—рецензия на книгу «Давид Анахт», переводы, вступления и комментарии С. Аревшатыана, изд. «Советакан Грох», Ереван, 1980 (стр. 51—54).

16. Нубар Микаелян, список новых рукописей, поступающих в св. Эчмиадзин, №№ 508—514 (стр. 55—60).



„ETCHMIADZIN“
OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN
(JANUARY 1981)

1. The sermon of His Holiness the Catholicos Vasken I on the occasion of Christmas, preached in the 6-th of January 1981 (pages 3—5).

2. The encyclical of His Holiness dated the 30-th January 1981 about the appointment of Bishop Arsen Berberian as vicar of prelate of the Patriarchal diocese of Ararat (pages 6—7).

3. The cables and letters of greetings and congratulations exchanged between His Holiness and the Spiritual heads of the Sister Churches, during January 1981, on the occasion of Christmas (pages 8—10).

4. The congratulatory letter of His Holiness written to the hierarchical Sees of the Armenian Church, diocesan prelates and church communities, on the occasion of the feasts of the New Year and Holy Christmas (pages 11—12).

5. Cables exchanged between His Holiness Vasken I, Catholicos of All Armenians, and statesmen of highrank on the occasion of New Year (pages 13—16).

6. The visit of His Holiness to Mr. Fadey Sarkisian, the president, of the Armenian SSR's council of ministers, on the 15-th of January 1981 (page 17).

7. Reverend Zatik Avetikian—The description of the feast organized on the evening of 31 st December 1980, in the Holy See on the occasion of New Year (pages 18—22).

8. The description of the ceremonies which have taken place on the 6-th of January 1981, in the Holy See, on the occasion of Christmas. Patriarchal Divine liturgy service and sermon in the Holy Cathedral (page 23).

9. Description of the Divine liturgy service and sermons delivered in the Holy Cathedral and feasts taken place in the Holy See during the month of January 1981 (pages 24—25).

10. Reverend Zatik Avetikian—His sermon delivered on 25-th January in the holy Cathedral, with the subject „Abel, where is your brother?“ (pages 26—27).

11. Arthoon Hadidian—The Patriarch Saint Gregory the Thaumaturgus of the city Neocaesarea in Pontus (213—273). In this study it has been given the life and the activity of the great saint, his bibliographical work and the Armentan translations and publications of that work (pages 28—36).


12. Aram Ter-Ghevondian—Study offered about the Saint napkin of Christ not made by hand, in the Arabic historiography of the Middle Ages (pages 37—43).

13. The biography of Edward Kolanjian, the poet, prose writer, literary critic, dramatist and public worker, on the occasion of his 100-th birthday (pages 44—47).

14. Edward Kolanjian—The poetry „The Armenian Church“ (pages 48—50).

15. Deacon Vardan Baghdasarian—Criticism: David the Invincible, The works—the translation, the preface and the annotations by S. S. Arevshad-an, „Soviet writer“ publication, Yerevan, 1980 (pages 51—54).

16. Nubar Mikaelian—The list of the newly received manuscripts of the Mother See of Holy Etchmiadzin under the numbers of 508—514 (pages 55—60).



„ETCHMIADZINE“
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(JANVIER 1981)

1. Homélie de Sa Sainteté Vasken Ier prononcée le 6 janvier 1981 dans la cathédrale de Saint-Etchmiadzine le jour de Noël, fête de la Nativité de notre Seigneur Jésus-Christ (pages 3—5).

2. Dans l'Encyclique du 30 janvier 1981 de Sa Sainteté, Mgr. Arsen Berbérian est nommé vicaire patriarcal du diocèse d'Ararat (pages 6—7).

3. Echange de lettres de félicitation entre Sa Sainteté Vasken Ier et les Chefs des Eglises soeurs à l'occasion des saintes fêtes de Noël et du Nouvel An (pages 8—10).

4. Lettres de félicitation de Sa Sainteté adressées aux Chefs des trois sièges hiérarchiques, aux prélats diocésains et aux communautés religieuses de l'Eglise arménienne à l'occasion des fêtes de Noël et du Nouvel An (pages 11—12).

5. Echange de télégrammes entre Sa Sainteté et les Autorités de la R. S. S. d'Arménie à l'occasion de la fête du Nouvel An (pages 13—16).

6. Visite de Sa Sainteté à Mr. Fadey Sarkisian, président du Conseil des Ministres de la R. S. S. d'Arménie (15 janvier 1981)—(page 17).

7. Père Zatik Avetikian—Description des festivités organisées au Saint-Siège d'Etchmiadzine la nuit du 31 décembre 1980 à l'occasion de la fête du Nouvel An (pages 18—22).

8. Description des solennités qui ont eu lieu au Saint-Siège d'Etchmiadzine le 6 janvier 1981 à l'occasion de la fête de la Nativité de notre Seigneur Jésus-Christ. Célébration de la sainte Messe dans la Cathédrale et l'homélie de Sa Sainteté (page 23).

9. Sous la rubrique „Nouvelles du Saint-Siège“ sont publiées de brèves informations con-

cernant la célébration de saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu à Saint-Etchmiadzine au cours du mois de janvier 1981 (pages 24—25).

10. Le sermon du Père Zatik Avetikian prononcé le 25 janvier 1981 dans la cathédrale de Saint-Etchmiadzine sur le thème: „Abel, où est ton frère?“ (pages 26—27).

11. Artoun Hatitian—„Saint Grégoire le Thaumaturge, évêque de Néocésarée“ (213—273). Dans son étude l'auteur présente la vie, l'activité, l'héritage littéraire du célèbre Père de l'Eglise, ainsi que les traductions et publications en arménien de ses oeuvres (pages 28—36).


12. L'étude de Mr. Aram Ter-Ghévondian est consacrée aux témoignages des historiens arabes du Moyen-âge sur la Sainte nappe du Christ (pages 37—43).

13. Biographie d'Edouard Kolandjian, poète, prosateur, critique littéraire et dramaturge arménien, à l'occasion de son centenaire (page 44—47).

Edouard Kolandjian—„L'Eglise arménienne“ (poème)—(pages 48—50).

15. Diacre Vartan Baghdassarian—Compte rendu du recueil des oeuvres de David l'Invincible, philosophe arménien du Ve siècle. Traduction, introduction et notices par S. S. Arevchatian. Editions „Sovetakan Grogh“, Erévan, 1980 (pages 51—54).

16. Noubar Mikaelian—Index des manuscrits que le Saint-Siège d'Etchmiadzine a récemment reçus et placés sous les numéros 508—514 (pages 55—60).



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայրապետական քարոզ Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդյան տոնի առթիվ Մայր տաճարում	3
Ս.ՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ Կոնդակը Տ. Արսեն Լախակույուս Բերքերյանին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ ճշանակելու մասին	6
Ամանորի և Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր Եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները	8
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ՝ ուղղված Հայաստանյայց Եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմակալ բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին	11
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական բարձրաստիճան անձնավորությունների միջև փոխանակված հեռագրեր Նոր տարվա առթիվ	13
Հայոց Հայրապետի այցելությունը Հայկական ՍՍՀ Միհիստրների խորհրդի նախագահ տիար Ֆադեյ Սարգսյանին	17
ԶԱՏԻԿ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՔՅԱՆ—Ամանորը Մայր Աթոռում	18
Սուրբ Ծննդյան տոնը Մայր Աթոռում	23
ՄԱՅՐ ԱԹՈՐՈՒՄ—Եկեղեցական քեմ. լուրեր	24
ԶԱՏԻԿ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՔՅԱՆ—Առաջին եղբայրասպանությունը	26
Ա. ՀԱՏԻՏՅԱՆ—Սուրբ Գրիգոր Աթանեսիսյանը հայրապետ Պոնտոսի Նեոկեսարիա քաղաքի	28
ԱՐԱՄ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ—Անձնուսուրբ դատաւարի արար պատմագրության էջերում	37
Եղվարդ Գոյանճյանի ծննդյան 100-ամյակը	44
ԵՂՎԱՐԴ ԳՈՒԼԱՆԾՅԱՆ—Հայ եկեղեցին	48
ՎԱՐԴԱՆ ՍՐԿ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ—Դավիթ Անհաղթ, Երկեր, թարգմանությունը, առաջարանը և ծանոթագրությունները՝ Ս. Ս. Արևշատյանի, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1980, 328 էջ	51
Յուդակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձևագրերի	55
«Эчмιάдзин» официальный журнал Эчмιάдинского Католикосата	61
„Etchmiadzin“ official journal of Holy Etchmiadzin	62
„Etchmiadzine“ organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine	63

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмιάдин, Редакция журнала «Эчмιάдин».
 Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 28.01.1981 թ.: Ստորագրված է տպագրության 27.02.1981 թ.:
 Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84¹/₈, պատվեր 71

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1981 թ.